ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 սեպտեմբեր 2025 թվականի թիվ 590-Ա

««ՏՈՉ-ՄԱՍՏԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ԻՆՆԹԵՔ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ՀԴՄ ՇՏՐԻԽ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ՏԵՐՄԻՆԱԼ ՍԵՐՎ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ՄԵՐԻ-ՔՐԻՍՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ՍՄԱՐԹ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ «ՔՅՈՒ ՏԵՐՄԻՆԱԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ԱՆՁԱՆՑ ԽՄԲԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԵՎ ԹԻՎ ՀԳ-05644/24 ՎԱՐՈՒՅԹԸ ՄԱՍՈՎ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովը (նախկինում՝ Մրցակցության պաշտպանության հանձնաժողով, այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**), 2025 թվականի սեպտեմբերի 2-ի նիստում քննարկելով ««Տոչ-մաստեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Իննթեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Քյու տերմինալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «ՀԴՄ շտրիխ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Տերմինալ սերվ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Մերի-Քրիստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն և «Սմարթ սոլուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն» անձանց խմբի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու և Թիվ ՀԳ-05466/24 վարույթը մասնակի կարճելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. ***Վարույթի ընթացքի հակիրճ նկարագրությունը.***

Հանձնաժողովը 2024 թվականի դեկտեմբերի 3-ի «Տոչ-մաստեր», «Իննթեք», «ՀԴՄ շտրիխ», «Տերմինալ սերվ», «Մերի-Քրիստ» և «Սմարթ սոլուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների (այսուհետ նաև՝ **«Տոչ-մաստեր» ընկերություն, «Իննթեք» ընկերություն, «Քյու տերմինալ» ընկերություն, «ՀԴՄ շտրիխ» ընկերություն, «Տերմինալ սերվ» ընկերություն, «Մերի-Քրիստ» ընկերություն և «Սմարթ սոլուշնս» ընկերություն, համատեղ նաև՝ Ընկերություններ**) կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 893-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 893-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-05644/24 վարույթը (այսուհետ նաև՝ **Թիվ ՀԳ-05644/24 վարույթ**):

«Տոչ-մաստեր», «Իննթեք», «Սմարթ սոլուշնս», «ՀԴՄ շտրիխ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները Թիվ 893-Ա որոշումը ստացել են 2024 թվականի դեկտեմբերի 9-ին, իսկ «Տերմինալ սերվ», «Մերի-Քրիստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները՝ համապատասխանաբար 2024 թվականի դեկտեմբերի 30-ին և դեկտեմբերի 11-ին:

«Տոչ-մաստեր» և «իննթեք» ընկերությունները 2024 թվականի դեկտեմբերի 16-ին Թիվ ՀԳ-05644/24 վարույթի վերաբերյալ ներկայացրել են դիրքորոշումներ (այսուհետ համապատասխանաբար՝ **Դիրքորոշում, Դիրքորոշում 1**):

«ՀԴՄ շտրիխ», «Տերմինալ սերվ», «Մերի-Քրիստ» և «Սմարթ սոլուշնս» ընկերությունները Թիվ ՀԳ-05644/24 վարույթի վերաբերյալ դիրքորոշումներ չեն ներկայացրել:

«Սմարթ սոլուշնս» ընկերությունը 2025 թվականի օգոստոսի 12-ին թիվ 000732 գրությամբ դիրքորոշում է ներկայարցել Հանձնաժողովի՝ 2025 թվականի հուլիսի 25-ի ««Տոչ-մաստեր», «Իննթեք», «ՀԴՄ շտրիխ», «Տերմինալ սերվ», «Մերի-Քրիստ», «Սմարթ սոլուշնս» և «Քյու տերմինալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերաբերյալ թիվ ՀԳ-05644/24 վարույթում առկա փաստական հանգամանքների մասին» տեղեկանքի (այսուհետ՝ **Տեղեկանք**) առնչությամբ:

«Տոչ-մաստեր», «ՀԴՄ շտրիխ», «Իննթեք», «Տերմինալ սերվ», «Մերի-Քրիստ» և «Քյու տերմինալ» ընկերությունները Տեղեկանքի վերաբերյալ դիրքորոշումներ չեն ներկայացրել:

Հանձնաժողովը 2025 թվականի մայիսի 27-ին ««Քյու տերմինալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու և թիվ ՀԳ-05644/24 վարույթին միացնելու մասին» թիվ 350-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 350-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-02540/25 վարույթը և միացրել է Թիվ ՀԳ-05644/24 վարույթին:

«Քյու տերմինալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը Թիվ 350-Ա որոշումը ստացել է 2025 թվականի հունիսի 5-ին: «Քյու տերմինալ» ընկերությունը» Թիվ 350-Ա որոշման վերաբերյալ նկատմամբ դիրքորոշում չի ներկայացրել:

Հանձնաժողովը 2025 թվականի հուլիսի 22-ին ««Տոչ-մաստեր», «Իննթեք», «ՀԴՄ շտրիխ», «Տերմինալ սերվ», «Մերի-Քրիստ», «Սմարթ սոլուշնս» և «Քյու տերմինալ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու և թիվ ՀԳ-05644/24 վարույթին միացնելու մասին» թիվ 481-Ա որոշմամբ հարուցել է թիվ ՀԳ-03560/25 վարույթը և միացրել թիվ ՀԳ-05644/24 վարույթին: Ընկերությունները Թիվ 481-Ա որոշման վերաբերյալ դիրքորոշումներ չեն ներկայացրել:

Հանձնաժողովը Թիվ ՀԳ-05644/24 վարույթի շրջանակում 2025 թվականի հունիսի 10-ին և 24-ին կայացած նիստերի վերաբերյալ ծանուցել է Ընկերություններին և վերջիններս, պատշաճ ծանուցված լինելով, երկու նիստերին չեն ներկայացել:

2. Վարույթի հարուցման առիթի և հիմքի հակիրճ նկարագրությունը.

Հանձնաժողովի մրցակցության վերահսկողության վարչությունը (այսուհետ նաև՝ **Պատասխանատու ստորաբաժանում**) 2024 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ ՄՊՀ-014275 զեկուցագրով (այսուհետ նաև՝ **Զեկուցագիր**) առաջարկել է «Տոչ-մաստեր», «Իննթեք», «Սմարթ սոլուշնս», «ՀԴՄ շտրիխ», «Մերի-Քրիստ» և «Տերմինալ սերվ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել վարույթ:

Պատասխանատու ստորաբաժանումը 2025 թվականի մայիսի 26-ի թիվ ՄՊՀ-006066 զեկուցագրով առաջարկել է «Քյու տերմինալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել վարույթ և միացնել թիվ ՀԳ-05644/24 վարույթին:

Պատասխանատու ստորաբաժանումը 2025 թվականի հուլիսի 21-ի թիվ ՄՊՀ-008395/2025 զեկուցագրով առաջարկել է Ընկերությունների կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ հարուցել վարույթ և միացնել թիվ ՀԳ-05644/24 վարույթին:

Թիվ ՀԳ-05644/24 վարույթը հարուցվել է 2024 թվականից մինչև 2025 թվականի մայիսը 31-ը ներառող ժամանկահատվածում հսկիչ-դրամարկղային մեքենաների (այսուհետ նաև՝ **ՀԴՄ**) սպասարկման ծառայությունների մատուցման առնչությամբ Ընկերությունների վարքագծում գերիշխող դիրքի չարաշահման կամ հակամրցակցային համաձայնությունների հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

3. Վարույթով պատասխանող տնտեսավարող սուբյեկտների դիրքորոշումները.

3.1. «Տոչ-մաստեր» ընկերության դիրքորոշումը.

Դիրքորոշմամբ «Տոչ-մաստեր» ընկերությունը հայտնել է, որ 2024 թվականի նոյեմբերի 29-ին կնքվել է «Տոչ-մաստեր» ընկերության բաժնեմասի առուվաճառքի պայմանագիր, որի համաձայն՝ «Տոչ-մաստեր» ընկերության բաժնեմասը սեփականության իրավունքով փոխանցվել է Վահագն Հրաչիկի Խաչատրյանին, իսկ

մնացած բաժնեմասը՝ «Յունիոն Սքուեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

2024 թվականի նոյեմբերի 29-ին կնքվել է նաև «Սմարթ սոլուշնս» ընկերության բաժնեմասի առուվաճառքի պայմանագիրը, որի համաձայն՝ «Սմարթ սոլուշնս» ընկերության բաժնեմասը փոխանցվել է «Պառատուս այ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, ՝ «Տոչ-մաստեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, բաժնեմասը՝ «Բուուսթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

«Տոչ-մաստեր» ընկերությունը հայտնել է նաև, որ ՀԴՄ սպասարկման ծառայությունների մատուցման գործող պայմանագրերում գնային փոփոխություններ չեն կատարվել: «Տոչ-մաստեր» ընկերությունը ձեռք է բերվել արդեն առկա գնային քաղաքականությամբ, և նոր մասնակիցները չեն փոխել «Տոչ-մաստեր» ընկերության առկա գնային քաղաքականությունը, քանի որ այն ամբողջովին համապատասխանում է ձեռքբերման պահին գործող պայմաններին:

Միաժամանակ, «Տոչ-մաստեր» ընկերությունը ներկայումս առկա իրավիճակի վերաբերյալ Դիրքորոշմամբ հայտնել է, որ գնային քաղաքականության փոփոխությունը, այն է՝ մատուցվող ծառայությունների գնի որոշակի ավելացումը, ուղիղ համեմատական կապի մեջ է գտնվում անկանխիկ վճարումների ծավալների ավելացման՝ Հայաստանի Հանրապետության որդեգրած պետական քաղաքականության հետ, ինչի հետևանքով «Տոչ-մաստեր» ընկերության կողմից մատուցվող ծառայությունների ծավալը շարունակում է ավելանալ:

Բացի այդ, «Տոչ-մաստեր» ընկերությունը հաճախորդների, պատվիրատուների սպասելիքների բավարարումը և մրցունակ դիրքի պահպանումը ապահովելու համար խորը ուսումնասիրել է միջազգային փորձը և սեփական միջոցներով մշակել ու առաջիկայում ներդրման նպատակով պատվիրելու է ժամանակակից մեխանիզմներ և արդիական գործիքակազմ:

«Տոչ-մաստեր» ընկերությունը նաև նշել է, որ ՀԴՄ սպասարկման ծառայությունների գների բարձրացումը կապված չէ որևէ կերպ «Տոչ-մաստեր» ընկերության գերիշխող դիրքի չարաշահման և/կամ հակամրցակցային համաձայնության արդյունքում չհիմնավորված բարձր գին սահմանելու հարցի հետ, քանի որ, ինչպես նշվեց, գների որոշակի բարձրացման դրդապատճառ են հանդիսացել գոյություն ունեցող համակարգերի պահպանումը, շուկայական դինամիկ փոփոխությունները և տեխնոլոգիական զարգացման անհրաժեշտությունը:

Միաժամանակ, «Տոչ-մաստեր» ընկերությունը հայտնել է, որ ներկայումս վերջինիս կողմից առաջարկվող սակագներով ծառայություն է մատուցվել մոտավորապես 10 տարի առաջ, ինչպես նաև ՀԴՄ-ները վաճառվել են ներկայումս առաջարկած արժեքից գրեթե 4 անգամ ավելի բարձր գնով:

Բացի այդ, «Տոչ-մաստեր» ընկերությունը նշել է, որ, հանդիսանալով ազատականացված շուկայում շահույթ հետապնդող իրավաբանական անձ, այսուհետ նույնպես պարտավորվում է կատարել համապատասխան ներդրումներ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում, ներառյալ՝ հսկիչ դրամարկղային մեքենաների ծրագրային ապահովման (ECR soft) արդիականացումը և համակարգերի բարելավումը: Այս նպատակով «Տոչ-մաստեր» ընկերությունն ունի նաև հավելյալ ռեսուրսների ներգրավման և ծառայությունների որակի էական բարձրացման ծրագիր, ինչպես նաև ավտոմատացված համակարգերի ինտեգրման նպատակներ, որոնք կբարելավեն ծառայությունների մատուցման արագությունն ու ճշգրտությունը:

«Տոչ-մաստեր» ընկերությունն ամփոփելով հայտնել է, որ իր կողմից հսկիչ դրամարկղային մեքենաների սպասարկման ոլորտում գնային քաղաքականությունը և դրա արդյունքում գների բարձրացումը պայմանավորված է եղել ոլորտում շուկայական և տեխնոլոգիական առաջխաղացման և սպառողներին անհամեմատ ավելի որակյալ ծառայությունների մատուցման անհրաժեշտությամբ:

3.2. «Իննթեք» ընկերության դիրքորոշումը.

Դիրքորոշում 1-ով «Իննթեք» ընկերությունը հայտնել է, որ վերջինիս բաժնետեր է հանդիսանում «Քյու Տերմինալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը: Ավելին, ըստ «Իննթեք» ընկերության՝ վերջինս ազատ շուկայական հարաբերությունների շրջանակում ծառայությունների մատուցման ոլորտում այլ ընկերության հետ ուղիղ առնչություն կամ մասնակցություն չունի:

«Իննթեք» ընկերությունն արձանագրել է, որ մատուցվող ծառայությունների գնի ավելացումը կապված է անկանխիկ վճարումների ծավալների ավելացման հետ, որն իր հերթին հանգեցնում է ընկերության կողմից մատուցվող ծառայությունների աճին: Ինչպես նաև որպես գնային քաղաքականության փոփոխության պատճառ՝ «Իննթեք» ընկերությունը նշել է սպառողների կողմից շարունակաբար աճող ծավալով պահանջների հնարավորինս պատշաճ կերպով բավարարման անհրաժեշտությունը:

«Իննթեք» ընկերությունը ամփոփելով հայտնել է, որ վերջինիս կողմից հսկիչ դրամարկղային մեքենաների սպասարկման ոլորտում գնային քաղաքականությունը և դրա արդյունքում գների բարձրացումը պայմանավորված է եղել ոլորտում շուկայական և տեխնոլոգիական առաջխաղացման և սպառողներին անհամեմատ ավելի որակյալ ծառայությունների մատուցման անհրաժեշտությամբ:

3.3. «Սմարթ սոլուշնս» ընկերության դիրքորոշումը.

Տեղեկանքի վերաբերյալ դիրքորոշմամբ «Սմարթ սոլուշնս» ընկերությունը հայտնել է, որ ՀԴՄ-ՊՈՍ շուկայում գների վերանայումը պայմանավորված է եղել դրա անխուսափելիության մասին վկայող հանգամանքներով: «Սմարրթ սոլուշնս» ընկերությունը նշել է, որ Ընկերությունների միջև հնարավոր որոշակի զուգադիպություններն արդարացված են՝ հաշվի առնելով վերջիններիս գործունեության ոլորտների նմանությունները: Ծախսերի ավելացումը բերել է գների վերանայմանը, որն անհրաժեշտ

էր ձեռնարկատիրական գործունեության կենսունակությունն ապահովելու համար՝ հաշվի առնելով նաև բացի ավելացող ծախսերից նաև այնպիսի երևույթներ ինչպիսին է համատարած գնաճը, մատուցվող ծառայությունների ծավալի և որակի անհերքելի աճը և այլն:

«Սմարթ սոլուշնս» ընկերությունը, հաշվի առնելով բոլոր հանգամանքները, գտնում է, որ իրավախախտման հատկանիշները տվյալ դեպքում բացակայում են: Միաժամանակ, հաշվի առնելով նաև կատարվող ծախսերի կշիռը՝ «Սմարթ սոլուշնս» ընկերության մեկնաբանմամբ՝ գնային քաղաքականության վերանայումը նվազման տեսքով անկանխատեսելի, անգամ անդառնալի հետևանքներ կարող է ունենալ վերջինիս հետագա գործունեության և սպառողներին պատշաճ որակի ծառայությունների մատուցման համար:

4. Հանձնաժողովի կողմից պահանջված և ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը.

1. Հանձնաժողովի նախագահի 2024 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ ՄՊՀ-012757 գրությամբ Պետական եկամուտների կոմիտեից (այսուհետ նաև՝ **ՊԵԿ**) պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1) հսկիչ-դրամարկղային մեքենաների սպասարկում իրականացնող տնտեսավարող սուբյեկտների ցանկը՝ համաձայն ներկայացված ձևանմուշի (MS Excel ձևաչափով),

2) առկայության դեպքում՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների սպասարկման գների բարձրացման հնարավոր պատճառները,

3) Ի՞նչ իրավական ակտերով են կարգավորվում հսկիչ-դրամարկղային մեքենաների սպասարկում իրականացնող տնտեսավարող սուբյեկտների ընտրությունը և հետագա գործունեությունը:

ՊԵԿ-ի կողմից 2024 թվականի նոյեմբերի 5-ին թիվ 01/ՋՍ/70137-2024 գրությամբ տրամադրվել է պահանջված տեղեկատվությունը, ըստ որի՝ ՀԴՄ սպասարկում իրականացնող սուբյեկտները 8-ն են, որոնք են՝ «Իննթեք», «Տոչ-մաստեր», «Սմարթ սոլուշնս», «Մերի-Քրիստ», «ՀԴՄ շտրիխ», «Տերմինալ սերվ», «Դոկտեխնիկ» և «Այպոս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները: Միաժամանակ տեղեկացվել է, որ Կառավարության կողմից հսկիչ դրամարկղային մեքենաներին ներկայացվող պահանջների և դրանց ծրագրային ապահովման համապատասխանության եզրակացության տրամադրման ընթացակարգը հաստատված է ՊԵԿ նախագահի՝ 2022 թվականի օգոստոսի 4-ի N812-Լ հրամանով:

Ինչ վերաբերում է ՀԴՄ սպասարկման գների հնարավոր պատճառներին, ՊԵԿ գրությամբ հայտնել են, որ, հիմք ընդունելով հսկիչ դրամարկղային մեքենաների շուկայի ազատականացված լինելու հանգամանքը, որևէ պատճառ չեն կարող ներկայացել:

2. Հանձնաժողովի նախագահի 2024 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ՄՊՀ-13288, ՄՊՀ-013293, ՄՊՀ-013291, ՄՊՀ-013290, ՄՊՀ-013289 և ՄՊՀ-013292 գրություններով համապատասխանաբար «Իննթեք», «Տոչ-մաստեր», «Սմարթ սոլուշնս», «Մերի-Քրիստ»,

«ՀԴՄ շտրիխ» և «Տերմինալ սերվ» ընկերություններից պահանջվել է 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1) 2023 թվականին և 2024 թվականի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում իրացված և սպասարկված հսկիչ-դրամարկղային մեքենաների ծավալների վերաբերյալ՝ բնեղեն և արժեքային արտահայտությամբ՝ համաձայն ներկայացված ձևանմուշի,

2) դիրքորոշումներ ու հիմնավորումներ 2024 թվականի ընթացքում վերջիններիս կողմից կատարված՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների սպասարկման ծառայությունների գների փոփոխության վերաբերյալ՝ նշելով գնի փոփոխության ամսաթիվը, սահմանված գինը փոփոխությունից առաջ և հետո,

3) Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով Ընկերություններից յուրաքանչյուրի հետ անձանց խումբ հանդիսացող տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ՝ առկայության դեպքում կցելով ներկայացվող տեղեկատվությունը հիմնավորող փաստաթղթերի պատճենները:

«Տոչ-մաստեր», «Իննթեք», «Սմարթ սոլուշնս», «ՀԴՄ շտրիխ», «Մերի-Քրիստ», «Տերմինալ սերվ» ընկերությունները 2024 թվականի նոյեմբերի 18-ին Հանձնաժողով են ներկայացրել ՀԴՄ իրացման և սպասարկման ծավալները: Միաժամանակ վերոնշյալ ընկերությունները նշել են, որ իրենց կողմից գնային քաղաքականության փոփոխություն տեղի չի ունեցել, սակայն նոր հաճախորդներին տվյալ ընկերությունները առաջարկում են միայն բարձր սակագներ՝ ինչը կապում են ՀԴՄ սպասարկման ծավալների ավելացման և բարելավման, անկանխիկ վճարումների ընդլայման հետ:

Ընկերությունները ներկայացրել են նաև բաժնետերերի վերաբերյալ տեղեկատվություն:

3. Հանձնաժողովի նախագահի 2024 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՄՊՀ-014465 գրությամբ ՊԵԿ-ից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել «Տոչ-մաստեր», «Իննթեք», «Սմարթ սոլուշնս», «ՀԴՄ շտրիխ», «Մերի-Քրիստ», «Տերմինալ սերվ» ընկերությունների այն աշխատակիցների ցանկը, որոնք 2024 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում աշխատում են կամ աշխատել են ընկերություններում (ներառյալ ծառայությունների մատուցման պայմանագրերով ներգրավված անձանց)՝ նշելով վերջիններիս քանակը, հաստիքը, ինչպես նաև աշխատավարձի չափը:

ՊԵԿ-ը 2024 թվականի դեկտեմբերի 16-ին Հանձնաժողովին է տրամադրել «Տոչ-մաստեր», «Իննթեք», «Սմարթ սոլուշնս», «ՀԴՄ շտրիխ», «Մերի-Քրիստ», «Տերմինալ սերվ» ընկերություններում 2024 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում գրանցված վարձու/պայմանագրային հիմունքներով աշխատողների վերաբերյալ տեղեկատվությունը: Համաձայն տեղեկատվության՝ «Տոչ-մաստեր», «Սմարթ սոլուշնս», «ՀԴՄ շտրիխ», «Մերի-Քրիստ» ընկերությունների

աշխատակիցների ցանկում մի շարք քաղաքացիների անձնական տվյալների առնչությամբ առկա են համընկնումներ:

Միաժամանակ, 2025 թվականի փետրվարի 3-ին ՊԵԿ-ը Հանձնաժողովին է ներկայացրել Ընկերությունների աշխատակիցների աշխատավարձերի վերաբերյալ տեղեկատվությունը:

4. Հանձնաժողովի նախագահի՝ 2024 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՄՊՀ-014506, ՄՊՀ-014504, ՄՊՀ-014502, ՄՊՀ-01505, ՄՊՀ-014494 և ՄՊՀ-014499 գրություններով համապատասխանաբար «Տերմինալ սերվ», «Մերի-Քրիստ», «ՀԴՄ շտրիխ», «Սմարթ սոլուշնս», «Տոչ-մաստեր» և «Իննթեք» ընկերություններից պահանջվել է 5 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1) 2024 թվականի դեկտեմբերի 6-ի դրությամբ յուրաքանչյուր ընկերությունից ՀԴՄ սպասարկում ձեռք բերած տնտեսավարող սուբյեկտների հետ նոր՝ բարձրացված գներով կնքված և գործող պայմանագրերից (համաձայնագրերից) մեկական օրինակ՝ ըստ սպասարկման գնի,

2) Նախկին ժամանակահատվածում (մինչև ՀԴՄ սպասարկման գնի բարձրացումը) տարբեր գներով մատուցվող ծառայությունների կնքված և գործող պայմանագրերից (համաձայնագրերից) մեկական օրինակ՝ ըստ սպասարկման գնի,

3) 2023 թվականի և 2024 թվականի հունվարից մինչև դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացված ծախսերի և այլ գործունեությունից ստացված հասույթի վերաբերյալ՝ համաձայն ձևանմուշի:

Ի պատասխան՝ «Տոչ-մաստեր», «Սմարթ սոլուշնս», «Իննթեք» ընկերությունները 2024 թվականի դեկտեմբերի 16-ին, «ՀԴՄ շտրիխ» ընկերությունը դեկտեմբերի 17-ին, «Մերի-Քրիստ» և «Տերմինալ սերվ» ընկերությունները դեկտեմբերի 18-ին ներկայացրել են պահանջված տեղեկատվությունը:

Ի լրումն ներկայացված տեղեկատվության՝ «Տոչ-մաստեր» և «Մերի-Քրիստ» ընկերությունները, համապատասխանաբար, 2025 թվականի հունվարի 20-ին և 22-ին Հանձնաժողովին են տրամադրել ՀԴՄ սպասարկում ձեռք բերած տնտեսավարող սուբյեկտների հետ նոր՝ բարձրացված գներով կնքված և գործող պայմանագրերի հավելվածներ:

5. Հանձնաժողովի նախագահի՝ 2025 թվականի հունվարի 29-ի թիվ ՄՊՀ-000920 գրությամբ Հանձնաժողովը դիմել է ՊԵԿ՝ ներկայացնելու «Տոչ-մաստեր», «Իննթեք», «Սմարթ սոլուշնս», «ՀԴՄ շտրիխ», «Մերի-Քրիստ», «Տերմինալ սերվ» ընկերությունների 2023 և 2024 թվականների հաշիվ-ապրանքագրերի վերաբերյալ տեղեկատվություն՝ և՛ որպես մատակարար, և՛ որպես գնորդ:

Ի պատասխան վերոնշյալ գրության՝ ՊԵԿ-ը 2025 թվականի փետրվարի 6-ին Հանձնաժողովին է տրամադրել պահանջված տեղեկատվությունը:

6. Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի հունվարի 30-ի թիվ ՄՊՀ-001042, ՄՊՀ-001044, ՄՊՀ-001047, ՄՊՀ-001043, ՄՊՀ-001045, ՄՊՀ-001046 գրություններով,

համապատասխանաբար, «Տոչ-մաստեր», «Սմարթ սոլուշնս», «Իննթեք», «Տերմինալ սերվ», «Մերի-Քրիստ», «ՀԴՄ շտրիխ» ընկերություններից պահանջվել է 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն.

1) 2024 թվականի ընթացքում ՀԴՄ սպասարկման ծառայությունների համար կնքված պայմանագրերի վերաբերյալ՝ համաձայն ձևանմուշ 1-ի,

2) 2024 թվականին ՀԴՄ սպասարկման ծառայություններից ստացված հասույթների վերաբերյալ՝ ըստ գնային կատեգորիաների՝ համաձայն Ձևանմուշ 2-ի,

3) 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործող յուրաքանչյուր գնային կատեգորիայի մասով 5 առանձին տնտեսավարող սուբյեկտների հետ կնքված պայմանագրերի հինգ տարբեր օրինակներ,

4) տնտեսավարող սուբյեկտների հետ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործող պայմանագրերի շրջանակներում ՀԴՄ սպասարկման ծառայության համար առաջարկվող տարբեր գների սահմանման չափանիշների և հիմնավորումների վերաբերյալ՝ կցելով հիմնավորող փաստաթղթերի պատճենները,

5) 2024 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում իրականացված ծախսերի և այլ գործունեությունից ստացված հասույթի վերաբերյալ՝ համաձայն ձևանմուշ 3-ի (միաժամանակ հստակեցվել է, որ 2024 թվականի մնացած ամիսների վերաբերյալ տվյալներում ճշգրտումներ կատարելու անհրաժեշտության դեպքում կարելի է տեղեկատվությունը ներկայացնել ամբողջ տարվա կտրվածքով),

6) 2024 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրացված և սպասարկված հսկիչ-դրամարկղային մեքենաների ծավալների վերաբերյալ՝ բնեղեն և արժեքային արտահայտությամբ՝ համաձայն ձևանմուշ 4-ի (միաժամանակ հստակեցվել է, որ 2024 թվականի մնացած ամիսների վերաբերյալ տվյալներում ճշգրտումներ կատարելու անհրաժեշտության դեպքում կարելի է տեղեկատվությունը ներկայացնել ամբողջ տարվա կտրվածքով):

Ի պատասխան ՄՊՀ-001047 և ՄՊՀ-001043 գրությունների՝ «Իննթեք» և «Տերմինալ սերվ» ընկերությունները 2025 թվականի փետրվարի 12-ին ներկայացրել են պահանջված տեղեկատվությունը: «Տերմինալ սերվ» ընկերությունը, ի լրումն փետրվարի 12-ին ներկայացված տեղեկատվությանը, փետրվարի 14-ին Հանձնաժողովին է ներկայացրել ՀԴՄ ծառայությունների գների սահմանման չափորոշիչների վերաբերյալ գրություն:

«Տոչ-մաստեր» ընկերությունը, ՄՊՀ-001042 գրությանն ի պատասխան, խնդրել է պահանջված տեղեկատվության տրամադրման ժամկետը երկարաձգել մինչև 2025 թվականի փետրվարի 20-ը ներառյալ:

Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2025 թվականի փետրվարի 7-ի թիվ 001339 գրությամբ ՄՊՀ-001042 գրությամբ պահանջված տեղեկատվության ներկայացման համար տրամադրվել է լրացուցիչ ժամկետ՝ մինչև 2025 թվականի փետրվարի 14-ը ներառյալ:

«Սմարթ սոլուշնս» ընկերությունը, ՄՊՀ-001044 գրությանն ի պատասխան, խնդրել է պահանջված տեղեկատվության տրամադրման ժամկետը երկարաձգել 10 աշխատանքային օրով:

Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2025 թվականի փետրվարի 7-ի թիվ 001341 գրությամբ ՄՊՀ-001044 գրությամբ պահանջված տեղեկատվության ներկայացման համար տրամադրվել է լրացուցիչ ժամկետ՝ մինչև 2025 թվականի փետրվարի 14-ը ներառյալ:

«Մերի-Քրիստ» ընկերությունը, ՄՊՀ-001045 գրությանն ի պատասխան, խնդրել է պահանջված տեղեկատվության տրամադրման ժամկետը երկարաձգել 15 աշխատանքային օրով:

Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի փետրվարի 11-ի թիվ 001427 գրությամբ ՄՊՀ-001045 գրությամբ պահանջված տեղեկատվության ներկայացման համար տրամադրվել է լրացուցիչ ժամկետ՝ մինչև 2025 թվականի փետրվարի 17-ը ներառյալ:

«ՀԴՄ շտրիխ» ընկերությունը, ՄՊՀ-001046 գրությանն ի պատասխան, խնդրել է պահանջված տեղեկատվության տրամադրման ժամկետը երկարաձգել մինչև 2025 թվականի փետրվարի 25-ը ներառյալ:

Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի փետրվարի 11-ի թիվ 001429 գրությամբ ՄՊՀ-001046 գրությամբ պահանջված տեղեկատվության ներկայացման համար տրամադրվել է լրացուցիչ ժամկետ՝ մինչև 2025 թվականի փետրվարի 17-ը ներառյալ:

«Տոչ-մաստեր», «Սմարթ սոլուշնս», «Մերի-Քրիստ», «ՀԴՄ շտրիխ» ընկերությունները պահանջված տեղեկատվությունը ներկայացրել են 2025 թվականի փետրվարի 14-ին՝ չներկայացնելով գների սահմանման չափորոշիչներ:

7. Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի փետրվարի 3-ի թիվ ՄՊՀ-001057 գրությամբ Հանձնաժողովը դիմել է ՊԵԿ խնդրելով ներկայացնել «Տոչ-մաստեր», «Իննթեք», «Սմարթ սոլուշնս», «ՀԴՄ շտրիխ», «Մերի-Քրիստ», «Տերմինալ սերվ» ընկերությունների 2024 թվականի օգոստոսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում հաշվապահների IP հասցեների վերաբերյալ տեղեկատվություն:

ՊԵԿ-ը, ՄՊՀ-001057 գրությանն ի պատասխան՝ 2025 թվականի փետրվարի 4-ին Հանձնաժողովին է տրամադրել պահանջված տեղեկատվությունը, որի համաձայն՝ «Տոչ-մաստեր», «Սմարթ սոլուշնս», «ՀԴՄ շտրիխ», «Մերի-Քրիստ» ընկերությունների հաշվապահների IP հասցեներում և «Իննթեք», «Տերմինալ սերվ» ընկերությունների հաշվապահների IP հասցեներում առկա են համընկնումներ:

8. Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի փետրվարի 5-ի թիվ ՄՊՀ-001280 գրությամբ Հանձնաժողովը դիմել է ՊԵԿ՝ խնդրելով ներկայացնել «Տոչ-մաստեր», «Իննթեք», «Սմարթ սոլուշնս», «ՀԴՄ շտրիխ», «Մերի-Քրիստ», «Տերմինալ սերվ» ընկերությունների 2017-ից մինչև 2024 հաշվետու տարիների «Ֆինանսական վիճակի մասին», «Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին» հաշվետվությունների վերաբերյալ տեղեկատվություն:

ՊԵԿ-ը, ՄՊՀ-001280 գրությանն ի պատասխան 2025 թվականի փետրվարի 13-ին Հանձնաժողովին է տրամադրել պահանջված տեղեկատվությունը:

9. Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի փետրվարի 19-ի թիվ ՄՊՀ-001898 գրությամբ Հանձնաժողովը դիմել է ՊԵԿ խնդրելով Հանձնաժողովին տրամադրել 2022, 2023 և 2024 թվականներին գործող հսկիչ-դրամարկղային մեքենաների քանակի վերաբերյալ տեղեկատվություն:

ՊԵԿ-ը, ՄՊՀ-001898 գրությանն ի պատասխան 2025 թվականի փետրվարի 27-ին Հանձնաժողովին է տրամադրել պահանջված տեղեկատվությունը:

10. Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի մարտի 12-ի թիվ ՄՊՀ-002866 գրությամբ Հանձնաժողովը դիմել է ՊԵԿ՝ խնդրելով Հանձնաժողովին տրամադրել 2025 թվականի հունվարի 1-ից մինչև մարտի 10-ն ընկած ժամանակահատվածում «Տոչ-մաստեր», «Իննթեք», «Սմարթ սոլուշնս», «ՀԴՄ շտրիխ», «Մերի-Քրիստ», «Տերմինալ սերվ» ընկերությունների հաշիվ-ապրանքագրերը՝ թե՛ որպես մատակարար, թե՛ որպես գնորդ, ինչպես նաև այն աշխատակիցների ցանկը, որոնք 2023 թվականին աշխատել են տվյալ ընկերություններում (ներառյալ ծառայությունների մատուցման պայմանագրերով ներգրավված անձանց)՝ նշելով վերջիններիս քանակը, հաստիքը, ինչպես նաև աշխատավարձի չափը:

ՊԵԿ-ը, ՄՊՀ-002866 գրությանն ի պատասխան 2025 թվականի մարտի 19-ին Հանձնաժողովին է տրամադրել պահանջված տեղեկատվությունը:

11. Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի մարտի 1-ի թիվ ՄՊՀ-002949, ՄՊՀ-002966, ՄՊՀ-002967, ՄՊՀ-002965, ՄՊՀ-002968 և ՄՊՀ-002963 գրություններով, համապատասխանաբար, «Իննթեք», «ՀԴՄ շտրիխ», «Մերի-Քրիստ», «Սմարթ սոլուշնս», «Տերմինալ սերվ» և «Տոչ-մաստեր» ընկերություններից պահանջվել է 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել ընկերությունների կողմից 2023 և 2024 թվականներին սպասարկված հսկիչ-դրամարկղային մեքենաների ծավալների վերաբերյալ ըստ ամիսների՝ բնեղեն արտահայտությամբ՝ համաձայն Ձևանմուշի (MS Excel ձևաչափով):

«Տոչ-մաստեր» ընկերությունը, ՄՊՀ-002963 գրությանն ի պատասխան խնդրել է պահանջված տեղեկատվության տրամադրման ժամկետը երկարաձգել լրացուցիչ 10 (տասը) աշխատանքային օրով:

Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի մարտի 18-ի թիվ 003187 գրությամբ ՄՊՀ-002963 գրությամբ պահանջված տեղեկատվության ներկայացման համար տրամադրվել է լրացուցիչ ժամկետ՝ մինչև 2025 թվականի մարտի 28-ը ներառյալ:

«Սմարթ սոլուշնս» ընկերությունը, ՄՊՀ-002965 գրությանն ի պատասխան խնդրել է պահանջված տեղեկատվության տրամադրման ժամկետը երկարաձգել 14 աշխատանքային օրով:

Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի մարտի 18-ի թիվ 003186 գրությամբ ՄՊՀ-002965 գրությամբ պահանջված տեղեկատվության ներկայացման համար տրամադրվել է լրացուցիչ ժամկետ՝ մինչև 2025 թվականի մարտի 28-ը ներառյալ:

Ի պատասխան գրություններին՝ «Իննթեք» ընկերությունը 2025 թվականի մարտի 18-ին, «Տերմինալ սերվ» ընկերությունը 2025 թվականի մարտի 19-ին, «ՀԴՄ շտրիխ» և «Մերի-Քրիստ» ընկերությունները 2025 թվականի մարտի 20-ին, «Տոչ-մաստեր» ընկերությունը 2025 թվականի մարտի 27-ին և «Սմարթ սոլուշնս» ընկերությունը 2025 թվականի մարտի 28-ին Հանձնաժողովին են տրամադրել պահանջված տեղեկատվությունը:

Համաձայն ներկայացված տեղեկատվության տարեկան միջինում «Տոչ-մաստեր» ընկերությունը 2023 և 2024 թվականներին սպասարկել է և ՀԴՄ, «ՀԴՄ շտրիխ» ընկերությունը համապատասխանաբար՝ և ՀԴՄ, «Սմարթ սոլուշնս» ընկերությունը՝ և ՀԴՄ, «Մերի-Քրիստ» ընկերությունը՝ և ՀԴՄ, «Իննթեք» ընկերությունը՝ և ՀԴՄ, «Տերմինալ սերվ» ընկերությունը՝ և ՀԴՄ:

12. Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի մարտի 18-ի թիվ ՄՊՀ-003171 գրությամբ Հանձնաժողովը դիմել է ՊԵԿ՝ խնդրելով Հանձնաժողովին տրամադրել 2020 և 2021 թվականներին գործող հսկիչ-դրամարկղային մեքենաների քանակի վերաբերյալ տեղեկատվություն:

ՊԵԿ-ը, ՄՊՀ-003171 գրությանն ի պատասխան, 2025 թվականի մարտի 28-ին Հանձնաժողովին է տրամադրել պահանջված տեղեկատվությունը:

13. Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի ապրիլի 10-ի թիվ ՄՊՀ-004204 գրությամբ Հանձնաժողովը դիմել է ՊԵԿ՝ խնդրելով Հանձնաժողովին տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

1) ցուցակում նշված ֆիզիկական անձանց վերաբերյալ՝ նշելով 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում վերջիններիս աշխատավայրերի և զբաղեցրած պաշտոնների վերաբերյալ,

2) 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում ՀԴՄ ներմուծման մաքսային հայտարարագրերը լրացնող մաքսային ներկայացուցիչների (բրոքեր), ինչպես նաև նշված ապրանքի տեղափոխումն իրականացնող տրանսպորտային ընկերությունների վերաբերյալ,

3) «Քյու Տերմինալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 00218811) կողմից ՀԴՄ-ների սպասարկման և նորոգման ծառայությունների մատուցման սկզբի ամսաթիվը,

4) 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 1-ը, ինչպես նաև 2025 թվականի հունվարի 1-ից մինչև ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում «Տոչ-մաստեր», «Իննթեք», «Սմարթ սոլուշնս», «ՀԴՄ շտրիխ», «Մերի-Քրիստ», «Տերմինալ սերվ» ընկերությունների հաշվապահների IP հասցեների վերաբերյալ:

ՊԵԿ-ը ՄՊՀ-004204 գրությանն ի պատասխան 2025 թվականի ապրիլի 18-ին Հանձնաժողովին է տրամադրել պահանջված տեղեկատվությունը:

Ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Վահագն Խաչատրյանը հանդիսանում է «Նաիրի ինշուրանս» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **«Նաիրի ինշուրանս» ընկերություն**) բաժնետեր և խորհրդի նախագահ, իսկ Տիգրան Մարտիրոսյանը «Նաիրի ինշուրանս» ընկերության խորհրդի անդամ, նաև եղել է «Տոչ-մաստեր» և «Իննթեք» ընկերությունների տնօրեն: Հասմիկ Բաղալյանը միաժամանակ հանդիսանում է «ՀԴՄ շտրիխ» ընկերության տնօրեն և «Մերի-Քրիստ» ընկերության զանգերի սպասարկման կենտրոնի մասնագետ: «Իննթեք» ընկերության ներկայիս տնօրեն Դիաննա Վարդանյանը եղել է «Քյու տերմինալ» ընկերության հաշվետար:

14. Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի ապրիլի 21-ի թիվ ՄՊՀ-004663 գրությամբ Հանձնաժողովը դիմել է ՊԵԿ խնդրելով Հանձնաժողովին տրամադրել «Տոչ-մաստեր», «Իննթեք», «Սմարթ սոլուշնս», «ՀԴՄ շտրիխ», «Մերի-Քրիստ», «Տերմինալ սերվ» ընկերությունների 2024 հաշվետու տարվա և «Քյու տերմինալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **«Քյու տերմինալ» ընկերություն**) 2022, 2023 և 2024 հաշվետու տարիների «Ֆինանսական վիճակի մասին», «Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին» հաշվետվությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

ՊԵԿ-ը ՄՊՀ-004663 գրությանն ի պատասխան 2025 թվականի ապրիլի 30-ին Հանձնաժողովին է տրամադրել պահանջված տեղեկատվությունը:

15. Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի մայիսի 2-ի թիվ ՄՊՀ-005198 գրությամբ Հանձնաժողովը դիմել է ՊԵԿ խնդրելով Հանձնաժողովին տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

1) 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում ՀԴՄ, ՊՈՍ (POS) տերմինալների, ՀԴՄ և ՊՈՍ (POS) տերմինալների ներմուծումների վերաբերյալ՝ տարանջատված ըստ տեսակների, ինչպես նաև ԱՏԳ ԱԱ-ի 8470 ապրանքային խմբին դասվող ապրանքների ներմուծումների վերաբերյալ՝ համաձայն ձևանմուշ 1-ի,

2) 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում ՀԴՄ, ՊՈՍ (POS) տերմինալների, ՀԴՄ և ՊՈՍ (POS) տերմինալների ներմուծումների վերաբերյալ՝ տարանջատված ըստ տեսակների, ինչպես նաև ԱՏԳ ԱԱ-ի 8470 ապրանքային խմբին դասվող ապրանքների ներմուծումների վերաբերյալ՝ համաձայն Կառավարության 2018 թվականի հունիս 28-ի թիվ 737-Ն որոշման՝ ըստ ձևանմուշ 2-ի,

3) 2024 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2025 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում Ընկերությունների հաշվապահների IP հասցեների ֆիզիկական գտնվելու վայրերի, ինչպես նաև վերոնշյալ ընկերությունների՝ 2023 և 2024 թվականների

ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվետվությունների վերաբերյալ:

ՊԵԿ-ը ՄՊՀ-005198 գրությանն ի պատասխան 2025 թվականի մայիսի 20-ին Հանձնաժողովին է տրամադրել պահանջված տեղեկատվությունը:

16. Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի մայիսի 2-ի թիվ ՄՊՀ-005199 գրությամբ Հանձնաժողովը դիմել է «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ նաև՝ **«Յուքոմ» ընկերություն**) պահանջելով 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովին ներկայացնել «060-50-60-27», «060-53-53-78», «060-52-52-76», «060-40-00-05», «060-50-50-70» և «060-50-50-00» հեռախոսահամարների IP և ֆիզիկական հասցեների վերաբերյալ տեղեկատվություն:

«Յուքոմ» ընկերությունը ՄՊՀ-005199 գրությանն ի պատասխան, 2025 թվականի մայիսի 13-ին Հանձնաժողովին է հայտնել, որ

17. Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի մայիսի 20-ի թիվ ՄՊՀ-005880, ՄՊՀ-005881, ՄՊՀ-005879, ՄՊՀ-005883, ՄՊՀ-005878 և Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի մայիսի 22-ի թիվ ՄՊՀ-005882 գրություններով, համապատասխանաբար, «ՀԴՄ շտրիխ», «Մերի-Քրիստ», «Սմարթ սոլուշնս», «Տերմինալ սերվ», «Տոչ-մաստեր» և «Իննթեք» ընկերություններից պահանջվել է 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1) Ընկերության կողմից 2024 թվականի հուլիսի 1-ից մինչև 2025 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում ՀԴՄ միավոր սպասարկման ծառայությունների համար կնքված, լուծված և վերակնքված պայմանագրերի, ՀԴՄ միավոր սպասարկման ծառայությունների համար պայմանագրով նախատեսված արժեքների, ինչպես նաև վերջիններիս փոփոխությունների վերաբերյալ՝ կցելով տեղեկատվությունը հիմնավորող փաստաթղթերի (պայմանագրերի, համաձայնագրերի և այլն) պատճենները՝ համաձայն ձևանմուշ 1-ի (MS Excel ձևաչափով),

2) Ընկերության կողմից 2024 թվականի հուլիսի 1-ից մինչև 2025 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում ՀԴՄ միավոր սպասարկման ծառայությունների համար կնքված նոր պայմանագրերի, ինչպես նաև վերջիններիս փոփոխությունների վերաբերյալ՝ կցելով տեղեկատվությունը հիմնավորող փաստաթղթերի (պայմանագրերի, համաձայնագրերի և այլն) պատճենները՝ համաձայն ձևանմուշ 2-ի (MS Excel ձևաչափով):

«Մերի-Քրիստ», «Տոչ-մաստեր», «ՀԴՄ շտրիխ» և «Սմարթ սոլուշնս» ընկերությունները 2025 թվականի հունիսի 4-ին Հանձնաժողովին են ներկայացրել պահանջված

տեղեկատվությունը, որի համաձայն վերոնշյալ ընկերությունները նոր պայմանագրերը կնքում են դրամ ամսական վճարով, իսկ նախկինում կնքված ցածր սակագնով՝ դրամ և դրամ, վերակնքվում են ամսական վճարը սահմանելով դրամ: «Իննթեք» և «Տերմինալ սերվ» ընկերությունները տեղեկատվությունը ներկայացրել են հունիսի 5-ին, այս ընկերությունների դեպքում ՀԴՄ սպասարկման ծառայության ամսական վճարման երկու սակագին է առկա՝ դրամ և դրամ:

«Մերի-Քրիստ», «Տոչ-մաստեր», «Իննթեք», «Տերմինալ սերվ», «ՀԴՄ շտրիխ» և «Սմարթ սոլուշնս» ընկերությունները տեղեկատվությունը ներկայացրել են ոչ ամբողջական՝ նշելով որ ներկայացված տեղեկատվությունը բավարար է:

18. Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի հունիս 2-ի թիվ ՄՊՀ-006253 գրությամբ «Քյու տերմինալ» ընկերությունից պահանջվել է 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1) Ընկերության կողմից 2023, 2024 թվականներին ու 2025 թվականի հունվարի 1-ից մինչև մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում իրացված և 2025 թվականի հունվարի 1-ից մինչև մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում սպասարկված հսկիչ-դրամարկղային մեքենաների ծավալների վերաբերյալ՝ բնեղեն և արժեքային արտահայտությամբ՝ համաձայն Ձևանմուշ 1-ի (MS Excel ձևաչափով),

2) 2023, 2024 թվականներին և 2025 թվականի հունվարի 1-ից մինչև մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում Ընկերության կողմից իրականացված ծախսերի և այլ գործունեությունից հասույթի վերաբերյալ՝ համաձայն Ձևանմուշ 2-ի (MS Excel ձևաչափով),

3) 2025 թվականի մայիսի 31-ի դրությամբ գործող յուրաքանչյուր գնային կատեգորիայի մասով Ընկերության կողմից 5 առանձին տնտեսավարող սուբյեկտների հետ կնքված պայմանագրերի հինգ տարբեր օրինակներ,

4) Ընկերության կողմից տնտեսավարող սուբյեկտների հետ 2025 թվականի մայիսի 31-ի դրությամբ գործող պայմանագրերի շրջանակներում ՀԴՄ սպասարկման ծառայության համար առաջարկվող տարբեր գների սահմանման չափանիշները և հիմնավորումները՝ կցելով հիմնավորող փաստաթղթեր,

5) Ընկերության կողմից 2025 թվականի հունվարի 1-ից մինչև մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում ՀԴՄ միավոր սպասարկման ծառայությունների համար կնքված, լուծված և վերակնքված պայմանագրերի, ՀԴՄ միավոր սպասարկման ծառայությունների համար պայմանագրով նախատեսված արժեքների, ինչպես նաև վերջիններիս փոփոխությունների վերաբերյալ՝ կցելով տեղեկատվությունը հիմնավորող փաստաթղթերի (պայմանագրերի, համաձայնագրերի և այլն) պատճենները՝ համաձայն Ձևանմուշ 3-ի (MS Excel ձևաչափով),

6) 2025 թվականի հունվարի 1-ից մինչև մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում ՀԴՄ սպասարկման ծառայություններից Ընկերության ստացված հասույթների վերաբերյալ՝ ըստ գնային կատեգորիաների՝ համաձայն Ձևանմուշ 4-ի (MS Excel ձևաչափով):

7) Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով Ընկերության հետ անձանց խումբ հանդիսացող տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ՝ առկայության դեպքում կցելով ներկայացվող տեղեկատվությունը հիմնավորող փաստաթղթերի պատճենները:

«Քյու տերմինալ» ընկերությունը պահանջված տեղեկատվությունը Հանձնաժողովին է ներկայացրել 2025 թվականի հունիսի 18-ին նշելով, որ հաշվի առնելով տեղեկությունների ծավալուն լինելը, դրանց տրամադրման համար սահմանված սեղմ ժամանակը, «Քյու տերմինալ» ընկերության կողմից Հանձնաժողովին տրամադրվել են վարույթի շրջանակներում պատշաճ քննություն իրականացնելու համար Հանձնաժողովի կողմից ստացված հարցումներով պահանջվող տեղեկությունների ողջամիտ և բավարար քանակ:

19. Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի մայիսի 2-ի թիվ ՄՊՀ-005198 գրությամբ Հանձնաժողովը դիմել է ՊԵԿ խնդրելով Հանձնաժողովին տրամադրել «Քյու տերմինալ» ընկերության վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

1. 2024 թվականների և 2025 թվականի հունվարի 1-ից մինչև մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում Ընկերության հաշիվ-ապրանքագրերը՝ թե՛ որպես մատակարար, թե՛ որպես գնորդ,

2. այն աշխատակիցների ցանկը, որոնք 2024 թվականին և 2025 թվականի հունվարի 1-ից մինչև մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում աշխատում են կամ աշխատել են Ընկերությունում (ներառյալ ծառայությունների մատուցման պայմանագրերով ներգրավված անձանց)՝ նշելով վերջիններիս քանակը, հաստիքը, ինչպես նաև աշխատավարձի չափը:

ՊԵԿ-ը 2025 թվականի հունիսի 13-ին տրամադրել է պահանջված տեղեկատվությունը:

20. Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի հունիսի 24-ի թիվ ՄՊՀ-007372, ՄՊՀ-007371, ՄՊՀ-007370, ՄՊՀ-007373, ՄՊՀ-007368 և ՄՊՀ-007369 գրություններով, համապատասխանաբար, «ՀԴՄ շտրիխ», «Մերի-Քրիստ», «Սմարթ սոլուշնս», «Տերմինալ սերվ», «Տոչ-մաստեր» և «Իննթեք» ընկերություններից պահանջվել է 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1) «Սմարթ սոլուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (**այսուհետ նաև՝ Ընկերություն**) կողմից 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացված ծախսերի և այլ գործունեությունից հասույթի (առանց ԱԱՀ) վերաբերյալ՝ համաձայն Ձևանմուշ 1-ի (MS Excel ձևաչափով,),

2) Ընկերության կողմից 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում իրացված և սպասարկված հսկիչ-դրամարկղային մեքենաների ծավալների վերաբերյալ՝ բնեղեն և արժեքային (առանց ԱԱՀ) արտահայտությամբ՝ համաձայն Ձևանմուշ 2-ի (MS Excel ձևաչափով):

«ՀԴՄ շտրիխ» ընկերությունից պահանջվել է նաև Հանձնաժողովին ներկայացնել «ՀԴՄ շտրիխ» ընկերության կողմից 2025 թվականի փետրվարի 14-ի գրությամբ «ՀԴՄ շտրիխ» ընկերության կողմից իրականացված ծախսերի և այլ գործունեությունից հասույթի

վերաբերյալ ներկայացված տեղեկատվության առնչությամբ 2024 թվականին, ի համեմատ 2023 թվականի, «ստացված ծառայություններ» ծախսի ավելացման հիմնավորումները՝ կցելով համապատասխան հավաստող փաստաթղթերի պատճենները:

«Մերի-Քրիստ», «ՀԴՄ շտրիխ», «Իննթեք» ընկերությունները 2025 թվականի հուլիսի 2-ին, «Տոչ-մաստեր» և «Սմարթ սոլուշնս» ընկերությունները 2025 թվականի հուլիսի 3-ին, իսկ «Տերմինալ սերվ» ընկերությունը 2025 թվականի հուլիսի 7-ին Հանձնաժողովին են ներկայացրել պահանջված տեղեկատվությունը:

«Իննթեք» ընկերությունը ՄՊՀ-007369 գրությանն ի պատասխան նշել է, որ «Քյու տերմինալ» ընկերության կողմից վերջինիս ձեռք բերման արդյունքում կրճատվել են այնպիսի ծախսեր, ինչպիսիք են «Իննթեք» ընկերության հետ աշխատանքային իրավահարաբերությունների մեջ գտնվող անձանց վճարման համար կատարվող ծախսերը, տարածքի վարձակալության, հաշվապահական ծախսերը, իրավաբանական ծառայությունների մատուցման, վարչական և այլ ծախսեր: Միաժամանակ, վերոնշյալ գործողությունների արդյունքում ձևավորված հասույթից առաջացած եկամուտը ուղղվում է համակարգի արդիականացման, աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման և «Քյու տերմինալ» ընկերության կողմից ստանձնած վարկային պարտավորությունների ընթացիկ սպասարկմանը:

21. Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի հուլիսի 21-ի թիվ ՄՊՀ-008410 գրությամբ ՊԵԿ-ից պահանջվել է 2 (երկու) օրվա ընթացքում Հանձնաժողովին ներկայացնել 2024 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում Ընկերություններում աշխատած աշխատակիցների ցանկը (ներառյալ ծառայությունների մատուցման պայմանագրերով ներգրավված անձանց)՝ նշելով աշխատակիցների թիվը, հաստիքը, այդ հաստիքին նշանակվելու և դրանից ազատվելու ամսաթվերը, ինչպես նաև աշխատավարձերի չափը:

ՊԵԿ-ը 2025 թվականի հուլիսի 28-ին Հանձնաժողովին է տրամադրել պահանջված տեղեկատվությունը:

22. Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի հուլիսի 24-ի թիվ ՄՊՀ-008546 գրությամբ ՊԵԿ-ից պահանջվել է 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովին ներկայացնել տեղեկատվություն 2024 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկում իրականացնող տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ՝ համաձայն ներկայացված ձևանմուշի (MS Excel ձևաչափով):

ՊԵԿ-ը 2025 թվականի հուլիսի 29-ին Հանձնաժողովին է տրամադրել պահանջված տեղեկատվությունը:

Ի լրումն 2025 թվականի հուլիսի 29-ի գրությանը ՊԵԿ-ը 2025 թվականի օգոստոսի 26-ին Հանձնաժողովին են ներկայացրել ՀԴՄ տեխնիկական սպասարկում իրականացնող տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվությունը, համաձայն որի՝

«Տերմինալ սերվ» և «Քյու տերմինալ» ընկերությունների հասցեն, հեռախոսահամարը, կայքը և էլ. փոստի հասցեն ամբողջությամբ նույնն են:

23. «Տոչ-մաստեր» ընկերությունը 2025 թվականի օգոստոսի 28-ին Հանձնաժողովին է տրամադրել տեղեկատվություն ըստ որի, վերջինիս կողմից շարունակական ներդրումներ են իրականացվում ծրագրային ապահովման ոլորտում: Մասնավորապես.

5. Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.

1. «Տոչ-մաստեր», «Սմարթ սոլուշնս», «Իննթեք», «Մերի-Քրիստ», «ՀԴՄ շտրիխ», «Քյու տերմինալ» ընկերությունները գործունեություն են ծավալում ՀԴՄ և ՀԴՄ-ՊՈՍ (POS) տերմինալների իրացման և սպասարկման ոլորտում, «Տերմինալ սերվ» ընկերությունը՝ միայն սպասարկման ոլորտում:

2. ՀԴՄ-ՊՈՍ (POS) տերմինալները բազմաֆունկցիոնալ են, քանի որ կարող են ունենալ ինչպես ՊՈՍ (POS) տերմինալի ֆունկցիա, այնպես էլ ՀԴՄ ֆունկցիա:

3. ՀՀ ներմուծվում են միայն ՀԴՄ-ՊՈՍ տերմինալներ:

4. Վազգեն Հրաչիկի Խաչատրյանը 2022 թվականի օգոստոսի 8-ից հանդիսանում է «Քյու տերմինալ» ընկերության միակ սեփականատերը:

5. «Քյու տերմինալ» ընկերությունը 2024 թվականի հոկտեմբերի 30-ին ձեռք է բերել «Իննթեք» ընկերության տոկոս բաժնեմասը:

6. Տիգրան Մարտիրոսյանը՝ հանդիսանալով «Իննթեք» ընկերության նախկին միակ սեփականատեր և տնօրեն, ինչպես նաև «Քյու տերմինալ» ընկերության նախկին տնօրեն՝

2024 թվականի նոյեմբերի 5-ին «Յունիոն Սքուեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջոցով Արթուր Կարապետյանի հետ համատեղ ձեռք է բերել «Տոչ մաստեր» ընկերության բաժնեմասերի տոկոսը, այնուհետև նոյեմբերի 6-ից նշանակվել է տնօրենի պաշտոնում:

7. Վահագն Հրաչիկի Խաչատրյանը 2024 թվականի նոյեմբերի 5-ին ձեռք է բերել «Տոչ մաստեր» ընկերության բաժնեմասերի մնացած տոկոսը:

8. «Տոչ մաստեր» ընկերությունը 2024 թվականի դեկտեմբերի 4-ին ձեռք է բերել «Սմարթ սոլուշնս» ընկերության բաժնեմասերի տոկոսը: Ընդ որում, «Սմարթ սոլուշնս» և «Տոչ-մաստեր» ընկերությունների փոխկապակցվածությունն ընդգծվում է նաև վերջիներիս բոլոր՝ թվով 8-ական IP հասցեների համընկնելու հանգամանքով:

9. Մուշեղ Շահինյանը, 2020 թվականի մարտի 6-ից մինչև 2022 թվականի օգոստոսի 8-ը հանդիսանալով «Քյու տերմինալ» ընկերության միակ բաժնետեր, «Բուուսթ» սահմանափակ պատասխանատվության ընկերության միջոցով (հանդիսանում է վերջինիս միակ բաժնետերը) 2024 թվականի դեկտեմբերի 4-ին ձեռք է բերել «Սմարթ սոլուշնս» ընկերության բաժնեմասերի տոկոսը:

10. Մկրտիչ Սարգսի Էվանեսյանը 2023 թվականի օգոստոսի 3-ից մինչև 2024 թվականի նոյեմբերի 5-ը հանդիսացել է «Տոչ մաստեր» ընկերության համասեփականատեր՝ տիրապետելով ընկերության բաժնեմասերի տոկոսին:

11. Մերուժան Սարգսի Էվանեսյանը 2018 թվականի հունիսի 21-ից հանդիսանում է «Մերի-Քրիստ» ընկերության համասեփականատերը՝ տիրապետելով ընկերության բաժնեմասերի տոկոսին:

12. Սարկիս Էվանեսյանը 2023 թվականի փետրվարի 1-ից հանդիսանում է «ՀԴՄ շտրիխ» ընկերության համասեփականատեր՝ տիրապետելով ընկերության բաժնեմասերի տոկոսին:

13. «Իննթեք» և «Քյու տերմինալ» ընկերությունները 2024 թվականին և 2025 թվականի հունվարից մայիսը ներառող ժամանակահատվածում հաշվապահական ծառայություններ են ձեռք բերել «Դի Ջի Քոնսալթինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից:

14. «Տոչ մաստեր», «Սմարթ սոլուշնս», «ՀԴՄ շտրիխ» և «Մերի-Քրիստ» ընկերությունները 2024 թվականին և 2025 թվականի հունվարից մայիսը ներառող ժամանակահատվածում հաշվապահական ծառայություններ են ձեռք բերել «Սմարթ Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից:

15. «Տոչ-մաստեր», «ՀԴՄ Շտրիխ», «Մերի-Քրիստ» և «Սմարթ սոլուշնս» ընկերությունների հաշվապահների IP հասցեներում առկա են համընկնումներ:

16. «Իննթեք», «Տերմինալ սերվ» և «Քյու տերմինալ» ընկերությունների հաշվապահական հաշվետվությունները ներկայացնողների IP հասցեներում առկա են համընկնումներ:

17. «Քյու տերմինալ» և «Տերմինալ սերվ» ընկերությունների հասցեն, էլ. փոստի հասցեն, հեռախոսահամարն ու կայքը ամբողջությամբ նույնն են:

18. «Իննթեք» ընկերության կողմից ներկայացվող տեղեկատվությունը Հանձնաժողովի համակարգ է մուտք եղել «Քյու տերմինալ» ընկերության էջից:

19. «Քյու տերմինալ», «Իննթեք» և «Տերմինալ սերվ» ընկերությունները գտնվում են նույն հասցեում՝ Երևան, Լենինգրադյան փողոց, 34 շենք:

20. Համաձայն «Մերի-Քրիստ», «Տոչ-մաստեր», «ՀԴՄ շտրիխ» և «Սմարթ սոլուշնս» ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվության՝ 2024 թվականի հուլիսի 1-ից հետո վերջիններիս կողմից նոր կնքված պայմանագրերով ՀԴՄ սպասարկման ծառայության ամսական վճարը սահմանվել է դրամ, իսկ նախկինում՝ մինչև 2024 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում, վերջիններիս կողմից կնքված ցածր սակագներով գործող պայմանագրերը՝ դրամ և դրամ, 2024 թվականի հուլիսի 1-ից հետո վերակնքվել են՝ ամսական վճարը սահմանելով դրամ:

21. Համաձայն «Տերմինալ սերվ» ընկերության կողմից ներկայացված տեղեկատվության՝ 2024 թվականի հուլիսի 1-ից հետո վերջինիս կողմից նոր կնքված պայմանագրերով սահմանվել է դրամ և դրամ ՀԴՄ ամսական սպասարկման ծառայության արժեք:

22. Համաձայն «Իննթեք» ընկերության կողմից ներկայացված տեղեկատվության՝ 2024 թվականի հուլիսի 1-ից հետո վերջինիս կողմից վերակնքված պայամանագրերով ՀԴՄ ամսական սպասարկման արժեքը սահմանվել է դրամ:

23. Համաձայն Պետական եկամուտների կոմիտեի էլեկտրոնային հարթակներից հատուկ տեխնիկածրագրային ուղիների միջոցով ձեռք բերված տեղեկատվության՝ 2025 թվականի հունվարից մայիսն ընկած ժամանակահատվածում Ընկերությունների կողմից ՀԴՄ սպասարկումն իրականացվել է նաև դրամ և դրամ ամսական վճարներով:

24. Ընկերությունների կողմից ՀԴՄ սպասարկման միանման ծառայությունների մատուցման նպատակով կնքված պայմանագրերում տարբեր գների սահմանման առնչությամբ չափորոշիչներ չեն ներկայացվել:

25. «Տոչ-մաստեր», «Սմարթ սոլուշնս», «Իննթեք», «Մերի-Քրիստ», «ՀԴՄ շտրիխ», «Քյու տերմինալ» և «Տերմինալ սերվ» ընկերությունների կողմից ՀԴՄ սպասարկման ծառայության մատուցման շրջանակում՝ աշխատավարձի վճարմանն ուղղված միջին ամսական ուղղակի ծախսերը (աշխատավարձի ֆոնդը) վերջիններիս կողմից ՀԴՄ սպասարկման նպատակով իրականացված ծախսերի ամբողջության մեջ 2024 թվականին կազմել են տոկոս, իսկ 2025 թվականի հունվարից մայիսը ներառող ժամանակահատվածում՝ տոկոս:

26. «Տոչ-մաստեր», «Սմարթ սոլուշնս», «Իննթեք», «Մերի-Քրիստ», «ՀԴՄ շտրիխ», «Քյու տերմինալ» և «Տերմինալ սերվ» ընկերությունների կողմից ՀԴՄ սպասարկման ծառայության մատուցման շրջանակում՝ աշխատավարձի վճարմանն ուղղված միջին ամսական ուղղակի ծախսերը (աշխատավարձի ֆոնդ) 2025 թվականի հունվարից մայիսը

ներառող ժամանակահատվածում 2024 թվականի միջին ամսական ծախսի համեմատ աճել են դրամով (տոկոսով):

27. «Տոչ-մաստեր», «Սմարթ սոլուշնս», «Իննթեք», «Մերի-Քրիստ», «ՀԴՄ շտրիխ», «Քյու տերմինալ» և «Տերմինալ սերվ» ընկերությունների կողմից ՀԴՄ սպասարկման ծառայության մատուցման շրջանակում կատարված միջին ամսական ծախսերը միասին վերցված 2025 թվականի հունվարից մայիսն ընկած ժամանակահատվածում 2024 թվականի համեմատ աճել են դրամով:

28. «Տոչ-մաստեր», «Սմարթ սոլուշնս», «Իննթեք», «Մերի-Քրիստ», «ՀԴՄ շտրիխ», «Քյու տերմինալ» և «Տերմինալ սերվ» ընկերությունների կողմից 2025 թվականի հունվարից մայիսն ընկած ժամանակահատվածում միավոր ՀԴՄ սպասարկման միջին ծախսը տոկոսով գերազանցել է 2024 թվականի միավոր ՀԴՄ սպասարկման միջին ծախսին:

29. «Տոչ-մաստեր», «Սմարթ սոլուշնս», «Իննթեք», «Մերի-Քրիստ», «ՀԴՄ շտրիխ», «Քյու տերմինալ» և «Տերմինալ սերվ» ընկերությունների կողմից 2025 թվականի հունվարից մայիսն ընկած ժամանակահատվածում միավոր ՀԴՄ սպասարկումից ստացված միջին հասույթը տոկոսով գերազանցել է 2024 թվականի միավոր ՀԴՄ սպասարկումից ստացված միջին հասույթի մեծությունը:

30. «Տոչ-մաստեր», «Սմարթ սոլուշնս», «Իննթեք», «Մերի-Քրիստ», «ՀԴՄ շտրիխ», «Քյու տերմինալ» և «Տերմինալ սերվ» ընկերությունների կողմից 2025 թվականի հունվարից մայիսն ընկած ժամանակահատվածում միավոր ՀԴՄ սպասարկման գործունեության շահութաբերությունը շուրջ անգամ (տոկոսով) գերազանցել է 2024 թվականի միավոր ՀԴՄ սպասարկման գործունեության արդյունքում ստացված շահութաբերությունը:

31. «Տերմինալ սերվ» ընկերության կողմից 2025 թվականի մայիսի 12-ից ՊԵԿ էլեկտրոնային հարթակի միջոցով ներկայացվել է վերջինիս գործունեության դադարեցման դիմում:

32. «Տոչ-մաստեր» ընկերության՝ ՀԴՄ սպասարկումից հասույթը 2024 թվականին կազմել է դրամ, ընդհանուր հասույթը՝ դրամ:

33. «Սմարթ սոլուշնս» ընկերության՝ ՀԴՄ սպասարկումից հասույթը 2024 թվականին կազմել է դրամ ընդհանուր հասույթը՝ դրամ:

34. «ՀԴՄ շտրիխ» ընկերության՝ ՀԴՄ սպասարկումից հասույթը 2024 թվականին կազմել է դրամ ընդհանուր հասույթը՝ դրամ:

35. «Մերի-Քրիստ» ընկերության՝ ՀԴՄ սպասարկումից հասույթը 2024 թվականին կազմել է դրամ ընդհանուր հասույթը՝ դրամ:

36. «Իննթեք» ընկերության՝ ՀԴՄ սպասարկումից հասույթը 2024 թվականին կազմել է դրամ ընդհանուր հասույթը՝ դրամ:

37. «Տերմինալ սերվ» ընկերության՝ ՀԴՄ սպասարկումից հասույթը 2024 թվականին կազմել է դրամ ընդհանուր հասույթը՝ դրամ:

38. «Քյու տերմինալ» ընկերության՝ ընդհանուր հասույթը 2024 թվականին կազմել է դրամ:

39. «Տոչ-մաստեր» ընկերության՝ ՀԴՄ սպասարկումից հասույթը 2025 թվականի հունվարից մայիսը ներառող ժամանկահատվածում կազմել է դրամ, ընդհանուր հասույթը՝ դրամ:

40. «Սմարթ սոլուշնս» ընկերության՝ ՀԴՄ սպասարկումից հասույթը 2025 թվականի հունվարից մայիսը ներառող ժամանկահատվածում կազմել է դրամ ընդհանուր հասույթը՝ դրամ:

41. «ՀԴՄ շտրիխ» ընկերության՝ ՀԴՄ սպասարկումից հասույթը 2025 թվականի հունվարից մայիսը ներառող ժամանկահատվածում կազմել է դրամ ընդհանուր հասույթը՝ դրամ:

42. «Մերի-Քրիստ» ընկերության՝ ՀԴՄ սպասարկումից հասույթը 2025 թվականի հունվարից մայիսը ներառող ժամանկահատվածում կազմել է դրամ ընդհանուր հասույթը՝ դրամ:

43. «Իննթեք» ընկերության՝ ՀԴՄ սպասարկումից հասույթը 2025 թվականի հունվարից մայիսը ներառող ժամանկահատվածում կազմել է դրամ ընդհանուր հասույթը՝ դրամ:

44. «Տերմինալ սերվ» ընկերության՝ ՀԴՄ սպասարկումից հասույթը 2025 թվականի հունվարից մայիսը ներառող ժամանկահատվածում կազմել է դրամ ընդհանուր հասույթը՝ դրամ:

45. «Քյու տերմինալ» ընկերության՝ ՀԴՄ սպասարկումից հասույթը 2025 թվականի հունվարից մայիսը ներառող ժամանկահատվածում կազմել է դրամ ընդհանուր հասույթը՝ դրամ:

6. Կիրառելի իրավունքի հարցի կապակցությամբ.

2025 թվականի հուլիսի 3-ին ընդունվել է ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-205-Ն օրենքը (այսուհետ՝ **ՀՕ-205-Ն օրենք**), որով փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» 2000 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-112 օրենքում:

ՀՕ-205-Ն օրենքն ուժի մեջ է մտել 2025 թվականի օգոստոսի 1-ից և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքը վերանվանվել է՝ ստանալով «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» վերնագիրը:

ՀՕ-205-Ն օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը շարունակում է գործել որպես Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողով, իսկ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամները պաշտոնավարման մնացած ժամկետը շարունակում են պաշտոնավարել որպես Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի անդամներ:

ՀՕ-205-Ն օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքը կիրառվում է ուժի մեջ մտնելուց հետո վարույթների հարուցման և հարուցված վարույթների նկատմամբ: Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը հարուցված վարույթներն իրականացվում են «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով սահմանված կարգով:

Վերոգրյալ իրավակարագավորումներից հետևում է, որ

1. Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը 2025 թվականի օգոստոսի 1-ից շարունակում է գործել որպես Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողով.

2. Մինչև ՀՕ-205-Ն օրենքն ուժի մեջ մտնելը հարուցված վարույթներն իրականացվում են մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» օրենքով, այսինքն՝ մինչև ՀՕ-205-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով (այսուհետ նաև՝ **Օրենք**).

Վարույթը հարուցվել է 2024 թվականի դեկտեմբերի 3-ին, հետևաբար իրավախախտման հատկանիշների առկայության հարցը գնահատվում և պատասխանատվության միջոցը կիրառվում է Օրենքով սահմանված կարգով:

Հարկ է շեշտադրել, որ Օրենքի 5-րդ և 8-րդ հոդվածների իրավակարգավորումների բովանդակությունը ներառված է 2025 թվականի օգոստոսի 1-ից գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» օրենքում, իսկ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վարույթի իրականացման վերաբերելի կանոնները ՀՕ-205-Ն օրենքով փոփոխության չեն ենթարկվել:

<u>7. Ապրանքային շուկա սահմանելու հարցի կապակցությամբ.</u>

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ ապրանքային շուկան որոշակի տարածքում ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների շրջանառության ոլորտն է, որի սահմանները որոշվում են համապատասխան տարածքում ապրանքի ձեռքբերման, իրացման կամ արտադրման, տնտեսական կամ այլ հնարավորություններով կամ նպատակահարմարությամբ և դրա սահմաններից դուրս այդպիսի հնարավորությունների կամ նպատակահարմարության բացակայությամբ:

Ապրանքային շուկան բնութագրվում է ապրանքատեսակային ու աշխարհագրական սահմաններով, ուսումնասիրության ժամանակահատվածով, դրա սուբյեկտների կազմով և ծավալով:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանը տվյալ ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների ամբողջությունն է:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ փոխադարձ փոխարինելի ապրանքներ են համարվում այն ապրանքները, որոնք կարող են համեմատվել ըստ իրենց

գործածության նշանակության, կիրառման, որակական, տեխնիկական, գնային կամ այլ հատկանիշներով այնպես, որ ձեռք բերողը սպառման գործընթացում կամ արտադրական նպատակներով օգտագործման ընթացքում փաստացի փոխարինում է կամ պատրաստ է փոխարինելու դրանք մեկը մյուսով:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը սահմանում է ապրանքային շուկաների որոշման կարգը:

Հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 15-ի «Ապրանքային շուկաների որոշման կարգը սահմանելու և Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 263-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 550-Ն որոշման (այսուհետ նաև՝ **Թիվ 550-Ն որոշում**) 4-րդ կետի համաձայն՝ մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը հարուցված և իրականացվող վարույթների շրջանակում ապրանքային շուկաները որոշվում են մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը գործող կարգով, իսկ 2025 թվականի օգոստոսի 1-ից հետո հարուցված և իրականացվող վարույթների շրջանակում ապրանքային շուկաները որոշվում են սույն որոշմամբ սահմանված կարգով:

Հաշվի առնելով, որ Վարույթը հարուցվել է մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը, սույն Վարույթի նկատմամբ կիրառելի է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 263-Ն որոշմամբ սահմանված կարգը (այսուհետ՝ **Կարգ**):

Ընդ որում, Թիվ 550-Ն որոշմամբ հաստատված կարգի և Կարգի դրույթների միջև բովանդակային որևէ տարբերություն չկա:

Կարգի 1-ին կետի համաձայն՝ ապրանքային շուկաների որոշման կարգով կարգավորվում են Հանձնաժողովի կողմից ապրանքային շուկաների որոշման հետ կապված հարաբերությունները:

Կարգի 3-րդ կետի համաձայն՝ ապրանքային շուկաների որոշման գործընթացը ներառում է հետևյալ փուլերը.

1) ապրանքային շուկայի ուսումնասիրության ժամանակահատվածի որոշում,

2) ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանների որոշում,

3) ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանների որոշում,

4) ապրանքային շուկայի սուբյեկտների կազմի որոշում,

5) ապրանքային շուկայի ծավալի և տնտեսավարող սուբյեկտների՝ ապրանքային շուկայում ունեցած մասնաբաժինների որոշում:

Վերոնշյալ կարգավորումների լույսի ներքո անդրադառնալով գործի փաստերին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

<u>ա) Ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանը</u>.

Կարգի 8-րդ կետի համաձայն՝ ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանների որոշումը, այսինքն՝ միևնույն ապրանքային շուկայում շրջանառվող փոխարինող չունեցող ապրանքի կամ փոխադարձ փոխարինելի ապրանքների հայտնաբերման գործընթացը ներառում է.

1) ապրանքի նախնական որոշում,

2) ապրանքի՝ սպառման գործընթացում կամ արտադրական նպատակներով օգտագործման ընթացքում ձեռքբերողի ընտրությունը որոշող հատկանիշների (ըստ գործածության նշանակության, կիրառման, որակական, տեխնիկական, գնային կամ այլ հատկանիշների) և տվյալ ապրանքի համար փոխադարձ փոխարինելի ապրանքների բացահայտում,

3) տվյալ ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների ամբողջության որոշում:

Կարգի 9-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 8-րդ կետի իրականացման արդյունքում Հանձնաժողովը որոշում է ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանները:

Կարգի 11-րդ կետի համաձայն՝ փոխադարձ փոխարինելի ապրանքների հայտնաբերման մեթոդների ընտրությունը կախված է շուկայի առանձնահատկություններից, ուսումնասիրության ժամկետներից, տեղեկատվության հասանելիությունից, ուսումնասիրության հրատապությունից և այլ չափանիշներից:

Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի «Հսկիչ դրամարկղային մեքենային և ցանցային կապի միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները, հսկիչ դրամարկղային մեքենան հարկային մարմնում գրանցման և գրանցումից հանման կարգը, հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության կանոնները հաստատելու, էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոնի դուրս գրման կարգը, էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների տեխնիկական պահանջները, դրանց հաշվառման, հաշվառումից հանման կարգը, դրանց միջոցով տրամադրվող էլեկտրոնային կտրոնի պարտադիր վավերապայմաններին ներկայացվող, ինչպես նաև ինտերնետային կայքին կամ էլեկտրոնային հավելվածին (էլեկտրոնային առեվտրային հարթակին) ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1976-Ն որոշման (այսուհետ նաև՝ **Որոշում**) հավելված N 1-ի կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հսկիչ դրամարկղային մեքենաները (այսուհետ՝ ՀԴՄ) պետք է բավարարեն սույն հավելվածով սահմանված՝ ՀԴՄ-ներին ներկայացվող տեխնիկական պահանջներին (այսուհետ՝ պահանջներ):

Որոշման հավելված N 1-ի 5-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվող ՀԴՄ-ները պետք է բավարարեն հետևյալ ընդհանուր տեխնիկական պահանջներին՝

1) ՀԴՄ-ն պետք է ունենա՝

ա. ֆիսկալային հիշողություն (չջնջվող հիշող սարք),

բ.օգտագործողի մուտքի անվանումը և գաղտնաբառ մուտքագրելու հնարավորություն,

գ. մակնշվածք, որում պետք է նշված լինեն ՀԴՄ-ի անվանումը, գործարանային համարը, ՀԴՄ-ն արտադրողի ֆիրմային անվանումը: Մակնշվածքի դրոշմման եղանակը

պետք է ապահովի դրա պահպանվածությունը ՀԴՄ-ի ծառայության ամբողջ ժամկետի ընթացքում,

դ. SIM քարտով՝ նվազագույնը 3G կապուղիով վերադաս հարկային մարմնի տեղեկատվական համակարգին միանալու հնարավորություն, ինչպես նաև WIFI ցանցին և Ethernet-ին (համապատասխան փոխարկիչի միջոցով) միանալու հնարավորություն,

ե. ՀԴՄ սարք - պրոցեսինգային կենտրոն (վճարային քարտերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնելու իրավասություն ունեցող կազմակերպություն) համակցության սերտիֆիկացում վճարային համակարգերում, որի համար պարտադիր է տվյալ ՀԴՄ սարքի EMVCo L1, EMVCo L2, PCI PED, TQM Label և այլն, եթե վճարային համակարգերի կողմից հետագայում նոր պարտադիր պահանջներ կսահմանվեն,

զ.ծրագրային ապահովման փոփոխության և նոր մոդուլների ինտեգրման հնարավորություն.

2) ՀԴՄ-ն պետք է ապահովի՝

ա. ցանցային սնուցման անջատման դեպքում էներգաանկախ հիշողության մեջ դրամական գործարքների մասին տեղեկատվության, ինչպես նաև ծառայողական տեղեկատվության պահպանումը,

բ. աշխատանքի հիմնական ռեժիմների ծրագրավորումը,

գ.աշխատունակությունն էլեկտրացանցի (էլեկտրասնուցման) վթարային անջատումներից հետո,

դ.վերադաս հարկային մարմնի կողմից հաստատված հատուկ ձևաչափով (արձանագրությամբ) տեղեկատվական համակարգի հետ աշխատանքը,

ե. վճարային քարտերի միջոցով (չիպային, անհպում և մագնիսական), առկայության դեպքում նաև այլ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող վճարային գործիքներով դրամական հաշվարկների իրականացումը,

զ. համապատասխան պարբերականությամբ՝ առնվազն յուրաքանչյուր 2 ժամը մեկ անգամ կապի հաստատումը Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ հարկային մարմին) տեղեկատվական համակարգի հետ՝ սույն ենթակետի «դ» պարբերությամբ սահմանված արձանագրությանը համապատասխան տվյալների փոխանակման նպատակով (կտրոնների տվյալների ուղարկումը և նոր տվյալների ստացումը հարկային մարմնի միասնական շտեմարանից),

է. հարկային մարմնի տեղեկատվական համակարգի հետ համապատասխան տվյալների (ամսաթիվը, ժամը և այլն) ներդաշնակեցումը (համապատասխանեցումը),

3) ՀԴՄ-ն պետք է ապահովի աշխատանքի կասեցումը՝ սույն հավելվածով սահմանված դեպքերում:

Որոշման հավելված N 1-ի 8-րդ կետի համաձայն՝ ՀԴՄ-ների միջոցով իրականացված դրամական հաշվարկների մասին տեղեկատվությունը հարկային մարմին է ուղարկվում ցանցային կապ ապահովող՝ շարժական կամ ֆիքսված կապի միջոցով:

Որոշման հավելված N 1-ի 35-րդ կետի համաձայն՝ ՀԴՄ-ները պետք է ապահովեն ապրանքների կամ աշխատանքների կամ ծառայությունների հաշվառման ծրագրերից (այդ թվում՝ հաշվապահական կամ կառավարչական) կամ համակարգչից ապրանքների կամ աշխատանքների կամ ծառայությունների անվանումների, քանակների, դրամարկղ մուտքագրված գումարների, վճարային քարտերի միջոցով (չիպային, անհպում և մագնիսական), առկայության դեպքում նաև այլ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող վճարային գործիքներով հաշվեգրված գումարների, ՀԴՄ-ի միջոցով կազմվող հաշվետվությունների ներմուծման և արտածման հնարավորությունը, ինչպես նաև ՀԴՄ կտրոնների տրամադրումը ՀԴՄ-ի կամ ՀԴՄ-ի ծրագիրն արտաքին (առևտրային) ծրագրերի հետ ինտեգրած լինելու դեպքում՝ արտաքին տպող սարքի միջոցով:

Կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 4-ի ««Հայաստանի Հանրապետության տարածքում վճարային քարտի թողարկման, սպասարկման և տարածման, ինչպես նաև վճարային քարտով գործառնությունների իրականացման կարգը» հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հունվարի 31-ի թիվ 39-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 300-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի գլխի 5-րդ ենթակետի համաձայն՝ ՊՈՍ տերմինալն էլեկտրոնային սարք է, որը նախատեսված է առևտրի և (կամ) սպասարկման կետում վճարային քարտով անկանխիկ գործառնություն կատարելու կամ բանկի և (կամ) վերջինիս տարածքային ստորաբաժանման տարածքում վճարային քարտով կանխիկացման գործառնություն կատարելու համար:

«Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ հսկիչ դրամարկղային մեքենաներ կիրառելու պարտավորություն ունեցող, ինչպես նաև օդային տրանսպորտով կատարվող ուղևորափոխադրումների տոմսերի վաճառք իրականացնող սուբյեկտները պետք է ունենան և հաճախորդի ցանկությամբ ապահովեն վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով վճարման ընդունում, բացառությամբ կրպակների:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ստացվում է, որ ՀԴՄ-ն ապահովում է ապրանքների կամ ծառայությունների հաշվառման ծրագրերից ապրանքների կամ ծառայությունների անվանումների, քանակների, դրամարկղ մուտքագրված գումարների, վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով վճարման ընդունման, ինչպես նաև հարկային մարմնի տեղեկատվական համակարգի հետ համապատասխան տվյալների (ամսաթիվը, ժամը և այլն) ներդաշնակեցման հնարավորությունը, իսկ ՊՈՍ տերմինալն իր հերթին ապահովում է առևտրի և (կամ) սպասարկման կետում վճարային քարտով անկանխիկ գործառնություն կատարելու հնարավորությունը:

Այսպիսով, հաշվի առնելով ՀԴՄ, ՀԴՄ-ՊՈՍ և ՊՈՍ տերմինալների միջոցով մատուցվող ծառայությունների տարբերությունները՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ

ՀԴՄ միջոցով մատուցվող ծառայությունների մասով ՀԴՄ և ՀԴՄ-ՊՈՍ տերմինալները հանդիսանում են փոխադարձ փոխարինելի ապրանքներ, քանի որ ապահովում են ՀԴՄ միջոցով մատուցվող ծառայությունների ամբողջությունը: Մինչդեռ ՊՈՍ տերմինալները հնարավորություն չունեն ապահովելու ՀԴՄ միջոցով մատուցվող ծառայություններն:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն վարույթով քննարկվող իրավախախտումը վերաբերում է Ընկերությունների կողմից ՀԴՄ և ՀԴՄ-ՊՈՍ տերմինելների սպասարկման շրջանակում սահմանված և կիրառված գներին: Նշված հանգամանքը հաշվի առնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ **սույն վարույթի շրջանակում ապրանքային շուկան է «ՀԴՄ և ՀԴՄ-ՊՈՍ տերմինալների սպասարկում» ապրանքային շուկան (այսուհետ նաև՝ Ապրանքային շուկա): Ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանը ներառում է ՀԴՄ և ՀԴՄ-ՊՈՍ (այսուհետ համատեղ նաև՝ ՀԴՄ) տերմինալների սպասարկման ծառայությունների ամբողջությունը:**

<u>բ) Ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանը.</u>

Օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ *ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանը Հանձնաժողովի որոշմամբ սահմանված՝ որոշակի աշխարհագրական տարածք է (այդ թվում՝ ճանապարհ, երթուղի՝ օդային, ջրային, ցամաքային և այլն), որի շրջանակներում գնորդի համար տնտեսապես հնարավոր ու նպատակահարմար է ձեռք բերել տվյալ ապրանքը և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքները և առկա չէ այդ հնարավորությունն ու նպատակահարմարությունը տվյալ տարածքից դուրս: Ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանը կարող է ներառել Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը կամ դրա մի մասը կամ Հայաստանի Հանրապետության (կամ դրա մի մասի) և այլ պետության (կամ դրա մի մասի) տարածքը:*

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀԴՄ սպասարկման ծառայության ձեռքբերումը հնարավոր և հասանելի է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում՝ Ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանը Հայաստանի Հանրապետությունն է:

<u>գ) Ապրանքային շուկայի ուսումնասիրության ժամանակահատվածը.</u>

Օրենքի 3-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ ապրանքային շուկայի ուսումնասիրության ժամանակահատվածը այն ժամանակահատվածն է (օր, ամիս, տարի), որի շրջանակում ուսումնասիրվում է ապրանքային շուկան:

Սույն վարչական վարույթի շրջանակներում ապրանքային շուկայի ուսումնասիրության ժամանակահատվածը Հանձնաժողովը դիտարկել է 2024 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածը:

<u>դ) Ապրանքային շուկայի սուբյեկտների կազմը և ծավալը.</u>

Օրենքի 3-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ ապրանքային շուկայի սուբյեկտներն են տվյալ ապրանքը և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքներն իրացնողը, արտադրողը կամ ձեռք բերողը:

Համաձայն ՊԵԿ-ի կողմից տրամադրված և վերջինիս կայքէջում հրապարակված՝ նոր սերնդի ՀԴՄ տեխնիկական սպասարկում իրականացնող կազմկերպությունների մասին տեղեկատվության՝

1. 2024 թվականի նոյեմբերից մինչև 2025 թվականի մայիսը ներառող ժամանակահատվածում Ապրանքային շուկայում գործունեություն է ծավալել սուբյեկտ, այդ թվում՝ «Տոչ-մաստեր», «Մերի-Քրիստ», «ՀԴՄ շտրիխ», «Սմարթ սոլուշնս», «Տերմինալ Սերվ» և «Իննթեք» ընկերությունները, իսկ 2025 թվականի հունվարի 1-ից՝ նաև «Քյու Տերմինալ» ընկերությունը,

2. Սույն գործում առկա են Ընկերությունների միջև փոխկապակցվածության վերաբերյալ տվյալներ:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտ է անձանց խումբը: Ուստի, ապրանքային շուկայի մասնակիցների միջև անձանց խմբի հատկանիշների առկայության դեպքում նրանք դիտարկվում են որպես մեկ տնտեսավարող սուբյեկտ և ապրանքային շուկայի սուբյեկտների ծավալի հաշվարկման շրջանակում վերջինների մասնաբաժինները հաշվարկվում են համատեղ:

Նման պայմաններում Հանձնաժողովն էական է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1. Արդյո՞ք «Տոչ-մաստեր», «Իննթեք», «Քյու տերմինալ», «ՀԴՄ շտրիխ», «Տերմինալ սերվ», «Մերի-Քրիստ» և «Սմարթ սոլուշնս» ընկերությունները հանդիսանում են անձանց խումբ,

2. Արդյո՞ք անձանց խումբը ունի գերիշխող դիրք:

Առաջին հարցադրման կապակցությամբ.

<u>«Տոչ-մաստեր» ընկերության մասով.</u>

Ռեգիստրում առկա տեղեկատվության համաձայն՝ «Տոչ-մաստեր» ընկերությունը հիմնադրվել է 2008 թվականին, գրանցման և գործունեության հասցեն քաղաք Երևան, Կորյունի փողոց, 7-ի թիվ 24 տարածքն է: Միաժամանակ, ըստ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ «Տոչ-մաստեր» ընկերության հասցեն է քաղաք Երևան, Կորյունի 7/1-ը:

«Տոչ-մաստեր» ընկերության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2024 թվականի հոկտեմբերի 30-ին կնքվել է վերջինիս բաժնեմասի առուվաճառքի պայմանագիր:

Միաժամանակ, Ռեգիստրում, առկա տեղեկատվության համաձայն 2024 թվականի նոյեմբերի 6-ից «Տոչ-մաստեր» ընկերության գործադիր մարմնի ղեկավար է հանդիսանում , 2015 թվականի փետրվարի 3-ից հաշվապահն է (հասցե՝ ք. Երևան, Շենգավիթ, Աէրացիայի թղմ., 1 շ., 48 բնակարան), իսկ սեփականատերերն են.

✓ Վահագն Խաչատրյանը (հասցե՝ ք. Երևան, Շենգավիթ, Մանթաշյան 51 շ. , 38 բն.)՝ բաժնեմասով (հանդիսանում է նաև «Նաիրի Ինշուրանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում բաժնետեր և խորհրդի նախագահ),

✓ «Յունիոն սքուեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ նաև՝ **«Յունիոն սքուեր» ընկերություն,** հասցեն՝ ք. Երևան, Արաբկիր, Հակոբ Հակոբյան փ., 3)՝ բաժնեմասով: «Յունիոն սքուեր» ընկերության բաժնեմասը պատկանում է Տիգրան Մարտիրոսյանին (հասցե՝ ք.Երևան, Կենտրոն, Նալբանդյան փ., 33, 15 բնակարան, 2019 թվականի մայիսի 8-ից հանդիսանում է նաև «Նաիրի Ինշուրանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության խորհրդի անդամ, ինչպես նաև 2011 թվականի մայիսի 27-ից մինչև 2019 թվականի մայիսի 6-ն ընկած ժամանակահատվածում աշխատել է ՊԵԿ-ում), բաժնեմասը՝ Արթուր Կարապետյանին (ՌԴ քաղաքացի): «Յունիոն սքուեր» ընկերությունը հիմնադրվել է 2024 թվականի սեպտեմբերի 16-ին (գործունեության ոլորտը՝ այլ ծառայությունների մատուցում, չներառված ուրիշ խմբավորումներում), և համաձայն պետական էլեկտրոնային հարթակներից հատուկ տեխնիկածրագրային ուղիների միջոցով ձեռք բերված տեղեկատվության՝ հասույթ և դուրս գրված հաշիվներ չունի:

<u>«Սմարթ սոլուշնս» ընկերության մասով.</u>

Ռեգիստրում առկա տեղեկատվության համաձայն՝ «Սմարթ սոլուշնս» ընկերությունը հիմնադրվել է 2013 թվականին, գրանցման հասցեն՝ քաղաք Երևան, Ավան, Իսահակյան թղմ., 1/1 շ., 30 բնակարան: Միաժամանակ, ըստ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ «Սմարթ սոլուշնս» ընկերության հասցեն քաղաք Երևան, Ֆրիկի 10 շենք, 18 տարածքն է:

«Սմարթ սոլուշնս» ընկերության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2024 թվականի նոյեմբերի 29-ին կնքվել է վերջինիս բաժնեմասի առուվաճառքի պայմանագիր:

Միաժամանակ, Ռեգիստրում, ինչպես նաև Հանձնաժողովի e-compete համակարգի տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝ 2018 թվականի ապրիլի 6-ից հանդիսանում է գործադիր մարմնի ղեկավարը, իսկ ՝ հաշվապահը: 2024 թվականի դեկտեմբերի 4-ից «Սմարթ սոլուշնս» ընկերության մասնակիցներն են.

✓ «Բուուսթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ բաժնեմասով (հասցե՝ ք. Երևան, Կենտրոն, Նալբանդյան փ., 25/14 շ., Բն. 54 բն), հիմնադրվել է 2024 թվականի հուլիսի 19-ին: Համաձայն Ռեգիստրում առկա տեղեկատվության՝ Մուշեղ Շահինյանը հանդիսանում է մասնակիցը և գործադիր մարմնի ղեկավարը:

✓ «Պառատուս ԱՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ բաժնեմասով (հասցե՝ ք. Երևան, Կենտրոն, Նալբանդյան փ., 25/14 շ., 54 բն.): Համաձայն Ռեգիստրում առկա տեղեկատվության՝ 2024 թվականի հոկտեմբերի 25-ից Հարություն

Ժորայի Հովհաննիսյանը հանդիսանում է մասնակիցը և գործադիր մարմնի ղեկավարը:

✓ «Տոչ-մաստեր» ընկերությունը՝ բաժնեմասով:

«ՀԴՄ շտրիխ» ընկերության մասով.

Ռեգիստրում առկա տեղեկատվության համաձայն՝ «ՀԴՄ շտրիխ» ընկերությունը հիմնադրվել է 2006 թվականին, գրանցման և գործունեության հասցեն՝ քաղաք Երևան, Ավան, Նարեկացի թղմ., 54 շենք, 60 բնակարանն է: Միաժամանակ, ըստ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ «ՀԴՄ շտրիխ» ընկերության հասցեն քաղաք Երևան, Արշակունյաց 9/5-ն է:

Միաժամանակ, Ռեգիստրում, ինչպես նաև Հանձնաժողովի e-compete համակարգի տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի մարտի 6-ից «ՀԴՄ շտրիխ» ընկերության գործադիր մարմնի ղեկավարն է
(հասցե՝ Արմավիր, Սպարապետ Վ. Սարգսյան փ. 2 փկղ. , 5 շ.), իսկ մասնակիցներն են.

✓ 2020 թվականի հուլիսի 15-ից Կարեն Հովհաննիսյանը (հասցե՝ ք. Երևան, Քանաքեռ–Զեյթուն, Շովրոյան փ. , 14 շ. , 10 բն.)՝ բաժնեմասով,

✓ 2023 թվականի փետրվարի 1-ից Սարկիս Էվանեսյանը (հասցե՝ ք. Երևան, Ավան, Նարեկացի թղմ., 54 շ., 60 բն)՝ բաժնեմասով,

«Մերի-Քրիստ» ընկերության մասով.

Ռեգիստրում առկա տեղեկատվության համաձայն՝ «Մերի-Քրիստ» ընկերությունը հիմնադրվել է 2000 թվականին, գրանցման հասցեն՝ քաղաք Երևան, Մալաթիա–Սեբաստիա, Ռաֆֆու փողոց, շենք 93, 21 բնակարանն է: Ըստ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ «Մերի-Քրիստ» ընկերության հասցեն է քաղաք Երևան, Հր. Քոչար 18 շենք, 91 շինությունն է:

Միաժամանակ, Ռեգիստրում, ինչպես նաև Հանձնաժողովի e-compete համակարգի տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականի օգոստոսի 14-ից գործադիր մարմնի ղեկավարն է (հասցե՝ ք. Երևան, Մալաթիա–Սեբաստիա, Կուրղինյան փ., 13 շ., 17 բն.): «Մերի-Քրիստ» ընկերության սեփականատերերն են.

✓ 2018 թվականի հունիսի 21-ից Մերուժան Էվանեսյանը (հասե՝ ք. Երևան, Նորք–Մարաշ, Նորքի Այգիներ, 222/1 շ.)՝ բաժնեմասով,

✓ 2020 թվականի հունիսի 16-ից Արտաշես Սահակյանը (հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն 3 թղմ. , 10շ. , 18 բն.)՝ բաժնեմասով,

«Իննթեք» ընկերության մասով.

Ռեգիստրում առկա տեղեկատվության համաձայն՝ «Իննթեք» ընկերությունը հիմնադրվել է 2017 թվականին, գրանցման հասցեն՝ քաղաք Երևան, Շենգավիթ, Սևանի փողոց 5-ն է: Միաժամանակ, ըստ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ «Իննթեք» ընկերության հասցեն քաղաք Երևան, Լենինգրադյան փողոց, 34 շենքն է:

Ռեգիստրում, ինչպես նաև Հանձնաժողովի e-compete համակարգի տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի դեկտեմբերի 26-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում «Իննթեք» ընկերության միակ մասնակից, իսկ 2024 թվականի հունվարի 5-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ որպես գործադիր մարմնի ղեկավար է հանդիսացել

2024 թվականի հոկտեմբերի 30-ից «Իննթեք» ընկերության գործադիր մարմնի ղեկավարն է (հասցե՝ Կոտայք, Չարենցավան 6 թղմ. , 26 շ. , 10 բն.), իսկ տոկոս մասնակից է հանդիսանում «Քյու տերմինալ» ընկերությունը:

<u>Նախկինում</u>

«Իննթեք» ընկերության սեփականատերերն են հանդիսացել՝

✓ Տիգրան Մարտիրոսյանը՝ բաժնեմասով՝ 2023 թվականի դեկտեմբերի 16-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 30-ը,

2024 թվականի հունվարի 5-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 30-ը «Իննթեք» ընկերության գործադիր մարմնի ղեկավարն է հանդիսացել

<u>«Իննթեք» ընկերության ներկայիս սեփականատերերն են հանդիսանում</u>

✓ «Քյու տերմինալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ բաժնեմասով՝ 2024 թվականի հոկտեմբերի 30-ից,

2024 թվականի հոկտեմբերի 30-ից «Իննթեք» ընկերության գործադիր մարմնի ղեկավարն է (հասցե՝ Կոտայք, Չարենցավան 6 թղմ. , 26 շ. , 10 բն.):

<u>«Քյու տերմինալ» ընկերության մասով.</u>

Ռեգիստրում առկա տեղեկատվության համաձայն՝ «Քյու տերմինալ» ընկերությունը հիմնադրվել է 2020 թվականին, գրանցման հասցեն քաղաք Երևան, Աջափնյակ, Լենինգրադյան փողոց, շենք 34, բնակարան 35-ն է:

Ռեգիստրում, ինչպես նաև Հանձնաժողովի e-compete համակարգի տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականի մարտի 6-ից մինչև 2022 թվականի օգոստոսի 8-ն ընկած ժամանակահատվածում Մուշեղ Շահինյանը տոկոս բաժնեմասով հանդիսացել է «Քյու տերմինալ» ընկերության սեփականատերը: 2022 թվականի օգոստոսի 8-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 9-ն ընկած ժամանակահատվածում գործադիր մարմնի ղեկավարը եղել է Տիգրան Մարտիրոսյանը, իսկ 2022 թվականի օգոստոսի 8-ից սեփականատերը՝ Վազգեն Խաչատրյանը (հասցե՝ ք. Երևան, Շենգավիթ, Մանթաշյան փ. , 51շ. , 38Բ բն.)՝ տոկոս բաժնեմասով: 2024 թվականի օգոստոսի 9-ից գործադիր մարմնի ղեկավարն է (հասցե՝ Արագածոտն, Արուճ, 8 փ. , 27 շ.):

<u>«Տերմինալ սերվ» ընկերության մասով.</u>

Ռեգիստրում առկա տեղեկատվության համաձայն՝ «Տերմինալ սերվ» ընկերությունը հիմնադրվել է 2021 թվականին, գրանցման և գործունեության հասցեն քաղաք Երևան,

Արաբկիր, Գյուլբենկյան փողոց, շենք 38Ա, բնակարան 25-ն է: Միաժամանակ, ըստ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ «Տերմինալ սերվ» ընկերության հասցեն քաղաք Երևան, Լենինգրադյան փողոց, 34 շենքն է:

Միաժամանակ, Ռեգիստրում, ինչպես նաև Հանձնաժողովի e-compete համակարգի տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի փետրվարի 13-ից որպես «Տերմինալ սերվ» ընկերության տոկոս բաժնետեր, իսկ 2021 թվականի մարտի 20-ից որպես գործադիր մարմնի ղեկավար է հանդիսանում

<u>Աշխատակիցների վերաբերյալ.</u>

ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի փետրվարի դրությամբ մի շարք աշխատակիցներ միաժամանակ աշխատել են «Տոչ-մաստեր», «Մերի-Քրիստ», «ՀԴՄ շտրիխ» և «Սմարթ սոլուշնս» ընկերություններից 3-ում կամ 2-ում, մասնավորապես.

1. աշխատել է «ՀԴՄ շտրիխ» ընկերությունում՝ որպես զանգերի սպասարկման կենտրոնի մասնագետ (2017 թվականից) և «Մերի-Քրիստ» ընկերությունում՝ որպես տնօրեն (2020 թվականից):
2. աշխատել է «Մերի-Քրիստ» և «Տոչ-մաստեր» ընկերություններում՝ որպես տեսուչ համապատասխանաբար 2015 և 2017 թվականներից:
3. աշխատել է «ՀԴՄ շտրիխ» ընկերությունում՝ որպես տեսուչ (2017 թվականից) և «Սմարթ սոլուշնս» ընկերությունում՝ որպես տեխնիկական սպասարկման մասնագետ (2019 թվականից):
4. աշխատել է «ՀԴՄ շտրիխ» ընկերությունում 2019 թվականից, «Մերի-Քրիստ» և «Տոչ-մաստեր» ընկերություններում 2017 թվականներից՝ որպես ինժեներ:
5. աշխատել է «Տոչ-մաստեր» ընկերույթունում՝ որպես տեսուչ (2017 թվականից) և «Սմարթ սոլուշնս» ընկերությունում՝ որպես տեխնիկական սպասարկման մասնագետ (2019 թվականից):
6. աշխատել է «Տոչ-մաստեր» և «Մերի-Քրիստ» ընկերություններում որպես զանգերի սպասարկման կենտրոնի մասնագետ 2017 թվականից:

Միաժամանակ, «Իննթեք» ընկերության ներկայիս տնօրենը՝ Դիաննա Վարդանյանը, 2022 թվականի հուլիսի 18-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում «Քյու տերմինալ» ընկերությունում աշխատել է որպես հաշվետար:

ՊԵԿ-ի կողմից Հանձնաժողովին տրամադրված Ընկերությունների հաշվապահների IP հասցեների վերաբերյալ.

«Տոչ-մաստեր», «ՀԴՄ Շտրիխ», «Մերի-Քրիստ» և «Սմարթ սոլուշնս» ընկերությունների հաշվապահների IP հասցեներում և «Քյու տերմինալ», «Իննթեք» ու «Տերմինալ սերվ» ընկերությունների հաշվապահների IP հասցեներում կան կրկնվող IP հասցեներ, մասնավորապես.

1) 2024 թվականին.

«Տոչ-մաստեր», «Սմարթ սոլուշնս», «ՀԴՄ շտրիխ» և «Մերի-Քրիստ» ընկերությունների կրկնվող IP հասցեներն են՝

Միաժամանակ, «Տոչ-մաստեր», «Սմարթ սոլուշնս» և «ՀԴՄ շտրիխ» ընկերությունները վերոնշյալ կրկնվող IP հասցեներից բացի ունեն ևս մեկը՝

Ընդ որում, «Մերի-Քրիստ» և «ՀԴՄ շտրիխ» ընկերությունների բոլոր IP հասցեները առկա են նաև «Սմարթ սոլուշնս» և «Տոչ-մաստեր» ընկերությունում: Միաժամանակ «Տոչ-մաստեր» և «Սմարթ սոլուշնս» ընկերությունների բոլոր IP հասցեներն ամբողջովին կրկնվում են:

«Իննթեք», «Տերմինալ սերվ» և «Քյու տերմինալ» ընկերությունների կրկնվող IP հասցեներն են՝

Միաժամանակ, «Իննթեք» և «Տերմինալ սերվ» ընկերությունները վերոնշյալ կրկնվող IP հասցեներից բացի ունեն ևս մեկը՝

Ընդ որում, «Տերմինալ սերվ» ընկերության բոլոր 3 IP հասցեները առկա են նաև «Իննթեք» ընկերությունում:

2) 2025 թվականին.

«Տոչ-մաստեր», «Սմարթ սոլուշնս», «ՀԴՄ շտրիխ» և «Մերի-Քրիստ» ընկերությունների կրկնվող IP հասցեներն են՝

Միաժամանակ, «Տոչ-մաստեր», «Սմարթ սոլուշնս» և «ՀԴՄ շտրիխ» ընկերությունները վերոնշյալ կրկնվող IP հասցեներից բացի ունեն ևս մեկը՝ , իսկ «Տոչ-մաստեր», «Սմարթ սոլուշնս» ընկերությունները՝ նաև իսկ «Տոչ-մաստեր» և «Մերի-Քրիստ» ընկերությունները՝ նաև

Ընդ որում, «Սմարթ սոլուշնս» ընկերության բոլոր 5 և «Մերի-Քրիստ» ընկերության բոլոր 4 IP հասցեները առկա են նաև «Տոչ-մաստեր» ընկերությունում:

«Իննթեք», «Տերմինալ սերվ» և «Քյու տերմինալ» ընկերությունների կրկնվող IP հասցեներն են՝

Ընդ որում, «Իննթեք» ընկերության բոլոր 5 IP հասցեները առկա են նաև «Տերմինալ սերվ» և «Քյու տերմինալ» ընկերություններում:

Ընկերություններին հաշվապահական ծառայություններ մատուցող ընկերությունների վերաբերյալ.

«Քյու տերմինալ» և «Իննթեք» ընկերությունները 2024 թվականին և 2025 թվականի հունվարից մայիսը ներառող ժամանակահատվածում հաշվապահական ծառայություններ են ձեռք բերել «Դի Ջի Քոնսալթինգ» ընկերությունից, իսկ «Տոչ մաստեր», «Սմարթ սոլուշնս», «Մերի-Քրիստ» և «ՀԴՄ շտրիխ» ընկերությունները՝ «Սմարթ Կապիտալ» ընկերությունից:

Ողջ վերոգրյալից ելնելով, ստացվում է.

1. «Քյու տերմինալ», «Իննթեք» և «Տերմինալ սերվ» ընկերությունները գործունեություն են իրականացնում նույն հասցեում՝ քաղաք Երևան, Լենինգրադյան փողոց, 34 շենք:

2. «Քյու տերմինալ» և «Տերմինալ սերվ» ընկերություններն ունեն նույն կայքը և էլեկտրոնային հասցեն:

3. Վահագն Հրաչիկի Խաչատրյանը («Տոչ–մաստեր» ընկերության բաժնետեր) և Վազգեն Հրաչիկի Խաչատրյանը («Քյու տերմինալ» ընկերության բաժնետեր) եղբայրներ են:

4. Տիգրան Մարտիրոսյանը ներկայումս հանդիսանում է «Տոչ-մաստեր» ընկերության բաժնետեր և գործադիր մարմնի ղեկավար, իսկ նախկինում հանդիսացել է «Իննթեք» ընկերության սեփականատեր և գործադիր մարմնի ղեկավար:

5. Մուշեղ Շահինյանը («Բուուսթ» ընկերության բաժնետեր) 2020 թվականի մարտի 6-ից մինչև 2022 թվականի օգոստոսի 8-ն ընկած ժամանակահատվածում «Քյու տերմինալ» ընկերության տոկոս բաժնետերն է եղել:

6. «Տոչ-մաստեր», «ՀԴՄ Շտրիխ», «Մերի-Քրիստ» և «Սմարթ սոլուշնս» ընկերությունների աշխատակիցների ցանկում առկա են կրկնվող աշխատակիցներ:

7. «Տոչ-մաստեր», «ՀԴՄ Շտրիխ», «Մերի-Քրիստ» և «Սմարթ սոլուշնս» ընկերությունները հաշվապահական ծառայությունների մատուցումը ձեռք են բերում «Սմարթ կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից:

8. «Իննթեք» և «Քյու տերմինալ» ընկերությունները հաշվապահական ծառայությունների մատուցումը ձեռք են բերում «Դի Ջի Քոնսալթինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից:

Ամփոփելով վերոնշյալ հանգամանքները՝ ստացվում է, որ «Տոչ-մաստեր», «ՀԴՄ Շտրիխ», «Մերի-Քրիստ» և «Սմարթ սոլուշնս» ընկերությունների միջև, ինչպես նաև «Քյու տերմինալ», «Իննթեք» և «Տերմինալ սերվ» ընկերությունների միջև առկա է փոխկապակցվածություն (տե՛ս **Աղյուսակ 1-ը**):

Ավելին, հաշվի առնելով այն փաստը, որ Վահագն Հրաչիկի Խաչատրյանը («Տոչ–մաստեր» ընկերության բաժնետեր) և Վազգեն Հրաչիկի Խաչատրյանը («Քյու տերմինալ» ընկերության բաժնետեր) հանդիսանում են եղբայրներ՝ ստացվում է, որ վերոնշյալ բոլոր յոթ ընկերությունները փոխկապակցված են (տե՛ս **Գծապատկեր 1-ը**):

Աղյուսակ 1.

ՀԴՄ սպասարկող ընկերություններին առնչվող հանգամանքների վերաբերյալ

Գծապատկեր 1.

ՀԴՄ սպասարկող ընկերություններին առնչվող հանգամանքների վերաբերյալ

Վերոնշյալ ընկերությունների փոխկապակցվածության մասին են վկայում նաև հետևյալ հանգամանքները.

1. Նմանություններ դիրքորոշումներում.

«Տոչ-մաստեր» և «Իննթեք» ընկերությունների կողմից վարույթի վերաբերյալ ներկայացված Դիրքորոշումներում առկա են նույնական ձևակերպումներով արտահայտված մտքեր, որոնք ներկայացված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

«Տոչ-մաստեր» և «Իննթեք» ընկերությունների կողմից վարույթի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումներում առկա ընդհանրությունների մասին

«Տոչ-մաստեր» ընկերության Դիրքորոշումից հատված	«Իննթեք» ընկերություն Դիրքորոշումից հատվ
Ինչ վերաբերում է ներկայումս առկա իրավիճակին, պետք է արձանագրել, որ գնային քաղաքականության փոփոխությունը, այն է՝ մատուցվող ծառայությունների գնի որոշակի ավելացումը, ուղիղ համեմատական կապի մեջ է գտնվում անկանխիկ վճարումների ծավալների ավելացման՝ Հայաստանի Հանրապետության որդեգրած պետական քաղաքականության հետ:	Ինչ վերաբերում է ներկայումս առկա իրավիճակին, պետք է արձանագրել, որ գնային քաղաքականության փոփոխությունը, այն է՝ մատուցվող ծառայությունների գնի ավելացումը ուղիղ համեմատական կապի մեջ է գտնվում անկանխիկ վճարումների ծավալների ավելացմ Հայաստանի Հանրապետության որդեգրած պետական քաղաքականության հետ, որն իր ուղիղ արտացոլումն է ստացել «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի տեքստում:
Հաշվի առնելով ամբողջ վերոգրյալը, հայտնում եմ Ձեզ, որ Ընկերության կողմից հսկիչ դրամարկղային մեքենաների սպասարկման ոլորտում գնային քաղաքականությունը և դրա արդյունքում գների բարձրացումը ինչպես նշվեց պայմանավորված է եղել ոլորտում շուկայական և տեխնոլոգիական առաջխաղացման և սպառողներին անհամեմատ ավելի որակյալ ծառայությունների մատուցման անհրաժեշտությամբ, ցանկությամբ և դրա ապահովմամբ, որը շարունակական է լինելու մեր Ընկերության կողմից:	Հաշվի առնելով ամբողջ վերոգրյալը, հայտնում Ձեզ, որ Ընկերության կողմից հսկիչ դրամարկղային մեքենաների սպասարկման ոլորտում գնային քաղաքականությունը և դրա արդյունքում գների բարձրացումը, ինչպես նշվե պայմանավորված է եղել ոլորտում շուկայական տեխնոլոգիական առաջխաղացման և սպառողներին անհամեմատ ավելի որակյալ ծառայությունների մատուցման անհրաժեշտությամբ, ցանկությամբ և դրա ապահովմամբ, որը շարունակական է լինելու մ Ընկերության կողմից, և միաժամանակ չի հետապնդվել որևէ չարամիտ կամ զանցակազմ պարունակող որևէ նպատակ:

2. Հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 10-ին նախատեսված նիստին մասնակցելու վերաբերյալ.

Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի հունիսի 2-ի թիվ ՄՊՀ-006253, ՄՊՀ-006272, ՄՊՀ-006273, ՄՊՀ-006274, ՄՊՀ-006275, ՄՊՀ-006277, ՄՊՀ-006278 գրություններով համապատասխանաբար «Քյու տերմինալ», «Տոչ-մաստեր», «Տերմինալ սերվ», «Սմարթ սոլուշնս», «Մերի-Քրիստ», «ՀԴՄ շտրիխ» և «Իննթեք» ընկերություններին ուղարկվել է սույն վարույթի շրջանակում 2025 թվականի հունիսի 10-ին կայանալիք Հանձնաժողովի նիստի հրավեր: Ընկերությունները հրաժարվել են նիստին մասնակցել՝ ներկայացնելով կրկնվող բանավոր պատճառաբանություններ: Մասնավորապես՝ Ընկերությունների մի մասի ներկայացուցիչները հայտնել են, որ ղեկավարներն արդեն ունեն պլանավորած այլ հանդիպումներ, իսկ մյուս մասի ներկայացուցիչները նշել են, որ ղեկավարները հունիսի 10-ի դրությամբ բացակայելու են Երևանից: Ընկերությունների ներկայացուցիչները հայտնել են, որ Ընկերությունները չեն ունեցել լիազորված այլ անձինք նիստին ներկայանալու համար:

3. Հանձնաժողովի՝ 2025 թվականի հունիսի 24-ին նախատեսված նիստին մասնակցելու վերաբերյալ.

Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի հունիսի 11-ի թիվ ՄՊՀ-6748, ՄՊՀ-6749, ՄՊՀ-6750, ՄՊՀ-6751, ՄՊՀ-6752, ՄՊՀ-6753, ՄՊՀ-6754 գրություններով համապատասխանաբար «Տոչ-մաստեր», «Սմարթ սոլուշնս», «ՀԴՄ շտրիխ», «Մերի-Քրիստ», «Իննթեք», «Տերմինալ սերվ», «Քյու տերմինալ» ընկերություններին ուղարկվել է 2025 թվականի հունիսի 24-ին կայանալիք Հանձնաժողովի նիստի հրավեր:

ՄՊՀ-6748 գրությանն ի պատասխան՝ «Տոչ-մաստեր» ընկերությունը 2025 թվականի հունիսի 13-ին գրություն է ներկայացրել Հանձնաժողով՝ հայտնելով, որ «Տոչ-մաստեր» ընկերության մասնակցությունը լսումներին անվերապահ անհրաժեշտություն չի համարում, քանի որ վարույթի շրջանակներում Հանձնաժողովին պատշաճ տրամադրել է ինչպես Հանձնաժողովի կողմից պահանջված տեղեկատվությունն ու փաստաթղթերը, այնպես էլ առանց Հանձնաժողովի կողմից որևէ պահանջ ներկայացվելու՝ հավելյալ պարզաբանումներ:

ՄՊՀ-6749 գրությանն ի պատասխան՝ «Սմարթ սոլուշնս» ընկերությունը 2025 թվականի հունիսի 13-ին Հանձանժողով է ներկայացրել դիրքորոշում՝ հայտնելով նիստին մասնակցելու անհնարինության մասին, միաժամանակ խնդրելով նախկինում ներկայացված փաստաթղթերի հետ համատեղ տվյալ գրությունը հիմք ընդունել և դիտարկել որպես «Սմարթ սոլուշնս» ընկերության դիրքորոշում:

ՄՊՀ-6750 գրությանն ի պատասխան՝ «ՀԴՄ շտրիխ» ընկերությունը 2025 թվականի հունիսի 16-ին գրություն է ներկայացրել Հանձանժողով՝ հայտնելով, որ «ՀԴՄ շտրիխ» ընկերությունը անհրաժեշտ չի համարում մասնակցությունը 2025 թվականի հունիսի 24-ին կայանալիք Հանձնաժողովի նիստին: Միաժամանակ «ՀԴՄ շտրիխ» ընկերությունը խնդրել է հիմք ընդունել իրենց կողմից նախկինում ներկայացված տվյալները, քանի որ ըստ «ՀԴՄ շտրիխ» ընկերության՝ վերջինս Հանձնաժողովին է ներկայացրել սպառիչ տվյալներ՝ հիմնված առկա տեղեկատվության վերաբերյալ Հանձնաժողովի կողմից առաջադրված հարցադրումների վրա:

ՄՊՀ-6751 գրությանն ի պատասխան՝ «Մերի-Քրիստ» ընկերությունը 2025 թվականի հունիսի 13-ին գրություն է ներկայացրել Հանձնաժողով՝ հայտնելով, որ հնարավորություն չունեն մասնակցելու Հանձնաժողովի նիստին: Միաժամանակ «Մերի-Քրիստ» ընկերությունը խնդրել է հիմք ընդունել 2024 թվականի դեկտեմբերի 3-ից ի վեր վերջինիս կողմից տրամադրած փաստաթղթերն ու տեղեկությունները, որոնք, ըստ «Մերի-Քրիստ» ընկերության՝ Հանձնաժողովին են տրամադրվել ամբողջական և ճշգրիտ:

ՄՊՀ-6752 գրությանն ի պատասխան՝ «Իննթեք» ընկերությունը 2025 թվականի հունիսի 16-ին գրություն է ներկայացրել Հանձնաժողով հայտնելով, որ 2025 թվականի հունիսի 24-ին Հանձնաժողովի կողմից նշանակված նիստին ներկա չեն գտնվելու՝ խնդրելով որպես դիրքորոշում հիմք ընդունել նախկինում Հանձնաժողովի պահանջով «Իննթեք» ընկերության կողմից ներկայացված տվյալները, որոնք, ըստ «Իննթեք» ընկերության՝ համապատասխանում են Հանձնաժողովի գրություններով պահանջվող տվյալների ծավալին:

ՄՊՀ-6753 գրությանն ի պատասխան՝ «Տերմինալ սերվ» ընկերությունը 2025 թվականի հունիսի 18-ին գրություն է ներկայացրել Հանձնաժողով՝ հայտնելով, որ 2025 թվականի հունիսի 24-ին կայանալիք Հանձնաժողովի նիստին «Տերմինալ սերվ» ընկերության ներկայացուցիչները ներկա չեն գտնվելու, քանզի սույն վարույթի շրջանակներում, ըստ Ընկերության՝ արդեն իսկ ներկայացվել են Հանձնաժողովի կողմից համապատասխան գրություններով պահանջված փաստաթղթերը:

ՄՊՀ-6754 գրությանն ի պատասխան՝ «Քյու տերմինալ» ընկերությունը 2025 թվականի հունիսի 18-ին գրություն է ներկայացրել Հանձնաժողով՝ հայտնելով, որ Հանձնաժողովի նիստին ներկա գտնվելու անհրաժեշտություն չեն տեսնում, քանի որ «Քյու տերմինալ» ընկերության կողմից Հանձնաժողովին ներկայացվել են բավարար տեղեկություններ սույն վարույթի իրականացման շրջանակներում:

Վերոգրյալից հետևում է, որ Ընկերությունները Հանձնաժողովում կայանալիք 2 նիստերին մասնակցելուց հրաժարվել են նույնաբովանդակ բացատրություններով, ինչը ևս անուղղակիորեն մատնանշում է Ընկերությունների փոխկապակցվածությունը:

<u>4. Ընկերությունների կողմից Հանձնաժողովին տրամադրված պայմանագրերի նմանությունների վերաբերյալ.</u>

• «Տոչ-մաստեր», «Սմարթ սոլուշնս», «ՀԴՄ շտրիխ» և «Մերի-Քրիստ» ընկերությունների կողմից Հանձնաժողովին ներկայացված պայմանագրերից որոշներում մի շարք դրույթներ լրացված են գրիչով:

• «Տոչ-մաստեր», «ՀԴՄ շտրիխ» և «Մերի-Քրիստ» ընկերությունների կողմից սույն վարույթի շրջանակում ներկայացված պայմանագրերից որոշները ունեցել են ամբողջովին նույն բովանդակությունը:

• «Իննթեք», «Քյու տերմինալ» և «Տերմինալ սերվ» ընկերությունների կողմից սույն վարույթի շրջանակում ներկայացված պայմանագրերից որոշները ունեցել են ամբողջովին նույն բովանդակությունը:

<u>Ամփոփելով ողջ վերոգրյալը՝ ստացվում է, որ</u>.

• «Իննթեք» և «Քյու տերմինալ» ընկերությունները 2024 թվականին և 2025 թվականի հունվարից մայիսը ներառող ժամանակահատվածում հաշվապահական ծառայություններ են ձեռք բերել «Դի Ջի Քոնսալթինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից,

• «Տոչ մաստեր», «Սմարթ սոլուշնս», «ՀԴՄ շտրիխ» և «Մերի-Քրիստ» ընկերությունները 2024 թվականին և 2025 թվականի հունվարից մայիսը ներառող ժամանակահատվածում հաշվապահական ծառայություններ են ձեռք բերել «Սմարթ Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից,

• Վազգեն Հրաչիկի Խաչատրյանը 2022 թվականի օգոստոսի 8-ից հանդիսանում է «Քյու տերմինալ» ընկերության միակ սեփականատերը՝ այդպիսով վերջինիս հետ կազմելով անձանց խումբ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժով,

• «Քյու տերմինալ» ընկերությունը 2024 թվականի հոկտեմբերի 30-ին ձեռք է բերել «Իննթեք» ընկերության ոոկոս բաժնեմասը՝ այդպիսով վերջինիս հետ կազմելով անձանց խումբ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժով,

• Տիգրան Մարտիրոսյանը՝ հանդիսանալով «Իննթեք» ընկերության նախկին միակ սեփականատեր և տնօրեն, ինչպես նաև «Քյու տերմինալ» ընկերության նախկին տնօրեն՝ 2024 թվականի նոյեմբերի 5-ին «Յունիոն Սքուեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջոցով Արթուր Կարապետյանի հետ համատեղ ձեռք է բերել «Տոչ մաստեր» ընկերության բաժնեմասերի տոկոսը, այնուհետև նոյեմբերի 6-ից նշանակվել է տնօրենի պաշտոնում՝ այդպիսով «Տոչ մաստեր» ընկերության հետ կազմելով անձանց խումբ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի ուժով,

• Վահագն Հրաչիկի Խաչատրյանը 2024 թվականի նոյեմբերի 5-ին ձեռք է բերել «Տոչ մաստեր» ընկերության բաժնեմասերի մնացած տոկոսը՝ այդպիսով, ինչպես նաև փոխկապակցվածության հիմքով վերջինիս հետ կազմելով անձանց խումբ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի ուժով,

• «Տոչ մաստեր» ընկերությունը 2024 թվականի դեկտեմբերի 4-ին ձեռք է բերել «Սմարթ սոլուշնս» ընկերության բաժնեմասերի տոկոսը՝ այդպիսով, ինչպես նաև փոխկապակցվածության հիմքով վերջինիս հետ անձանց խումբ կազմելով Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի ուժով քանի որ նրանք փոխկապվածության կամ վերահսկողության ուժով գործում են ընդհանուր տնտեսական շահով պայմանավորված: Ընդ որում, «Սմարթ սոլուշնս» և «Տոչ-մաստեր» ընկերությունների փոխկապակցվածությունն ընդգծվում է նաև վերջիներիս բոլոր՝ թվով 8-ական IP հասցեների համընկնելու հանգամանքով,

• Վազգեն Հրաչիկի Խաչատրյանը, Վահագն Հրաչիկի խաչատրյանը, «Քյու տերմինալ», «Իննթեք», «Տոչ մաստեր» և «Սմարթ սոլուշնս» ընկերությունները անձանց խումբ են կազմում Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի ուժով,

• Մուշեղ Շահինյանը, 2020 թվականի մարտի 6-ից մինչև 2022 թվականի օգոստոսի 8-ը հանդիսանալով «Քյու տերմինալ» ընկերության միակ բաժնետեր, «Բուուսթ»

սահմանափակ պատասխանատվության ընկերության միջոցով (հանդիսանում է վերջինիս միակ բաժնետերը) 2024 թվականի դեկտեմբերի 4-ին ձեռք է բերել «Սմարթ սոլուշնս» ընկերության բաժնեմասերի տոկոսը,

• Մկրտիչ Սարգսի Էվանեսյանը 2023 թվականի օգոստոսի 3-ից մինչև 2024 թվականի նոյեմբերի 5-ը հանդիսացել է «Տոչ մաստեր» ընկերության համասեփականատեր՝ տիրապետելով ընկերության բաժնեմասերի տոկոսին և նշված ժամանակահատվածում անձանց խումբ կազմելով վերջինիս հետ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժով

• Մերուժան Սարգսի Էվանեսյանը 2018 թվականի հունիսի 21-ից հանդիսանում է «Մերի-Քրիստ» ընկերության համասեփականատերը՝ տիրապետելով ընկերության բաժնեմասերի տոկոսին և այդպիսով անձանց խումբ կազմելով վերջինիս հետ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժով,

• Սարկիս Էվանեսյանը 2023 թվականի փետրվարի 1-ից հանդիսանում է «ՀԴՄ շտրիխ» ընկերության համասեփականատեր՝ տիրապետելով ընկերության բաժնեմասերի տոկոսին և այդպիսով անձանց խումբ կազմելով վերջինիս հետ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժով,

• Մկրտիչ Սարգսի Էվանեսյանը, Մերուժան Սարգսի Էվանեսյանը, Սարկիս Էվանեսյանը, «Տոչ մաստեր», «Մերի-Քրիստ» և «ՀԴՄ շտրիխ» ընկերությունները 2023 թվականի օգոստոսի 3-ից մինչև 2024 թվականի նոյեմբերի 5-ը անձանց խումբ են կազմել Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի ուժով:

Ամփոփելով ողջ վերոնկարագրյալը՝ ստացվում է, որ.

• Մկրտիչ Սարգսի Էվանեսյան, Մերուժան Սարգսի Էվանեսյան, Սարկիս Էվանեսյան անձանց խումբը, 2024 թվականի նոյեմբերի 5-ին վաճառելով ՀԴՄ սպասարկման ոլորտում գործունեություն ծավալող՝ «Տոչ մաստեր» ընկերությունում ունեցած ողջ բաժնեմասերը՝ թվացյալ պահպանել են «Մերի-Քրիստ» և «ՀԴՄ շտրիխ» ընկերությունները,

• «Քյու տերմինալ», «Իննթեքը», «Տոչ մաստեր» և «Սմարթ սոլուշնս» ընկերությունները կազմել են անձանց խումբ՝ շարունակելով գործել որպես առանձին ընկերություններ: Ընդ որում, «Քյու տերմինալ» և «Իննթեք» ընկերությունների անձանց խումբը հանձին «Տոչ-մաստեր» և «Սմարթ սոլուշնս» ընկերությունների՝ անձանց խումբ է կազմել ՀԴՄ սպասարկման ոլորտում գործունեություն ծավալող ընկերությունների հետ:

Այսպիսով, հիմք ընդունելով՝

1. Վահագն Հրաչիկի Խաչատրյանի և Վազգեն Հրաչիկի խաչատրյանի՝ անձանց խումբ կազմելու հանգամանքը,

2. Վազգեն Հրաչիկի Խաչատրյանի փաստացի վերահսկողության տակ գտնվող «Քյու տերմինալ» և «Իննթեք» ընկերությունների կողմից հաշվապահական ծառայություններ մատուցող «Դի Ջի Քոնսալթինգ» ընկերության հետ համագործակցելը,

3. Վահագն Հրաչիկի Խաչատրյանի փաստացի վերահսկողության տակ գտնվող «Տոչ մաստեր» և «Սմարթ սոլուշնս» ընկերությունների կողմից հաշվապահական ծառայություններ մատուցող «Սմարթ Կապիտալ» ընկերության հետ համագործակցելը,

4. 2023 թվականի օգոստոսի 3-ից մինչև 2024 թվականի նոյեմբերի 5-ը «Տոչ մաստեր» ընկերության հետ անձանց խումբ կազմած «ՀԴՄ շտրիխ» և «Մերի-Քրիստ» ընկերությունների կողմից հաշվապահական ծառայություններ մատուցող «Սմարթ Կապիտալ» ընկերության հետ համագործակցելը,

5. «Մերի-Քրիստ» ընկերության բոլոր՝ թվով 4 IP հասցեների համընկնումը «ՀԴՄ շտրիխ» ընկերության 5 IP հասցեներից 4-ի հետ,

6. «ՀԴՄ շտրիխ» ընկերության թվով 5 IP հասցեների համընկնումը «Տոչ-մաստեր» և «Սմարթ սոլուշնս» ընկերությունների IP հասցեների հետ,,

7. «ՀԴՄ շտրիխ» և «Մերի-Քրիստ» ընկերությունների թվով 4 IP հասցեների համընկնումը «Տոչ-մաստեր» և «Սմարթ սոլուշնս» ընկերությունների IP հասցեների հետ՝

Ստացվում է, որ թվացյալ մրցակիցներ հանդիսացող ընկերությունները («ՀԴՄ շտրիխ», «Մերի-Քրիստ» ընկերությունները և «Տոչ-մաստեր», «Սմարթ սոլուշնս» ընկերությունները) փաստացի օգտվել են հաշվապահական ծառայություններ մատուցող միևնույն ընկերությունից այն դեպքում, երբ նման ծառայություն մատուցողները անմիջական հասանելիություն են ունենում ընկերությունների համար առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվությանը, «Տոչ-մաստեր» և «Սմարթ սոլուշնս» ընկերությունների հետ անձանց խումբ կազմող «Քյու տերմինալ» և «Իննթեք» ընկերությունները հաշվապահական ծառայություններ ձեռք են բերել այլ՝ «Դի Ջի Քոնսալթինգ» ընկերությունից, Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական ծառայությունների մատուցման ոլորտում գործունեություն են ծավալում ավելի քան տնտեսավարող սուբյեկտներ: Միաժամանակ, հաշվի առնելով Մկրտիչ Սարգսի Էվանեսյան, Մերուժան Սարգսի Էվանեսյան, Սարկիս Էվանեսյան անձանց խմբի կողմից «Տոչ մաստեր» ընկերությունում ունեցած ողջ բաժնեմասը վաճառելու հանգանամքը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Մկրտիչ Սարգսի Էվանեսյան, Մերուժան Սարգսի Էվանեսյան, Սարկիս Էվանեսյան անձանց խմբի կողմից ՀԴՄ սպասարկման ծառայությունների մատուցման շուկայում հետագա գործունեություն չծավալելը ներկայացված գործարքի տրամաբանական շարունակությունն է, ուստի, վերոնշյալ հանգամանքների հաշվառմամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ «Քյու տերմինալ», «Իննթեքը», «Տոչ մաստեր» և «Սմարթ սոլուշնս» ընկերությունների անձանց խումբը փաստացի վերահսկողություն է ձեռք բերել նաև «ՀԴՄ շտրիխ» և «Մերի-Քրիստ» ընկերությունների նկատմամբ:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Քյու տերմինալ», «Իննթեքը», «Տոչ մաստեր», «Սմարթ սոլուշնս», «ՀԴՄ շտրիխ», «Մերի-Քրիստ» և «Տերմինալ սերվ» ընկերությունները 2024 թվականի նոյեմբերից մինչև 2025 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածում ՀԴՄ սպասարկման ոլորտում գործունեություն ծավալող հիմնական տնտեսավարող սուբյեկտներն են հանդիսացել, ինչպես նաև հաշվի առնելով «Տերմինալ սերվ» և «Քյու Տերմինալ» ընկերությունների ֆիզիկական հասցեների, էլ. փոստի հասցեների, հեռախոսահամարների ու կայքի ամբողջությամբ նույնը լինելը, ինչպես նաև

«Տերմինալ սերվ» ընկերության 3 IP հասցեների համընկնումը «Իննթեք» ընկերության IP հասցեների հետ՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ «Տերմինալ սերվ» ընկերությունը ևս փոխկապակցված է «Քյու տերմինալ», «Իննթեքը», «Տոչ մաստեր» և «Սմարթ սոլուշնս» ընկերությունների անձանց խմբի հետ՝ գործում է ընդհանուր տնտեսական շահից ելնելով:

Էական է նաև այն հանգամանքը, որ 2025 թվականի մայիսին «Տերմինալ Սերվ» ընկերությունը հայտ է ներկայացրել ՊԵԿ՝ գործունեության դադարեցման վերաբերյալ: Նման պայմաններում Հանձնաժողովնը գտնում է, որ «Քյու տերմինալ», «Իննթեքը», «Տոչ մաստեր» և «Սմարթ սոլուշնս» ընկերությունների անձանց խումբը փաստացի վերահսկողություն է ձեռք բերել նաև «Տերմինալ սերվ» ընկերության նկատմամբ՝ առանց սեփականատերերի անվանափոխության, և արդյունքում ամիսներ անց դադարեցրել է վերջինիս գործունեությունը:

Վերոնշյալ հանգամանքները հաշվի առնելով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Քյու տերմինալ», «Իննթեք», «Տոչ մաստեր» և «Սմարթ սոլուշնս» ընկերությունների անձանց խումբը փաստացի վերահսկողություն է ձեռք բերել նաև «Տերմինալ սերվ», «ՀԴՄ շտրիխ» և «Մերի Քրիստ» ընկերությունների նկատմամբ:

Մյուս կողմից, էական է ընդգծել, որ Ընկերություններից որևէ մեկը Հանձնաժողովի կողմից 2025 թվականի հունիսի 10-ին և 24-ին նախատեսված նիստերին չի մասնակցել՝ ներկայացնելով նույնաբովանդակ պատճառաբանություններ: Մասնավորապես, «Քյու տերմինալ», «Տերմինալ սերվ», «ՀԴՄ շտրիխ» և «Տոչ-մաստեր» ընկերությունները, ըստ էության, անհրաժեշտ չեն համարել Հանձնաժողովի նիստերին մասնակցել՝ նշելով, որ Վարույթի շրջանակներում ներկայացրել են գործի ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկատվությունը, իսկ «Սմարթ սոլուշնս» և «Մերի-Քրիստ» ընկերությունները, ըստ էության, հայտնել են Հանձնաժողովի նիստերին մասնակցելու անհնարինության մասին՝ կրկին նշելով, որ Վարույթի շրջանակներում ներկայացրել են գործի ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ ««Քյու տերմինալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Իննթեքը» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Տոչ մաստեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն և «Սմարթ սոլուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն» անձանց խումբը փոխկապակցված է «Տերմինալ սերվ», «ՀԴՄ շտրիխ» և «Մերի Քրիստ» ընկերությունների հետ և վերջիններիս հետ ևս անձանց խումբ (այսուհետ համատեղ՝ **Անձանց խումբ**) է կազմում Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի ուժով, քանի որ նրանք փոխկապվածության կամ վերահսկողության ուժով գործում են ընդհանուր տնտեսական շահով պայմանավորված:

Երկրորդ հարցադրման կապակցությամբ.

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե՝

1) տվյալ ապրանքային շուկայում ունի շուկայական իշխանություն, մասնավորապես, որպես իրացնող կամ ձեռք բերող, չի հանդիպում էական մրցակցության և (կամ), իր ֆինանսական կարողությունից կամ այլ հատկանիշներից ելնելով, հնարավորություն ունի որոշիչ ազդեցություն ունենալու տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա և (կամ) դուրս մղելու այլ տնտեսավարող սուբյեկտին տվյալ ապրանքային շուկայից և (կամ) խոչընդոտելու տվյալ ապրանքային շուկա մուտք գործելուն, կամ

2) ապրանքային շուկայում, որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով գրավում է տվյալ շուկայի առնվազն մեկ երրորդը (...):

Սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կամ 4-րդ կետով նախատեսված հիմքերից որևէ մեկով տնտեսավարող սուբյեկտները գերիշխող դիրք ունեցող են համարվում՝ հաշվի առնելով տվյալ ապրանքային շուկայի կառուցվածքի առանձնահատկություններն այդ շուկայում գործող տնտեսավարող սուբյեկտների բաժինների բաշխվածության վերաբերյալ:

Սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կամ 4-րդ կետով նախատեսված հիմքերից որևէ մեկով տնտեսավարող սուբյեկտը չի կարող համարվել գերիշխող դիրք ունեցող, եթե նա, որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով չի գերազանցում տվյալ շուկայի մեկ տասներորդը:

Սույն հոդվածում նշված տնտեսավարող սուբյեկտը կարող է ներկայացնել տվյալ ապրանքային շուկայում իր գերիշխող դիրքի առկայությունը բացառող ապացույցներ:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը սահմանում է տնտեսավարող սուբյեկտի մենաշնորհ կամ գերիշխող դիրքի որոշման մեթոդաբանությունը և կարգը:

Հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 15-ի «Տնտեսավարող սուբյեկտի մենաշնորհ և գերիշխող դիրքի մեթոդաբանությունը և կարգը սահմանելու և Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 264-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 551-Ն որոշման (այսուհետ նաև՝ **Թիվ 551-Ն որոշում**) 4-րդ մասի համաձայն՝ մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը հարուցված և իրականացվող վարույթների շրջանակում մենաշնորհ և գերիշխող դիրքը որոշվում է մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը գործող մեթոդաբանությամբ և կարգով, իսկ 2025 թվականի օգոստոսի 1-ից հետո հարուցված և իրականացվող վարույթների շրջանակում մենաշնորհ և գերիշխող դիրքը որոշվում է սույն որոշմամբ սահմանված մեթոդաբանությամբ և կարգը:

Հաշվի առնելով, որ Վարույթը հարուցվել է մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը, սույն Վարույթի նկատմամբ կիրառելի է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 264-Ն որոշմամբ սահմանված մեթոդաբանությունը և կարգը (այսուհետ նաև՝ Մեթոդաբանություն և **կարգ**):

Ընդ որում, Թիվ 551-Ն որոշմամբ հաստատված մեթոդաբանության և կարգի ու Մեթոդաբանություն և կարգի դրույթների միջև բովանդակային որևէ տարբերություն չկա:

Ապրանքային շուկայում 2024 նոյեմբերից մինչև 2025 թվականի մայիսը ներառող ժամանակահատվածում Անձանց խումբն ունեցել է գերիշխող դիրք շուրջ տոկոս մասնաբաժնով արժեքային արտահայտությամբ, որից «Տոչ-մաստեր» ընկերություն՝ շուրջ տոկոս, «Սմարթ սոլուշնս» ընկերություն՝ շուրջ տոկոս, «ՀԴՄ շտրիխ» ընկերություն՝ շուրջ տոկոս, «Իննթեք» ընկերությունը՝ շուրջ տոկոս, «Մերի-Քրիստ» ընկերությունը՝ շուրջ տոկոս և «Տերմինալ Սերվ» ընկերությունը՝ շուրջ տոկոս, «Քյու տերմինալ» ընկերությունը՝ շուրջ տոկոս:

Այսպիսով Անձանց խումբը Ապրանքային շուկայում 2024 թվականի նոյեմբերից մինչև 2025 թվականի մայիսը ներառող ժամակահատվածում Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի ուժով ունեցել է գերիշխող դիրք:

Հարկ է նշել նաև, որ թիվ ՀԳ-05644/24 վարույթի շրջանակում ապրանքային շուկայի հատկորոշման վերաբերյալ արձանագրումներն իրականացվել են գործում առկա տվյալների հիման վրա, ինչը չի բացառում Հանձնաժողովի կողմից այլ վարույթների շրջանակում ապրանքային շուկայի այլ բնութագրում իրականացնելու հնարավորությունը:

<u>8. Վարույթի փաստական հանգամանքների ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.</u>

<u>1) Անձանց խմբի կողմից իրավախախտում կատարված լինելու հարցի կապակցությամբ.</u>

Թիվ ՀԳ-05644/24 վարույթը հարուցվել է ՀԴՄ սպասարկման ծառայությունների մատուցման առնչությամբ Անձանց խմբի վարքագծում գերիշխող դիրքի և հակամրցակցային համաձայնությունների չարաշահման հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

Անձանց խումբը Թիվ ՀԳ-05644/24 վարույթի առնչությամբ հայտնել է, որ ՀԴՄ սպասարկման գների ավելացումը պայմանավորված է եղել սպասարկման քանակի ավելացման և սպասարկման որակի բարելավման հետ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումների պարզաբանմանը.

1. Ո՞րն է տնտեսավարող սուբյեկտների կողմից գերիշխող դիրքի չարաշահման դրսևորման օբյեկտիվ կողմը:

2. Ի՞նչ բովանդակությամբ է կիրառվում «խտրական պայման» բառակապակցությունը մրցակցային օրենսդրության շրջանակում:

3. Տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթում ո՞վ է կրում վարույթով պատասխանողի համար բարենպաստ փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը:

4. Արդյո՞ք անհրաժեշտ է անդրադառնալ վարույթով պատասխանողի բոլոր փաստարկներին:

<u>Առաջին հարցադրման կապակցությամբ.</u>

ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:

ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:

Վերոգրյալի հաշվառմամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության երաշխավորումը՝ որպես սահմանադրական կարգի հիմունք, ելակետային նշանակություն ունի Հայաստանի Հանրապետությունում տնտեսական հարաբերությունների կանոնակարգման համար: Տնտեսական գործունեության ազատությունը շուկայական տնտեսության հիմնարար սկզբունքն է և շուկայական տնտեսական հարաբերությունների ձևավորման ու զարգացման օբյեկտիվ նախադրյալը: Միաժամանակ ազատ տնտեսական գործունեության իրավունքը բացարձակ չէ. բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր ապահովելու համար այն ենթակա է սահմանափակման՝ ազատ տնտեսական մրցակցության ապահովման նպատակից ելնելով: Հետևաբար, նշված երկու իրավական սկզբունքների՝ տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության ներդաշնակ ու հետևողական իրացման պայմաններում է միայն հնարավոր հասնել շուկայական հարաբերությունների վրա խարսխված արդյունավետ տնտեսական համակարգի ձևավորմանն ու կայուն զարգացմանը:

Շուկայական տնտեսության պայմաններում տնտեսական մրցակցային քաղաքականությունը հանդիսանում է պետության տնտեսական քաղաքականության անբաժանելի մասը: Բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր ապահովելու համար կարևոր նշանակություն ունի տնտեսական մրցակցության պաշտպանությունը, որն, ի թիվս այլնի, շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների զսպման համատեքստում ուղղված է սպառողների իրավունքների պաշտպանությանը»:

Վերոգրյալից հետևում է, որ տնտեսական գործունեության ընթացքում ապրանքաշրջանառության, ապրանքային շուկաների արդյունավետ գործունեության, տնտեսավարող սուբյեկտների ազատ մրցակցության իրավական ապահովմանն է ուղղված մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող տնտեսավարողի կողմից այդպիսի դիրքը չարաշահելու արգելքը: Նշված արգելքի սահմանումն ինքնանպատակ չէ և պայմանավորված է ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր

պայմանների վրա միակողմանիորեն կամ որոշիչ ազդեցություն ունենալու հնարավորություն ունեցող տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության ազատությունը որոշակիորեն օրենքով նշված շրջանակներում վերահսկելու անհրաժեշտությամբ:

Վերոգրյալ հարցերի մանրամասն կարգավորումները տեղ են գտել Օրենքով, որի նպատակն է պաշտպանել և խրախուսել տնտեսական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում:

Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այն տարածվում է տնտեսավարող սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների, վարքագծի կամ ակտերի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցությանը, ինչպես նաև վնասել սպառողների շահերը:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտը անհատ ձեռնարկատեր է, իրավաբանական անձ, այլ կազմակերպություն, դրա ներկայացուցչություն կամ մասնաճյուղ, անձանց խումբ կամ անձանց միություն, իսկ սույն օրենքով նախատեսված՝ համակենտրոնացման, անբարեխիղճ մրցակցության և տնտեսական գործունեության համակարգման դեպքերում տնտեսավարող սուբյեկտ է համարվում նաև ֆիզիկական անձը:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է մենաշնորհ դիրք ունեցող, եթե, որպես իրացնող կամ ձեռք բերող, չունի մրցակից:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Տնտեսավարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե՝

1) տվյալ ապրանքային շուկայում ունի շուկայական իշխանություն, մասնավորապես, որպես իրացնող կամ ձեռք բերող, չի հանդիպում էական մրցակցության և (կամ), իր ֆինանսական կարողությունից կամ այլ հատկանիշներից ելնելով, հնարավորություն ունի որոշիչ ազդեցություն ունենալու տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա և (կամ) դուրս մղելու այլ տնտեսավարող սուբյեկտին տվյալ ապրանքային շուկայից և (կամ) խոչընդոտելու տվյալ ապրանքային շուկա մուտք գործելուն, կամ

2) ապրանքային շուկայում, որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով գրավում է տվյալ շուկայի առնվազն մեկ երրորդը, կամ

3) ապրանքային շուկայում իրացման կամ ձեռքբերման առավել մեծ ծավալներ ունեցող երկու տնտեսավարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք, որպես իրացնող կամ ձեռք

բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը, կամ

4) ապրանքային շուկայում իրացման կամ ձեռքբերման առավել մեծ ծավալներ ունեցող երեք տնտեսավարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք, որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն երկու երրորդը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կամ 4-րդ կետով նախատեսված հիմքերից որևէ մեկով տնտեսավարող սուբյեկտները գերիշխող դիրք ունեցող են համարվում՝ հաշվի առնելով տվյալ ապրանքային շուկայի կառուցվածքի առանձնահատկություններն այդ շուկայում գործող տնտեսավարող սուբյեկտների բաժինների բաշխվածության վերաբերյալ:

4. Սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կամ 4-րդ կետով նախատեսված հիմքերից որևէ մեկով տնտեսավարող սուբյեկտը չի կարող համարվել գերիշխող դիրք ունեցող, եթե նա, որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով չի գերազանցում տվյալ շուկայի մեկ տասներորդը:

(...)

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արգելվում է տնտեսավարող սուբյեկտների կողմից մենաշնորհ կամ գերիշխող դիրքի (այսուհետ՝ գերիշխող դիրք) չարաշահումը:

Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 5-րդ, 12-րդ, 13-րդ և 16-րդ կետերի համաձայն՝ գերիշխող դիրքի չարաշահում է համարվում՝

1) իրացման կամ ձեռքբերման չհիմնավորված կամ խտրական գների սահմանումը կամ կիրառումը կամ օրենսդրությանը հակասող առևտրի այլ պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրումը.

5) այլ տնտեսավարող սուբյեկտների կամ սպառողների նկատմամբ խտրական պայմանների (այդ թվում՝ գների) սահմանումը կամ կիրառումն այլ հավասար պայմաններում.

12) ապրանքի գնի չհիմնավորված բարձրացումը, իջեցումը կամ պահպանումը.

13) չհիմնավորված բարձր կամ չհիմնավորված ցածր գների սահմանումը և (կամ) կիրառումը.

16) այլ պայմանների կամ վարքագծի սահմանումը կամ կիրառումը, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը կամ արգելմանը:

Ընդ որում, Օրենքի 7-րդ և 8-րդ հոդվածները ՀՕ-205-Ն օրենքով փոփոխության չեն ենթարկվել:

Վերոգրյալ նորմերի հիման վրա Հանձնաժողովն արձանագրում է, որ գերիշխող դիրքի չարաշահման իրավախախտումն արձանագրելու համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը.

1. մենաշնորհ կամ գերիշխող դիրքի առկայությունը.

2. Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված դրսևորումներից առնվազն մեկի առկայությունը:

<u>Երկրորդ հարցադրման կապակցությամբ.</u>

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի համաձայն՝ խտրական պայմանները ապրանքային շուկա մուտք գործելու, արտադրության, փոխանակման, սպառման, իրացման կամ ապրանքի այլ կերպ փոխանցման պայմաններն են, այդ թվում՝ ապրանքի գինը, որոնք տնտեսավարող սուբյեկտի կամ սպառողի համար ստեղծում են անհավասար պայմաններ կամ անհավասար դրություն այլ տնտեսավարող սուբյեկտի կամ սպառողի համեմատությամբ:

Վերոնշյալ հարցին պատասխանելու համար էական նշանակություն ունի խտրական բառի բովանդակության բացահայտումը սահմանադրաիրավական կարգավորումների տեսանկյունից:

Սահմանադրության՝ «Օրենքի առջև ընդհանուր հավասարությունը» վերտառությամբ 28-րդ հոդվածի համաձայն՝ բոլորը հավասար են օրենքի առջև: Միաժամանակ, Սահմանադրության 29-րդ հոդվածը, ամրագրելով խտրականության արգելքի սկզբունքը, մասնավորապես, սահմանում է, որ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Սահմանադրական դատարանը 2021 թվականի փետրվարի 19-ի ՍԴՈ-1577 որոշմամբ, քննարկելով խտրական պայմանների սահմանման հարցը, նշել է, որ օրենքի առջև ընդհանուր հավասարության սահմանադրական սկզբունքը երաշխավորում է միևնույն խմբի (կատեգորիայի) սուբյեկտների նկատմամբ հավասար իրավունքների և պարտականությունների օրենսդրական ամրագրում և չի բացառում օբյեկտիվ հիմքերով առանձնացված զանազան խմբերին (կատեգորիաներին) պատկանող անձանց նկատմամբ տարբերվող վերաբերմունքի ամրագրումը: Հիշյալ սահմանադրական սկզբունքը կարող է խաթարվել միայն հավասար իրավական կարգավիճակ ունեցող և հավասար իրավական դաշտում գործող սուբյեկտների նկատմամբ իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում տարբերակված մոտեցում ցուցաբերելու դեպքում, որը կարտահայտվի նրանցից մեկին կամ մի քանիսին որևէ ողջամիտ իրավական հիմնավորում չունեցող արտոնության կամ բարենպաստ վերաբերմունքի տրամադրմամբ:

Այս համատեքստում հատկանշական է, որ Սահմանադրական դատարանը իր մի շարք որոշումներով իրավական դիրքորոշումներ է արտահայտել խտրականության արգելքի սկզբունքի վերաբերյալ (ՍԴՈ-732, ՍԴՈ-967, ՍԴՈ-1475): Մասնավորապես, խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է օբյեկտիվ և

ողջամիտ տարբերությունների հիմքով առանձին խումբ սուբյեկտների համար լրացուցիչ սահմանափակումների ու արգելքների սահմանումը, եթե դրանք հիմնավորված, հավասարակշռված և ողջամիտ են, չեն խաթարում սահմանադրորեն ամրագրված հիմնական իրավունքների էությունը:

Նշված ուղենիշային դիրքորոշումները տեղայնացնելով Օրենքով նախատեսված «խտրական պայման» հասկացության բացահայտման շրջանակում, կարող ենք արձանագրել, որ խտրական պայմանի սահմանում կամ կիրառում է համարվում տնտեսավարող սուբյեկտի կողմից այնպիսի պայմանների սահմանումը կամ կիրառումը, որոնք առանձին խումբ սուբյեկտների համար լրացուցիչ սահմանափակումներ ու արգելքներ են նախատեսում, ստեղծում են անհավասար պայմաններ կամ անհավասար դրություն այլ տնտեսավարող սուբյեկտի համեմատությամբ և եթե նման սահմանափակումների առաջացումը կամ անհավասար դրությունը հիմնավորված և ողջամիտ չէ:

<u>Երրորդ հարցադրման կապակցությամբ.</u>

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝

1. Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ)վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) անձը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ վարչական մարմնի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ վարչական մարմնի վրա:

3. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-2-րդ մասերի համաձայն՝

1. Կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: Կողմն իրավունք չունի ներկայացնելու այնպիսի ապացույցներ, որոնք չեն ներկայացվել վարչական վարույթի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմը չի ներկայացնում բավարար հիմնավորումներ այն մասին, որ

օբյեկտիվորեն զրկված է եղել նշված ապացույցները վարչական վարույթի ընթացքում ներկայացնելու հնարավորությունից:

2. Վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները, բացառությամբ այն ապացույցների, որոնց վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես հակառակ կողմի միջոցով, և որոնք հակառակ կողմը չի ներկայացրել վարչական վարույթի ընթացքում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2.1-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշելիս վիճարկող կողմի՝ իր համար բարենպաստ հետևանքներ առաջացնող ապացույցների՝ վարչական վարույթի ընթացքում չտրամադրման հետևանքով առաջացած ոչ բարենպաստ հետևանքների ապացուցման բեռը չի կարող դրվել վարչական մարմնի վրա:

Վերոնշյալ նորմերից հետևում է, որ անձի համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունը կրում է անձը: Ընդ որում, այն դեպքում, երբ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքները հերքող բարենպաստ փաստական հանգամանքների վերաբերյալ վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա այդ փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը դրվում է նրա վրա:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ վարչական մարմնի հետ փոխհարաբերություններում իր համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունն անձը կարող է կատարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված ապացույցներ ներկայացնելու միջոցով: Ընդ որում, այն դեպքում, երբ անձը վարչական վարույթի ընթացքում չի ներկայացում իր օգտին առկա բարենպաստ փաստական հանգամանքների վերաբերյալ ապացույցներ, զրկվում է դրանք նույնիսկ դատական վարույթում ներկայացնելու հնարավորությունից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ներկայացնում է բավարար հիմնավորումներ այն մասին, որ օբյեկտիվորեն զրկված է եղել նշված ապացույցները վարչական վարույթի ընթացքում ներկայացնելու հնարավորությունից:

Օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովը վարչական վարույթն իրականացնում է Հանձնաժողովի գործունեության ընդհանուր կանոնների համաձայն՝ այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն օրենքով, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Հանձնաժողովի կողմից իրականացվող վարչական վարույթի համար սույն օրենքով առանձնահատկություններ սահմանված չլինելու դեպքում համապատասխան հարաբերությունների նկատմամբ կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթները:

Նման պայմաններում ակնհայտ է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված բարենպաստ փաստական հանգամանքների ապացուցման պարտականության վերաբերյալ կարգավորումները հավասարապես կիրառելի են տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթով պատասխանողի առնչությամբ, քանի որ այդ կապակցությամբ Օրենքը առանձնահատկություններ չի սահմանել:

Չորրորդ հարցադրման կապակցությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 55-րդ հոդվածի համաձայն՝

1. Գրավոր վարչական ակտին ներկայացվում են հետևյալ պահանջները.

ա) վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում.

բ) վարչական ակտը պետք է կազմված լինի սահմանված ձևի և նմուշի թղթի վրա:

2. Վարչական ակտը, որպես կանոն, պետք է տեղեկություններ պարունակի նաև այն ծախսերի և դրանք կրողների վերաբերյալ, որոնք կատարվել են ակտի ընդունման կապակցությամբ: Ծախսերը վերադարձնելու հետ կապված ակտ ընդունելու դեպքում պետք է նշվեն վերադարձման ենթակա գումարը և վերադարձման կարգն ու պայմանները:

3. Վարչական ակտը կարող է ունենալ ներդիրներ, հավելվածներ կամ լրացուցիչ այլ փաստաթղթեր, որոնց գործողությունը չի կարող գերազանցել վարչական ակտի գործողության ժամկետը: Ներդիրները, հավելվածները և լրացուցիչ այլ փաստաթղթերը ինքնուրույն վարչական ակտեր չեն, դրանք վարչական ակտի բաղկացուցիչ մասն են և գործում են այնքանով, որքանով գործում է բուն վարչական ակտը:

4. Վարչական ակտը պետք է պարունակի՝

ա) վարույթն իրականացրած վարչական մարմնի լրիվ անվանումը.

բ) վարչական ակտի հասցեատիրոջ անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը.

գ) ակտի լրիվ անվանումը, դրա ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը և համարը.

դ) ակտով լուծվող հարցի նկարագրությունը (նկարագրական մաս).

ե) ակտի ընդունման հիմնավորումը (պատճառաբանական մաս).

զ) ընդունված որոշման շարադրանքը (եզրափակիչ մաս).

է) ակտի գործողության ժամկետը, եթե ակտն ընդունվում է որոշակի ժամկետով.

ը) ակտի բողոքարկման ժամկետը և մարմինը, ներառյալ՝ դատարանը, որին կարող է այդ ակտը բողոքարկվել.

թ) ակտն ընդունող վարչական մարմնի պաշտոնատար անձի պաշտոնը, անունը և ազգանունը, նրա ստորագրությունը.

ժ) ակտն ընդունած վարչական մարմնի պաշտոնական կնիքը:

5. Միանման հարց կարգավորող վարչական ակտը կարող է ունենալ միասնական նմուշի ձև (ձևաթուղթ):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 57-րդ հոդվածի համաձայն՝

1. Գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը:

Վարչական մարմնի հայեցողական լիազորությունների իրականացման արդյունքում ընդունված վարչական ակտի հիմնավորումից պետք է պարզ լինեն այն նկատառումները, որոնց հիման վրա վարչական մարմինն ընտրել է տվյալ լուծումը:

2. Հիմնավորում չի պահանջվում, եթե՝

ա) վարչական մարմինը բավարարում է որևէ դիմում, և վարչական ակտը չի շոշափում երրորդ անձանց իրավունքները.

բ) ակտի հասցեատիրոջը կամ այն անձին, ում շահերը վարչական ակտը շոշափում է, արդեն հայտնի է վարչական մարմնի դիրքորոշումը փաստական կամ իրավական հետևանքների վերաբերյալ, կամ այդ դիրքորոշումն ակնհայտորեն բխում է ակտի տեքստից.

գ) վարչական մարմինը նույնանման վարչական ակտեր է հրապարակում մեծ քանակությամբ կամ վարչական ակտերը հրատարակում է տեխնիկական միջոցների օգտագործմամբ, և յուրաքանչյուր առանձին դեպքում հիմնավորելու անհրաժեշտություն չկա:

3. Արգելվում է վարչական մարմնի ընդունած վարչական ակտերի հիմնավորումն այն փաստարկներով, որոնք չեն առնչվում տվյալ մարմնի իրավասությանը:

Եվրոպական դատարանը, անդրադառնալով դատական ակտերի պատճառաբանվածությանը՝ որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մաս, արձանագրել է, որ դատարանները պարտավորվում են իրենց որոշումները պատճառաբանել, սակայն դա չի կարող ընկալվել որպես յուրաքանչյուր փաստարկի մասով մանրակրկիտ պատասխան ներկայացնելու պահանջ: Պատճառաբանելու պարտականության ծավալը կարող է տարբեր լինել՝ կախված որոշման բնույթից և կարող է որոշվել միայն գործի հանգամանքների լույսի ներքո. անհրաժեշտ է հաշվի առնել, inter alia, այն բազմազան գրավոր փաստարկները, որոնք դատարաններում կարող է ներկայացնել դատավարության մասնակիցը, (...) (տե՛ս, Van de Hurk v. the Netherlands գործով Եվրոպական դատարանի 19.04.1994 թվականի վճիռը, կետ 61, Hiro Balani v. Spain գործով Եվրոպական դատարանի 09.12.1994 թվականի վճիռը, կետ 27):

Նույնաբովանդակ դիրքորոշում արտահայտել է նաև Վճռաբեկ դատարանը՝ արձանագրելով, որ արդար դատաքննության իրավունքը չի կարող ընկալվել որպես պահանջ՝ մանրամասնորեն պատասխանելու կողմերի բարձրացրած բոլոր

փաստարկներին (տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/0531/05/16 վարչական գործով 2021 թվականի հոկտեմբերի 29-ի և թիվ ՎԴ5/0173/05/18 վարչական գործով 2021 թվականի նոյեմբերի 19-ի որոշումները):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ վարչական ակտ կայացնելիս տնտեսավարող սուբյեկտի ոչ էական փաստարկներին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է: Ըստ այդմ, սույն գործի շրջանակում առանձին քննարկման առարկա չդարձված Վարույթով պատասխանողի փաստարկները Հանձնաժողովի կողմից գնահատվել են այդ տրամաբանությամբ:

<u>Վերոշարադրյալ դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.</u>

Սույն գործի փաստերի համաձայն.

1. «Տոչ-մաստեր», «Սմարթ սոլուշնս», «ՀԴՄ շտրիխ», «Մերի-Քրիստ», «Իննթեք», «Տերմինալ սերվ» և «Քյու տերմինալ» ընկերությունները հանդիսանում են Անձանց խումբ,

2. Անձանց խումբը Ապրանքային շուկայում ունի գերիշխող դիրք,

3. Անձանց խումբը 2024 թվականին և 2025 թվականի հունվարից մայիսը ներառող ժամանակահատվածում ՀԴՄ սպասարկման ծառայության մատուցման շրջանակում սահմանել և կիրառել է խտրական գներ:

4. Անձանց խմբի կողմից ՀԴՄ սպասարկման ծառայության մատուցման շրջանակում 2025 թվականի հունվարից մայիսը ներառող ժամանակահատվածում միջին ամսական շահութաբերությունը շուրջ անգամ (շուրջ տոկոսով) գերազանցել է 2024 թվականի միջին ամսական շահութաբերությունը:

Նման պայմաններում էական է պարզել հետևյալ հարցադրումները.

1. Արդյո՞ք Անձանց խմբի կողմից ՀԴՄ սպասարկման ծառայության մատուցման շրջանակում տարբեր գների սահմանումն ու կիրառումը ունի օբյեկտիվ և պատճառաբանված հիմք:

2. Արդյո՞ք Անձանց խմբի կողմից ՀԴՄ սպասարկման շրջանակում 2024 թվականի նոյեմբերից մինչև 2025 թվականի մայիսը ներառող ժամանակահատվածում սահմանվել և կիրառվել են չհիմնավորված բարձր գներ:

<u>Առաջին հարցադրման կապակցությամբ.</u>

Թիվ ՀԳ-05644/24 վարույթի շրջանակում ՀԴՄ սպասարկման ծառայությունների մատուցման ամսական վճարների բարձրացման պատճառները բացահայտելու նպատակով ի թիվս այլնի՝ ուսումնասիրվել են «Տոչ-մաստեր», «ՀԴՄ շտրիխ», «Սմարթ սոլուշնս», «Մերի-Քրիստ», «Իննթեք», «Տերմինալ սերվ» և «Քյու տերմինալ» ընկերությունների կողմից ՀԴՄ սպասարկման ծառայությունների մատուցման նպատակով կնքված պայմանագրերը:

Ընկերությունները Հանձնաժողովի կողմից պահանջված՝ ՀԴՄ սպասարկման ծառայությունների մատուցման նպատակով կնքված պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունն ամբողջ ծավալով չեն ներկայացրել՝ մատնանշելով դրանց մեծածավալ լինելու հիմքով տրամադրելու անհնարինությունը: Ընդ որում, Ընկերությունները

մանրամասնել են, որ ներկայացված տեղեկատվությունն, ըստ էության, բավարար է Հանձնաժողովի կողմից Վարույթի իրականացման համար, որպիսի պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ պայմանագրերի վերաբերյալ ներկայացված տեղեկատվության ուսումնասիրության արդյուքները տարածելի են նաև մյուս պայմանագրերի վրա: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է նաև, որ նույն ծառայությունների մատուցման դիմաց Ընկերությունների կողմից տարբեր տնտեսավարող սուբյեկտների հետ կնքվել են տարբեր արժեքներով պայմանագրեր՝ առանց հստակ չափորոշիչներ սահմանելու:

Ստորև ներկայացված են նույնական ծառայությունների առնչությամբ տարբեր գներով կնքված պայմանագրերի օրինակներ

«Տոչ-մաստեր» ընկերության կողմից Հանձնաժողովին ներկայացված պայմանագրերի վերաբերյալ տվյալների ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ՝

Միաժամանակ, համաձայն ՊԵԿ էլեկտրոնային հարթակներից հատուկ տեխնիկածրագրային ուղիների միջոցով ձեռք բերված տեղեկատվության՝ 2025 թվականի հունվարից մայիսը ներառող ժամանակահատվածում «Տոչ-մաստեր» ընկերության կողմից ՀԴՄ սպասարկումն իրականացվել է նաև դրամ և դրամ ամսական վճարներով:

«Տոչ-մաստեր» ընկերության կողմից Հանձնաժողովին ներկայացված՝ 2025 թվականին կնքված պայմանագրերի «Պայմանագրի գին և վճարման կարգը» բաժնում ավելացել է 3.7 կետը, ըստ որի՝

«ՀԴՄ շտրիխ» ընկերության կողմից Հանձնաժողովին ներկայացված պայմանագրերի վերաբերյալ տվյալների ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ՝

Միաժամանակ, համաձայն ՊԵԿ էլեկտրոնային հարթակներից հատուկ տեխնիկածրագրային ուղիների միջոցով ձեռք բերված տեղեկատվության՝ 2025 թվականի հունվարից մայիսը ներառող ժամանակահատվածում «ՀԴՄ շտրիխ» ընկերության կողմից ՀԴՄ սպասարկումն իրականացվել է նաև դրամ և դրամ ամսական վճարներով:

«Սմարթ սոլուշնս» ընկերության կողմից Հանձնաժողովին ներկայացված պայմանագրերի վերաբերյալ տվյալների ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ՝

Միաժամանակ, համաձայն ՊԵԿ էլեկտրոնային հարթակներից հատուկ տեխնիկածրագրային ուղիների միջոցով ձեռք բերված տեղեկատվության՝ 2025 թվականի հունվարից մայիսը ներառող ժամանակահատվածում «Սմարթ սոլուշնս» ընկերության

կողմից ՀԴՄ սպասարկումն իրականացվել է նաև դրամ և դրամ ամսական վճարներով:

Ինչպես նաև, «Սմարթ սոլուշնս» ընկերության կողմից Հանձնաժողովին ներկայացված 2025 թվականին կնքված պայմանագրերի «Պայմանագրի գին և վճարման կարգը» բաժնում ավելացել է 4.8 կետը, ըստ որի՝

«Մերի-Քրիստ» ընկերության կողմից Հանձնաժողովին ներկայացված պայմանագրերի վերաբերյալ տվյալների ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ՝

Միաժամանակ, համաձայն ՊԵԿ էլեկտրոնային հարթակներից հատուկ տեխնիկածրագրային ուղիների միջոցով ձեռք բերված տեղեկատվության՝ 2025 թվականի հունվարից մայիսը ներառող ժամանակահատվածում «Մերի-Քրիստ» ընկերության կողմից ՀԴՄ սպասարկումն իրականացվել է նաև դրամ և դրամ ամսական վճարներով:

«Իննթեք» ընկերության կողմից Հանձնաժողովին ներկայացված պայմանագրերի վերաբերյալ տվյալների ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ՝

Միաժամանակ, համաձայն ՊԵԿ էլեկտրոնային հարթակներից հատուկ տեխնիկածրագրային ուղիների միջոցով ձեռք բերված տեղեկատվության՝ 2025 թվականի հունվարից մայիսը ներառող ժամանակահատվածում «Իննթեք» ընկերության կողմից ՀԴՄ սպասարկումն իրականացվել է նաև դրամ և դրամ ամսական վճարներով:

Բացի այդ, «Իննթեք» ընկերության կողմից Հանձնաժողովին ներկայացված՝ 2024 թվականի հոկտեմբեր ամսից կնքված պայմանագրերի «Պայմանագրի գինը, վճարման կարգը և ժամկետները» բաժնում ավելացել է 3.4 կետը, ըստ որի՝

«Տերմինալ սերվ» ընկերության կողմից Հանձնաժողովին ներկայացված պայմանագրերի վերաբերյալ տվյալների ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ՝

Միաժամանակ, համաձայն ՊԵԿ էլեկտրոնային հարթակներից հատուկ տեխնիկածրագրային ուղիների միջոցով ձեռք բերված տեղեկատվության՝ 2025 թվականի հունվարից ապրիլը ներառող ժամանակահատվածում «Տերմինալ սերվ» ընկերության կողմից ՀԴՄ սպասարկումն իրականացվել է նաև դրամ և դրամ ամսական վճարներով:

«Տերմինալ սերվ» ընկերության կողմից Հանձնաժողովին ներկայացված՝ 2024 թվականի հոկտեմբեր ամսից կնքված պայմանագրերի «Պայմանագրի գինը, վճարման կարգը և ժամկետները» բաժնում ավելացել է 3.4 կետը, ըստ որի՝

«Քյու տերմինալ» ընկերության կողմից Հանձնաժողովին ներկայացված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ 2025 թվականի հունվարից մայիսը ներառող ժամանակահատվածում բոլոր պայմանագրերը կնքվել են դրամ ամսական վճարներով:

Միաժամանակ, համաձայն ՊԵԿ էլեկտրոնային հարթակներից հատուկ տեխնիկածրագրային ուղիների միջոցով ձեռք բերված տեղեկատվության՝ 2025 թվականի հունվարից մայիսն ընկած ժամանակահատվածում «Քյու տերմինալ» ընկերության կողմից ՀԴՄ սպասարկումն իրականացվել է նաև դրամ և դրամ ամսական վճարներով:

«Քյու տերմինալ» ընկերության կողմից Հանձնաժողովին ներկայացված պայմանագրերի «Պայմանագրի գինը, վճարման կարգը և ժամկետները» բաժնում առկա է 3.4 կետը, ըստ որի՝

Այսպիսով, ելնելով վերոգրյալից՝ ստացվում է, որ համաձայն Ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվության՝ 2024 թվականի հուլիսի 1-ից 2025 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում ՀԴՄ սպասարկումն իրականացվել է հիմնականում դրամով, որոշ դեպքերում՝ դրամով, դրամով և դրամով, մինչդեռ, ՊԵԿ էլեկտրոնային հարթակներից հատուկ տեխնիկածրագրային ուղիների միջոցով ձեռք բերված տեղեկատվության վերլուծությունից պարզվել է, որ նույն ժամանակահատվածում Ընկերությունները շարունակել են ՀԴՄ սպասարկման ծառայություններ մատուցվել նաև դրամ և դրամ ամսական վճարներով:

Նման պայմաններում հաշվի առնելով այն հանգամանքները, որ

1. Ընկերությունների կողմից Հանձնաժողովին ներկայացված տարբեր գնային կատեգորիաների համար կնքված պայմանագրերում ներկայացված ծառայությունները նույնական են,

2. քննարկված բոլոր գնային կատեգորիաների շրջանակում դուրս գրված հաշիվ-ապրանքագրերում ապրանքատեսակն, ըստ էության, ներկայացված է որպես ՀԴՄ սպասարկման ծառայություն,

3. Ընկերությունները սույն վարույթի ընթացքում, այդ թվում՝ Տեղեկանքը ստանալուց հետո քննարկված բոլոր գնային կատեգորիաների շրջանակում միևնույն ծառայության մատուցման առնչությամբ առարկություններ չեն ներկայացրել՝

Հանձնաժողովը գտնում է, որ ներկայացված բոլոր գնային կատեգորիաների շրջանակում մատուցվել են ՀԴՄ սպասարկման միևնույն ծառայությունները, որպիսի պայմաններում ստացվում է, որ Ընկերությունները 2024 թվականի նոյեմբերից մինչև 2025 թվականի մայիսը ներառող ժամանակահատվածում ՀԴՄ սպասարկման շրջանակում սահմանել և կիրառել են խտրական գներ:

<u>Երկրորդ հարցադրման կապակցությամբ.</u>

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի համաձայն՝ գնի չհիմնավորված բարձրացումը տնտեսավարող սուբյեկտի կողմից որոշակի ժամանակահատվածում ապրանքի և (կամ) դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների գնի՝ տնտեսական պայմաններով (գործոններով) չպայմանավորված բարձրացումն է.

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի համաձայն՝ գնի չհիմնավորված պահպանումը տնտեսավարող սուբյեկտի կողմից որոշակի ժամանակահատվածում ապրանքի և (կամ) դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների գնի պահպանումն է այն դեպքում, երբ որոշակի տնտեսական պայմանների (գործոնների) առկայությունը կարող էր հանգեցնել կամ պետք է հանգեցներ ավելի ցածր կամ ավելի բարձր գնի սահմանման:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ չհիմնավորված բարձր գին է համարվում գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտի սահմանած՝ ապրանքի իրացման կամ ձեռքբերման այն գինը, որը միաժամանակ՝

1) բարձր է այդ ապրանքի արտադրության և իրացման համար անհրաժեշտ ծախսերի և շահույթի գումարից,

2) բարձր է այն գնից, որը ձևավորվել է մրցակցության պայմաններում այնպիսի ապրանքային շուկայում, որը համադրելի է՝ ըստ ապրանք ձեռք բերողների կամ իրացնողների կազմի, ապրանքաշրջանառության պայմանների, ապրանքային շուկայի հասանելիության պայմանների կամ պետական կարգավորման, այդ թվում՝ հարկման ու մաքսասակագնային կարգավորման (այսուհետ՝ համադրելի ապրանքային շուկա)՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս այդպիսի շուկայի առկայության դեպքում, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունները, համաձայն վերջիններիս կողմից ներկայացված պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվության՝ մինչև 2024 թվականի հուլիսը գործող պայմանագրերի շրջանակներում ՀԴՄ սպասարկման ծառայությունները մատուցել են հիմնականում դրամ և դրամ ամսավճարներով: 2024 թվականի հուլիսից հետո, համաձայն Ընկերությունների կողմից ներկայացված պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվության՝ ՀԴՄ սպասարկման ծառայությունները Ընկերությունների կողմից մատուցվել են հիմնականում դրամ ամսավճարով:

Հաշվի առնելով Ընկերությունների՝ անձանց խումբ հանդիսանալու, ինչպես նաև վերջիններիս կողմից ՀԴՄ սասարկման ծառայությունների համար բարձրացված վճարների համատեղ կիրառման հանգամանքը՝ Թիվ ՀԳ-05644/24 վարույթի շրջանակում ՀԴՄ սպասարկման ծառայությունների մատուցման ամսական վճարների բարձրացման պատճառները բացահայտելու նպատակով ուսումնասիրվել են նաև Ընկերությունների կողմից մեկ միավոր ՀԴՄ-ի սպասարկման ծախսերը և տվյալ գործունեության շահութաբերությունը (տե՛ս աղյուսակներ 3 և 4) 2024 թվականի և 2025 թվականի հունվարից մայիսը ներառող ժամանակահատվածի կտրվածքով: Տվյալ դեպքում որպես համադրելի ապրանքային շուկա է դիտարկվել Ապրանքային շուկան նախորդ ժամանակահատվածում՝ 2024 թվականին:

Աղյուսակ 3

2024 թվականին և 2025 թվականի հունվարի 1-ից մինչև մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածի Անձանց խմբի կողմից սպասարկված ՀԴՄ-ների մասով միջին ամսական ծախսերի մասին

Աղյուսակ 3-ի վերլուծությունից պարզ է դառնում, որ 2024 թվականի և 2025 թվականի հունվարից մինչև մայիսն ընկած ժամանակահատվածում Անձանց խմբի կողմից ՀԴՄ

սպասարկման մասով կատարված ծախսերի մեջ գերակշիռ մաս են կազմում ՀԴՄ սպասարկման հետ կապված աշխատակիցների հատուցումների գծով ծախսերը (աշխատավարձի ֆոնդը): Մասնավորապես.

1. 2024 թվականին այդ ծախսերը միջին ամսական կտրվածքով կազմել են տոկոս, իսկ 2025 թվականի հունվարի մինչև մայիսն ընկած ժամանակահատվածում՝ տոկոս:

2. ՀԴՄ սպասարկման հետ կապված աշխատակիցների հատկացումների գծով ծախսերը 2025 թվականի միջին ամսական կտրվածքով մոտ տոկոսով աճել է 2024 թվականի միջին ամսական ծախսի նկատմամբ:

3. 2025 թվականի հունվարի մայիսն ընկած ժամանակահատվածի հաշվառմամբ միջին ամսական ընդհանուր ծախսը 2024 թվականի միջին ամսական ծախսի համեմատ դրամային արտահայտությամբ աճել է դրամով:

4. ՀԴՄ սպասարկման հետ կապված աշխատակիցների հատուցումների գծով ծախսը՝ դրամով՝ ապահովելով ՀԴՄ սպասարկման մասով իրականացված ընդհանուր ծախսերի աճի շուրջ տոկոսը:

Այսինքն, կարող ենք փաստել, որ 2025 թվականի հունվարի մայիսն ընկած ժամանակահատվածում ՀԴՄ սպասարկման գծով իրականացված ընդհանուր ծախսերը մեծապես աճել են հենց ՀԴՄ սպասարկման հետ կապված աշխատակիցների հատուցումների գծով ծախսերի աճի հաշվին:

Աղյուսակ 4

2024 թվականին և 2025 թվականի հունվարի 1-ից մինչև մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածի Անձանց խմբի կողմից սպասարկված ՀԴՄ-ների քանակի և միավոր ՀԴՄ սպասարկման շահութաբերության մասին

Աղյուսակ 4-ի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2024 թվականին միավոր ՀԴՄ սպասարկման մասով 2025 թվականի հունվարի մինչև մայիսը ներառյալ կտրվածքով թե՛ միջին ծախսը, թե՛ միջին հասույթը ավելացել են 2024 թվականի միջին ամսական ցուցանիշների համեմատ: Մասնավորապես, 2025 թվականի հունվարի մինչև մայիսը

ներառյալ միավոր ՀԴՄ սպասարկման միջին ծախսն ավելացել է շուրջ %-ով, իսկ հասույթը՝ տոկոսով: Նշված փոփոխությունների արդյունքում Անձանց խմբի կողմից միավոր ՀԴՄ սպասարկման շահութաբերությունը 2025 թվականի հունվարից մայիսը ներառող ժամանակահատվածում շուրջ անգամ (տոկոսով) գերազանցել է 2024 թվականի շահութաբերությանը:

Այսպիսով ստացվում է, որ թեև 2025 թվականի ուսումնասիրվող ժամանակահատվածում Անձանց խումբն ունեցել է ՀԴՄ սպասարկման գծով ծախսերի որոշակի աճ, այնուամենայնիվ նույն ժամանակահատվածում նշված գործունեությունից ստացված հասույթն ավելացել է այնքան, որ ՀԴՄ սպասարկման գործունեությունը Անձանց խմբի համար դարձել է շուրջ անգամ ավելի շահութաբեր:

Նման պայմաններում էական է ընդգծել այն հանգամանքը, որ Անձանց խումբը ՀԴՄ սպասարկման գործունեությունը 2024 թվականի նոյեմբեր, դեկտեմբերի ամիսներին, ինչպես նաև 2025 թվականի մայիսին իրականացրել է թվով , իսկ 2025 թվականի հունվարից ապրիլը ներառող ժամանակահատվածում՝ թվով տնտեսավարող սուբյեկտների միջոցով: Մինչդեռ, եթե համապատասխանաբար թվով և սուբյեկտներից կազմված Անձանց խմբի փոխարեն գործեր մեկ տնտեսավարող սուբյետ, ապա Անձանց խմբի համատեղ ծախսային կառուցվածքում առկա մի շարք ծախսատեսակներ առավել փոքր գումար կկազմեին:

Վերը նկարագրված հանգամանքների հաշվառմամբ՝ Հանձնաժողովը գտնում է, որ վերոնշյալ հանգամանքների համակողմանի վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ 2025 թվականի հունվարից մայիսը ներառող ժամանակահատվածում Անձանց խմբի կողմից սահմանված և կիրառված՝ ՀԴՄ սպասարկման վճարները համահունչ չեն եղել ծախսային փոփոխություններին, շահութաբերությունն աճել է շուրջ տոկսով (անգամ), ուստի 2025 թվականի հունվարից մինչև մայիսը ներառող ժամանակահատվածում Անձանց խմբի կողմից սահմանվել և կիրառվել են չհիմնավորված բարձր գներ: Ընդ որում, էական է ընդգծել այն հանգամանքը, որ սույն վարույթի շրջանակում Անձանց խմբի կողմից 2024 թվականին ՀԴՄ սպարկման ծառայության միջին ամսական շահութաբերությունը գնահատվել է հունվարից դեկտեմբերը ներառող բոլոր ամիսների դիտարկմամբ: Այսինքն՝ 2024 թվականին ՀԴՄ սպարկման ծառայության միջին ամսական շահութաբերության հաշվարկման համար հիմք հանդիսացող հասույթի մեծությունը նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին արդեն իսկ ներառել է հիմնականում դրամով սպասարկման արդյունքում ստացված ավելի մեծ հասույթը, ինչն բարձրացրել է 2024 թվականի միջին ամսական շահութաբերությունը, որպիսի պայմաններում ակնհայտ է դառնում, որ 2025 թվականի հունվարից մինչև մայիսը ներառող ժամանակահատվածի միջին ամսական շահութաբերության իրական աճը եղել է ավելին, քան տոկոսը:

Մյուս կողմից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀԴՄ սպասարկման ծառայությունները հիմնականում դրամով մատուցվել են նաև 2024 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին, միևնույն ժամանակ 2024 թվականի՝ Անձանց խմբի

կողմից ՀԴՄ սապսարկման միջին ամսական ծախսը չի գերազանցել 2025 թվականի հունվարից մինչև մայիսը ներառող ժամանակահատվածի միջին ամսական ծախսը, ակնհայտ է դառնում, որ Անձանց խմբի կողմից 2024 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին ևս ՀԴՄ սապսարկման ծառայության մատուցման շրջանակում սահմանվել և կիրառվել են չհիմնավորված բարձր գներ:

Ընդ որում, ՀԴՄ սպասարկման ծառայությունները բարձր գներով մատուցելու վարքագիծն Ընկերությունների մոտ սկսել է դրսևորվել դեռևս 2024 թվականի հուլիսից: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված վարքագիծը (դրամից, դրամից դրամ սահմանել և կիրառելը) շարունակվել է նաև 2024 թվականի նոյեմբերի 1-ից հետո, ստացվում է, որ այդ մասով Անձանց խմբի կողմից իրականացվել է ՀԴՄ սպասարկման ծառայությունների մատուցման գների չհիմնավորված բարձրացում:

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը գտնում է, որ գերիշխող դիրքի չարաշահման առկայության համար անհրաժեշտ պայմանները սույն վարույթով հիմնավորվում են, մասնավորապես 2024 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի մայիսի 31-ը ներառող ժամանակահատվածում Անձանց խմբի կողմից սահմանվել և կիրառվել են չհիմնավորված բարձր, խտրական գներ, ինչը հանգեցրել է գերիշխող դիրքի՝ Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 13-րդ կետերով սահմանված չարաշահման, որի կապակցությամբ օրենսդրությամբ նախատեսված է իրավական հետևանք՝ պատասխանատվության միջոցի կիրառում:

Միաժամանակ, հաշվի առնելով «Տոչ-մաստեր», «Իննթեք», «ՀԴՄ շտրիխ», «Տերմինալ սերվ», «Մերի-Քրիստ», «Քյու տերմինալ» և «Սմարթ սոլուշնս» ընկերությունների անձանց խումբ հանդիսանալու հանգամանքը՝ Հանձնաժողովն արձանագրում է, վերջիններիս միջև հակամրցակցային համաձայնությունների առկայությունը բացառվում է, որպիսի պայմաններում Թիվ ՀԳ-05644/24 վարույթը Ընկերությունների կողմից հակամրցակցային համաձայնության մասով ենթակա է կարճման:

<u>2) Անձանց խմբի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու հարցի կապակցությամբ.</u>

Օրենքի 92-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գերիշխող դիրքի չարաշահման համար նշանակվող տուգանքի չափը կազմում է իրավախախտում թույլ տված տնտեսավարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև 10 տոկոսը:

Օրենքի 93-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափը կազմում է իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12

ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի նկատմամբ սույն հոդվածում նախատեսված տոկոսը:

Օրենքի 93-րդ հոդվածի 14-րդ կետի համաձայն՝ անձանց խմբի կողմից օրենքի խախտման համար սույն հոդվածով նախատեսված տուգանքը նշանակվում է այն տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ, որոնք իրենց գործողությամբ կամ վարքագծով մասնակցություն են ունեցել իրավախախտմանը կամ իրավախախտման հետևանքով ստացել են կամ կարող էին ստանալ շահույթ կամ առավելություն կամ հայտնվել են առավել բարենպաստ պայմաններում, և տուգանքը հաշվարկվում է այդ տնտեսավարող սուբյեկտների հասույթների ընդհանուր գումարից:

Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը սահմանում է պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը:

Հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 22-ի «Պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանելու և Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի 395-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 566-Ն որոշման (այսուհետ նաև՝ **Թիվ 566-Ն որոշում**) 4-րդ կետի համաձայն՝ մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը հարուցված և իրականացվող վարույթների շրջանակներում պատասխանատվության միջոցի ընտրությունն ու տուգանքի հաշվարկումն իրականացվում են մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը գործող մեթոդաբանությամբ՝ բացառությամբ սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտումների վերաբերյալ վարույթների, որոնց շրջանակում պատասխանատվության միջոցի ընտրությունն ու տուգանքի հաշվարկումն իրականացվում են սույն որոշմամբ սահմանված մեթոդաբանությամբ:

Հաշվի առնելով, որ Վարույթը հարուցվել է մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը, սույն Վարույթի նկատմամբ կիրառելի է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2021

թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 395-Ն որոշմամբ սահմանված մեթոդաբանությունը (այսուհետ նաև՝ **Մեթոդաբանություն**):

Ընդ որում, Թիվ 566-Ն որոշմամբ հաստատված մեթոդաբանության և Մեթոդաբանություն դրույթների միջև տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթների մասով բովանդակային որևէ տարբերություն չկա:

Մեթոդաբանության 1-ին կետի համաձայն՝ պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը կարգավորում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված տնտեսական մրցակցության բնագավառում պատասխանատվության միջոցների ընտրության և տուգանքի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

Մեթոդաբանության 9-րդ կետի համաձայն՝ տուգանքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$S = Բ + Բ \times (Ծ - Մ)$$

Որտեղ՝

Տ-ն տուգանքի չափ,

Բ-ն տուգանքի բազային գումար,

Ծ-ն ծանրացնող բոլոր հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումար,

Մ-ն մեղմացնող բոլոր հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումար:

Մեթոդաբանության 11-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ տուգանքի բազային գումարը հաշվարկվում է առաջին խումբ իրավախախտումների դեպքում կիրառվող մեթոդով, որը վերաբերում է հետևյալ իրավախախտումներին.

ա. հակամրցակցային համաձայնության կնքումը (կայացումը, այդ համաձայնությանը մասնակցությունը).

բ. տնտեսական գործունեության արգելված համակարգումը.

գ. մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը.

դ. բանակցային ուժեղ դիրքի չարաշահումը.

ե. արգելված համակենտրոնացումը գործողության մեջ դնելը.

Մեթոդաբանության 12-րդ կետի համաձայն՝ Անձանց խմբի կողմից Օրենքի խախտման համար նախատեսված տուգանքը նշանակվում և հաշվարկվում է այն տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ, որոնք իրենց գործողությամբ կամ վարքագծով մասնակցություն են ունեցել իրավախախտմանը կամ իրավախախտման հետևանքով ստացել են կամ կարող էին ստանալ շահույթ կամ առավելություն կամ հայտնվել են առավել բարենպաստ պայմաններում:

Մեթոդաբանության 13-րդ կետի համաձայն՝ Անձանց խմբում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ նշանակվող տուգանքի բազային գումարի

հաշվարկման համար հիմք է ընդունվում տնտեսավարող սուբյեկտների ընդհանուր հասույթի կամ ապրանքի իրացումից ստացված հասույթի հանրագումարը, իսկ ծանրացնող և մեղմացնող հանգամանքների առկայության փաստի հաստատման համար հիմք է ընդունվում տնտեսավարող սուբյեկտներից առնվազն մեկի մոտ նշված հանգամանքների առկայության փաստի հաստատումը:

<u>Բազային գումարի հաշվարկը.</u>

Մեթոդաբանության 14-րդ կետի համաձայն՝ առաջին խումբ իրավախախտումների դեպքում կիրառվող տուգանքի բազային գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

Բ= Հ x Խ x Ժ

Որտեղ՝

Բ-ը տուգանքի բազային գումարն է.

Հ-ն ապրանքի իրացումից ստացված հասույթն է կամ ընդհանուր հասույթի կեսն է.

Խ-ն իրավախախտման համապատասխան ծանրության խմբի համար սահմանված տոկոսն է.

Ժ-ն իրավախախտման տևողության գործակիցն է:

Մեթոդաբանության 15-րդ կետի համաձայն՝ բազային գումարի հաշվարկման համար հիմք է ընդունվում ապրանքի իրացումից ստացված հասույթը:

Մեթոդաբանության 16-րդ կետի 3-րդ մասի համաձայն՝ բազային գումարի հաշվարկման համար ապրանքի իրացումից ստացված հասույթի փոխարեն հիմք է ընդունվում ընդհանուր հասույթը, եթե պետական մարմնից ստացված տեղեկատվության հիման վրա հնարավոր չէ գնահատել ապրանքի իրացումից ստացված հասույթը և տնտեսավարող սուբյեկտը չի ներկայացրել ապացույցներ ընդհանուր հասույթի, ապրանքի իրացումից ստացված հասույթի և դրանց գոյացման հիմքերի վերաբերյալ:

Ապրանքի իրացումից ստացված հասույթ.

Մեթոդաբանության 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ապրանքների իրացումից ստացված հասույթ է համարվում իրավախախտման առարկա հանդիսացող կամ իրավախախտման մեջ ներգրավված ապրանքների և դրանց փոխադարձ փոխարինելի ապրանքների իրացումից ստացված հասույթը:

Մեթոդաբանության 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ համապատասխան ժամանակահատվածը Հանձնաժողով կողմից վարույթ հարուցելու մասին որոշման ընդունման պահին դադարեցված իրավախախտումների դեպքում իրավախախտման դադարեցմանը նախորդող տարին է: Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու մասին որոշման ընդունման պահին չդադարեցված իրավախախտումների դեպքում՝ Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող տարին է: Իրավախախտման դադարեցման կամ վարույթ հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող տարում 12 ամբողջական ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում՝ իրավախախտման դադարեցման կամ վարույթ

հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող, բայց ոչ ավել քան 12 ամբողջական ամսվա գործունեության ժամանակահատվածն է:

Տվյալ պարագայում Հանձնաժողովն արձանագրում է, որ Թիվ ՀԳ-05644/24 վարույթը հարուցվել է 2024 թվականի դեկտեմբերի 3-ին, ինչպես նաև հարուցման պահին իրավախախտումը դադարեցված չի եղել: Միաժամանակ Հանձնաժողովը 2025 թվականի հուլիսի 22-ին ««Տոչ-մաստեր», «Իննթեք», «ՀԴՄ շտրիխ», «Տերմինալ սերվ», «Մերի-Քրիստ», «Սմարթ սոլուշնս» և «Քյու տերմինալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու և թիվ ՀԳ-05644/24 վարույթին միացնելու մասին» թիվ 481-Ա որոշմամբ հարուցել է թիվ ՀԳ-03560/25 վարույթը՝ Ընկերությունների կողմից թիվ ՀԳ-05644/24 վարույթով քննարկվող վարքագծի՝ 2024 թվականի դեկտեմբերից մինչև 2025 թվականի մայիսը ներառող ժամանակահատվածում ևս շարունակական լինելու հանգամանքով պայմանավորված, և միացրել է Թիվ ՀԳ-05644/24 վարույթին:

Այսպիսով, Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն վարույթի շրջանակում քննարկվել է ՀԴՄ սպասարկման ծառայության շրջանակում Անձանց խմբի կողմից վարված գնային քաղաքականությունը 2024 թվականի նոյեմբերից մինչև 2025 թվականի մայիսը ներառող ժամանակահատվածում, և նշված բոլոր ամիսների ընթացքում իրավախախտումն առկա է եղել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թիվ ՀԳ-03560/25 վարույթի հարուցման պահի դրությամբ քննարկվող իրավախախտումը դադարեցված չի եղել՝ Հանձնաժողովը սույն վարույթի շրջանակում տուգանքի հաշվարկման համար հիմք է ընդունում Անձանց խմբի կողմից 2024 թվականին ՀԴՄ սպասարկումից ստացված համախառն հասույթը, որը կազմել է դրամ

Իրավախախտման ծանրության խումբը.

Մեթոդաբանության 18-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ առանձնապես ծանր իրավախախտումներից է համապատասխան ապրանքային շուկայում մենաշնորհ կամ 50 և ավել տոկոս մասնաբաժին ունեցող տնտեսավարող սուբյեկտի կողմից գերիշխող դիրքի չարաշահումը, որոնց դեպքում կիրառվում է 8 տոկոս դրույքաչափ: Սույն գործով ծանրության խումբը պետք է հաշվարկել 8 տոկոս դրույքաչափով:

Իրավախախտման տևողությունը.

Մեթոդաբանության 19-րդ կետի համաձայն՝ Իրավախախտման տևողության գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Ժ = Ա/12$$

Որտեղ՝

Ժ-ն իրավախախտման տևողության գործակիցն է.

Ա-ն դիտարկվող ժամանակահատվածն է:

Մեթոդաբանության 20-րդ կետի համաձայն՝ եթե իրավախախտումը տևել է 12 ամսից պակաս, իրավախախտման տևողությունը հաշվարկվում է 1, իսկ եթե իրավախախտումը տևել է 60 ամսից ավել՝ տևողության գործակիցը հաշվարկվում է 5:

Մեթոդաբանության 24-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ իրավախախտման տևողությունը ներառում է.

2) Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու մասին որոշում ընդունելու պահին չդադարեցված իրավախախտումների դեպքում իրավախախտման տևողությունը ներառում է Հանձնաժողովի կողմից վարույթի ընթացքում հաստատված իրավախախտման առաջին գործողությունից մինչև վարույթ հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող ամիսը:

Վարույթի շրջանակում քննարկվող իրավախախտման սկզբնաժամկետն է 2024 թվականի նոյեմբեր 1-ը, իսկ ավարտը՝ 2025 թվականի մայիսի 31-ը:

Նման պայմաններում իրավախախտման մեջ ներգրավված ընկերությունների կողմից իրավախախտման ժամանակահատվածը չի գերազանցում 12 ամիս՝ հետևաբար, հիմք ընդունելով Մեթոդաբանության 20-րդ կետը՝ իրավախախտման տևողությունը հաշվարկվում է 1:

Վերոնշյալից բխում է, որ տուգանքի բազային գումարը հիմք ընդունելով Մեթոդաբանության 14-րդ կետը կազմում է դրամ՝ ըստ հետևյալ հաշվարկի.

Բ= Հ x Խ x Ժ= դրամ:

Պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքներ.

Մեթոդաբանության 43-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը դիտարկում ու վարչական ակտում արտացոլում է միայն այն ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, որոնք հաստատվել են համապատասխան վարույթի ընթացքում:

Մեթոդաբանության 44-րդ կետի համաձայն՝ մեղմացնող հանգամանքի առկայության ապացուցման բեռը կրում է վարույթով պատասխանողը:

Մեթոդաբանության 30-րդ և 40-րդ կետերով սահմանված են առաջին խումբ իրավախախտումների դեպքում պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև սահմանված են բազային գումարից ծանրացնող և մեղմացնող հանգամանքների հաշվարկման դրույքաչափերը:

Սույն գործով Հանձնաժողովի կողմից որպես որպես ծանրացնող և մեղմացնող որևէ հանգամանք չի հայտնաբերվել և չի հաստատվել:

<u>Տուգանքի հաշվարկը.</u>

Վերոշարադրյալից հետևում է, որ տուգանքի չափը կազմում է դրամ՝ համաձայն հետևյալ հաշվարկի.

S= Բ + Բ x (Ծ - Մ) = դրամ:

<u>Պատասխանատվության միջոցի համապատասխանեցումը.</u>

Մեթոդաբանության 50-րդ կետի համաձայն՝ պատասխանատվության միջոցի տեսակի ակնհայտ անհամապատասխանության կամ տուգանքի գումարի չափի փոքր

լինելու հիմքով ակնհայտ անհամաչափության դեպքում պատասխանատվության միջոցի կիրառման նպատակներին հասնելու համար Հանձնաժողովը իր նախաձեռնությամբ կարող է մեծացնել տուգանքի գումարի չափը՝ պահպանելով օրենսդրությամբ սահմանված տուգանքի առավելագույն չափը:

Նման պայմաններում Հանձնաժողովն էական է համարում ընդգծել հետևյալ հանգամանքները.

1. Անձանց խմբի կողմից 2024 թվականի նոյեմբերից մինչև 2025 թվականի մայիսը ներառող ժամանակահատվածում ամսական միջինում սպասարկվել է շուրջ ՀԴՄ,

2. մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը, համաձայն Ընկերությունների կողմից Հանձնաժողովին ներկայացված տեղեկատվության՝ վերջիններիս կողմից ՀԴՄ սպասարկման մասով մատուցված ծառայությունների շուրջ տոկոսի շրջանակում գործել է դրամ ամսական վճարը, իսկ շուրջ տոկոսի դեպքում՝ դրամ ամսական վճարը,

3. 2024 թվականի հուլիսի 1-ից հետո, համաձայն Ընկերությունների կողմից Հանձնաժողովին ներկայացված տեղեկատվության՝ վերջիններիս կողմից ՀԴՄ սպասարկման մասով մատուցված ծառայությունների շուրջ տոկոսի շրջանակում գործել է դրամ ամսական վճարը, տոկոսի շրջանակում՝ դրամ ամսական վճարը և տոկոսի շրջանակում՝ դրամ ամսական վճարը,

4. Ընկերությունները Հանձնաժողովի կողմից պահանջված՝ ՀԴՄ սպասարկման ծառայությունների մատուցման նպատակով կնքված պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունն ամբողջ ծավալով չեն ներկայացրել՝ նշելով, որ ներկայացված տեղեկատվությունը, ըստ էության, բավարար է Հանձնաժողովի կողմից Վարույթի իրականացման համար, որպիսի պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ ներկայացված տեղեկատվության ուսումնասիրության արդյուքները տարածելի են նաև մյուս պայմանագրերի մասով,

5. Ընկերությունների կողմից 2024 թվականին ստացված ընդհանուր հասույթը կազմել է դրամ:

Այսպիսով, 2024 թվականի նոյեմբերից մինչև 2025 թվականի մայիսը ներառող ժամանակահատվածում Անձանց խմբի կողմից ՀԴՄ սապսարկման ծառայության մատուցման շրջանակում չհիմնավորված բարձր գների սահմանման և կիրառման արդյունքում ամսական կտրվածքով ստացված հավելյալ հասույթի (այսուհետ՝ **Հավելյալ հասույթ**) մեծությունը գնահատելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ ուղենիշային հաշվարկը.

դրամ:

Ընդ որում, Անձանց խմբի՝ 2025 թվականի հունվարից մայիսն ընկած ժամանակահատվածում ՀԴՄ սպասարկան ծառայությունների մատուցման միջին ամսական շահութաբերությունը շուրջ տոկոսով (շուրջ անգամ) գերազանցել է 2024 թվականին Անձանց խմբի՝ ՀԴՄ սպասարկան ծառայությունների մատուցման միջին ամսական շահութաբերությունը:

Նման պայմաններում էական է ընդգծել, որ թեև վերը ներկայացված հաշվարկը իրականացված է միջինացված ցուցանիշների հիման վրա, այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ հաշվարկի արդյունքում ստացված մեծությունը ցույց է տալիս 1 ամսվա ընթացքում Անձանց խմբի կողմից ստացված Հավելյալ հասույթի մեծությունը, իսկ սույն վարույթով արձանագրված իրավախախտումը տևել է 7 ամիս՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ 7 ամիսների ընթացքում Անձանց խմբի կողմից ստացված Հավելյալ հասույթի մեծությունն ակնհայտ անգամներով մեծ է Մեթոդաբանությամբ սահմանված կարգով հաշվարկված տուգանքի չափից, որպիսի պայմաններում Հանձնաժողովն Անձանց խմբի կողմից ստացված Հավելյալ հասույթի առավել ճշգրի հաշվարկներ իրականացնելու անհրաժեշտություն չի տեսնում:

Հիմք ընդունելով վերոնշյալ հանգամանքները՝ Հանձնաժողովը գտնում է, որ Մեթոդաբանությամբ սահմանված կարգով հաշվարկված տուգանքի չափն ակնհայտ փոքր է պատասխանատվության միջոցի կիրառման նպատակներին հասնելու համար, որպիսի պայմաններում Հանձնաժողովը սույն վարույթի շրջանակում Անձանց խմբի նկատմամբ տուգանքի հաշվարկման համար հիմք է ընդունում Անձանց խմբի՝ 2024 թվականի համախառն հասույթը՝ կիրառելով առավելագույն 10 տոկոս դրույքաչափ:

Այսպես.

S = դրամ:

Մեթոդաբանության 10-րդ կետի համաձայն՝ տուգանքի վերջնական գումարը կլորացվում է դեպի ներքև 1000 դրամի ճշգրտությամբ, հետևաբար, Հանձնաժողովը գտնում է, որ Անձանց խմբի նկատմամբ նշանակվող տուգանքի չափը կկազմի

դրամ:

<u>9. Անձանց խմբին հանձնարարություն տալու հարցի կապակցությամբ.</u>

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը (...) սույն օրենքը խախտելու համար տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց ենթարկում է պատասխանատվության՝ հանձնարարելով իր սահմանած ժամկետում շտկել խախտումը և հետագայում բացառել այն:

Օրենքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված պայմանները, նախատեսված պարտավորությունները և տրված հանձնարարությունները որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ենթակա են անհապաղ,

սակայն ոչ ուշ, քան որոշման մեջ սահմանված ժամկետում կատարման, և որոշման բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

Տվյալ պարագայում Հանձնաժողովն արձանագրում է, որ Անձանց խմբին անհրաժեշտ է տալ հանձնարարություն՝

1. անհապաղ դադարեցնել ՀԴՄ սպասարկման շրջանակում չհիմնավորված բարձր և խտրական գների սահմանումն ու կիրառումը,

2. անհապաղ Հանձնաժողովին ներկայացնել 2024 թվականի նոյեմբերից մինչև 2025 թվականի մայիսը ներառող ժամանակահատվածում Անձանց խմբից ՀԴՄ սպասարկման ծառայություններ ձեռք բերած տնտեսավարող սուբյեկտներից հավաքագրված Հավելյալ հասույթը վերջիններիս վերադարձնելու կամ հաշվանցելու մեխանիզմ (այսուհետ՝ **Մեխանիզմ**)՝ կցելով համապատասխան տնտեսավարող սուբյեկտների ցանկը (այսուհետ՝ **Ցանկ**), որը պետք է ներառի տեղեկատվություն տնտեսավարող սուբյեկտի անվանման, ՀՎՀՀ-ի, մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը ՀԴՄ սպասարկման ծառայության մատուցման նպատակով վերջինիս հետ կնքված պայմանագրով սահմանված և կիրառված գնի, 2024 թվականի հուլիսի 1-ից հետո ՀԴՄ սպասարկման ծառայության մատուցման նպատակով Ընկերությունների շրջանակներում վերակնքված կամ նոր կնքված պայմանագրով սահմանված և կիրառված գնի և դրա կիրառման ամիսների քանակի վերաբերյալ:

3. Մեխանիզմին համապատասխան անհապաղ իրականացնել 2024 թվականի նոյեմբերից մինչև 2025 թվականի մայիսը ներառող ժամանակահատվածում Անձանց խմբից ՀԴՄ սպասարկման ծառայություններ ձեռք բերած տնտեսավարող սուբյեկտներից հավաքագրված Հավելյալ հասույթի վերադարձը կամ հաշվանցը՝ հիմք ընդունել հետևյալ բանաձևը՝

$$Գ = (ՆԳ - ՀԳ * 4\%) * Ժ$$

որտեղ՝

Գ-ն յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտին Անձանց խմբի կողմից վերադարձվող/հաշվանցվող գումարի մեծությունն է,

ՆԳ-ն 2024 թվականի հուլիսի 1-ից հետո ՀԴՄ սպասարկման ծառայության մատուցման նպատակով Ընկերությունների շրջանակներում վերակնքված կամ նոր կնքված պայմանագրով սահմանված և կիրառված գինն է,

ՀԳ-ն մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը ՀԴՄ սպասարկման ծառայության մատուցման նպատակով կնքված պայմանագրով սահմանված և կիրառված գինն է (տնտեսավարող սուբյեկտի հետ Ընկերություններից որևէ մեկի կողմից մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը պայմանագրի բացակայության պայմաններում ՀԳ-ի մեծությունն անհրաժեշտ է ընդունել դրամ),

Ժ-ն տվյալ տնտեսավարող սուբյեկտի հետ վերակնքված կամ նոր կնքված պայմանագրի շրջանակում 2024 թվականի նոյեմբերից մինչև 2025 թվականի մայիսը ներառող ժամանակահատվածում ՀԴՄ սպասարկման ծառայություն մատուցելու ամիսների քանակն է:

Միևնույն ժամանակ Հանձնաժողովը գտնում է, որ նշված հանձնարարության կատարման համար անհրաժեշտ է առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օր:

10. Եզրափակիչ մաս.

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով 67-րդ հոդվածի 2-րդ մասով, 100-րդ հոդվածի 2-րդ մասով, 101-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ, 71-րդ հոդվածներով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

1. 2024 թվականի նոյեմբերից մինչև 2025 թվականի մայիսը ներառող ժամանակահատվածում «ՀԴՄ և ՀԴՄ-ՊՈՍ տերմինալների սպասարկում» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման ճանաչել ՀԴՄ և ՀԴՄ-ՊՈՍ տերմինալների սպասարկման ծառայությունների ամբողջությունը, իսկ աշխարհագրական սահման՝ Հայաստանի Հանրապետության տարածքը:

2. Հաստատված համարել 2024 թվականի նոյեմբերից մինչև 2025 թվականի մայիսը ներառող ժամանակահատվածում «ՀԴՄ և ՀԴՄ-ՊՈՍ տերմինալների սպասարկում» ապրանքային շուկայում ««Տոչ-մաստեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Իննթեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Քյու տերմինալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «ՀԴՄ շտրիխ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Տերմինալ սերվ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Մերի-Քրիստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն և «Սմարթ սոլուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն» անձանց խմբի գերիշխող դիրքի առկայությունը:

3. ««Տոչ-մաստեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Իննթեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Քյու տերմինալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «ՀԴՄ շտրիխ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Տերմինալ սերվ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Մերի-Քրիստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն և «Սմարթ սոլուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն» անձանց խմբի կողմից ՀԴՄ սպասարկման ծառայությունների առնչությամբ չհիմնավորված բարձր, ինչպես նաև խտրական գների սահմանումը և կիրառումն ինչպես առանձին, այնպես էլ համակցության մեջ որակել որպես գերիշխող դիրքի չարաշահում (այսուհետ նաև՝ **Օրենքի խախտում**):

4. Օրենքի խախտման համար ««Տոչ-մաստեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Իննթեք» սահմանափակ

պատասխանատվությամբ ընկերություն, «Քյու տերմինալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «ՀԴՄ շտրիխ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Տերմինալ սերվ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Մերի-Քրիստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն և «Սմարթ սոլուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն» անձանց խմբի նկատմամբ նշանակել 288 828 000 (երկու հարյուր ութսունութ միլիոն ութ հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ չափով տուգանք:

5. ««Տոչ-մաստեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Իննթեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Քյու տերմինալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «ՀԴՄ շտրիխ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Տերմինալ սերվ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Մերի-Քրիստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն և «Սմարթ սոլուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն» անձանց խմբին հանձնարարել՝

5.1. անհապաղ դադարեցնել ««Տոչ-մաստեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Իննթեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Քյու տերմինալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «ՀԴՄ շտրիխ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Տերմինալ սերվ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Մերի-Քրիստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն և «Սմարթ սոլուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն» անձանց խմբի ՀԴՄ սպասարկման շրջանակում չհիմնավորված բարձր և խտրական գների սահմանումն ու կիրառումը:

5.2. անհապաղ Հանձնաժողովին ներկայացնել 2024 թվականի նոյեմբերից մինչև 2025 թվականի մայիսը ներառող ժամանակահատվածում ««Տոչ-մաստեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Իննթեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Քյու տերմինալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «ՀԴՄ շտրիխ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Տերմինալ սերվ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «Մերի-Քրիստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն և «Սմարթ սոլուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն» անձանց խմբից ՀԴՄ սպասարկման ծառայություններ ձեռք բերած տնտեսավարող սուբյեկտներից հավաքագրված հավելյալ հասույթը վերջիններիս վերադարձնելու կամ հաշվանցելու մեխանիզմ՝ կցելով համապատասխան տնտեսավարող սուբյեկտների ցանկը, որը պետք է ներառի տեղեկատվություն տնտեսավարող սուբյեկտի անվանման, ՀՎՀՀ-ի, մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը ՀԴՄ սպասարկման ծառայության մատուցման նպատակով վերջինիս հետ

կնքված պայմանագրով սահմանված և կիրառված գնի, 2024 թվականի հուլիսի 1-ից հետո ՀԴՄ սպասարկման ծառայության մատուցման նպատակով Ընկերությունների շրջանակներում վերակնքված կամ նոր կնքված պայմանագրով սահմանված և կիրառված գնի և դրա կիրառման ամիսների քանակի վերաբերյալ:

5.3. անհապաղ իրականացնել սույն որոշման 5.2 կետով սահմանված մեխանիզմին համապատասխան 2024 թվականի նոյեմբերից մինչև 2025 թվականի մայիսը ներառող ժամանակահատվածում Անձանց խմբից ՀԴՄ սպասարկման ծառայություններ ձեռք բերած տնտեսավարող սուբյեկտներից հավաքագրված Հավելյալ հասույթի վերադարձը կամ հաշվանցը՝ հիմք ընդունել հետևյալ բանաձևը՝

$$Գ = (ՆԳ – ՀԳ * 4\%) * Ժ$$

որտեղ՝

Գ-ն յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտին Անձանց խմբի կողմից վերադարձվող/հաշվանցվող գումարի մեծությունն է,

ՆԳ-ն 2024 թվականի հուլիսի 1-ից հետո ՀԴՄ սպասարկման ծառայության մատուցման նպատակով Ընկերությունների շրջանակներում վերակնքված կամ նոր կնքված պայմանագրով սահմանված և կիրառված գինն է,

ՀԳ-ն մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը ՀԴՄ սպասարկման ծառայության մատուցման նպատակով կնքված պայմանագրով սահմանված և կիրառված գինն է (տնտեսավարող սուբյեկտի հետ Ընկերություններից որևէ մեկի կողմից մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը պայմանագրի բացակայության պայմաններում ՀԳ-ի մեծությունն անհրաժեշտ է ընդունել 2 400 դրամ),

Ժ-ն տվյալ տնտեսավարող սուբյեկտի հետ վերակնքված կամ նոր կնքված պայմանագրի շրջանակում 2024 թվականի նոյեմբերից մինչև 2025 թվականի մայիսը ներառող ժամանակահատվածում ՀԴՄ սպասարկման ծառայություն մատուցելու ամիսների քանակն է:

5.4. Սույն կետի 1-3-րդ ենթակետերով տրված հանձնարարությունները կատարելուց հետո 3-օրյա ժամկետում տեղեկացնել Հանձնաժողովին՝ ներկայացնելով հիմնավորող ապացույցները:

6. Թիվ ՀԳ-05644/24 վարույթը մնացած մասով կարճել:

7. Սույն որոշումը յուրաքանչյուր հասցեատիրոջ նկատմամբ իր մասով ուժի մեջ է մտնում դրա պատճենը համապատասխանաբար «Տոչ-մաստեր», «Իննթեք», «Քյու տերմինալ», «ՀԴՄ շտրիխ», «Տերմինալ սերվ», «Մերի-Քրիստ» և «Սմարթ սոլուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին հանձնելուն հաջորդող օրվանից:

8. Սույն որոշման 4-րդ կետը դրանով նշանակված տուգանքը մինչև սույն որոշման անբողոքարկելի դառնալը չվճարվելու, իսկ սույն որոշման 5-րդ կետի 1-3-րդ ենթակետերով տրված հանձնարարությունները կամովին չկատարվելու դեպքում ենթակա են հարկադիր

կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

9. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

10. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2025 թ. սեպտեմբեր 2
Երևան